Publication is financed by the European Union and the Council of Europe Joint Programme

Հրատարակությունն իրականացվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ ծրագրի աջակցությամբ

This research has been prepared and published with the financial support of the European Union and the Council of Europe. It is published as part of the Joint Programme between the European Union and the Council of Europe “Reinforcing the fight against ill-treatment and impunity”.

Judiciary Division
Legal and Human Rights Capacity Building Department
Directorate of Co-operation
Directorate General of Human Rights and Legal Affairs
Council of Europe
F-67075 Strasbourg Cedex
http://www.coe.int/capacitybuilding

Սույն աշխատությունը պատրաստվել և հրատարակվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի ֆինանսական աջակցությամբ: Այն հրատարակվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի՝ «Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարի ուժեղացման» համատեղ ծրագրի շրջանակներում:

Արդարադատության բարեփոխումների բաժին
Իրավական և մարդու իրավունքների զարգացման ծրագրերի վարչություն
Համագործակցության տնօրինություն
Մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինություն
Եվրոպայի խորհուրդ
F-67075 Strasbourg Cedex
http://www.coe.int/capacitybuilding

THE STATUS AND SPECIFICS OF THE FUNCTIONING OF THE SPECIAL INVESTIGATORY SERVICE OF THE REPUBLIC OF ARMENIA

Legal research

Author: **Vahe YENGIBARYAN**

Executive Director of the Association of Judges of the Republic of Armenia,
Professor of YSU Law Faculty, Senior Scientist of NAS of the RA, PhD in Law,
Associated Professor of Jurisprudence

YEREVAN
ANTARES
2012

ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Գիտագործնական վերլուծություն

Հեղինակ՝ **ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**
ՀՀ դատավորների միության գործադիր տնօրեն,
ԵՊՀ դոցենտ, ՀՀ ԳԱԱ ավագ գիտաշխատող,
իրավագիտության թեկնածու, դոցենտ

ԵՐԵՎԱՆ
ԱՆՏԱՐԵՍ
2012

ՀՏԴ 343(479.25)
ԳՄԴ 67.99(2Հ)8
Ե 472

Տպագրվում է
ՀՀ դատավորների միության խորհրդի որոշմամբ

Ենգիբարյան Վ. Գ.
Ե 472 ՀՀ հատուկ քննչական ծառայության կարգավիճակը, գործունեության առանձնահատկությունները և կատարելագործման հեռանկարները.; Ենգիբարյան Վահե.- Եր. : Անտարես, 2012.-124 էջ:

Սույն հետազոտությունը նվիրված է ՀՀ հատուկ քննչական ծառայության կարգավիճակի և գործառույթների առանձնահատկությունների, ինչպես նաև վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարի ոլորտում վերջինիս դերի բացահայտմանը: Ըստ այդմ, աշխատանքում վերլուծված են ՀՀ հատուկ քննչական ծառայությանը վերաբերող օրենսդրությունը, համակարգը, ինչպես նաև գործառույթները:

Միաժամանակ վերլուծված են այս ոլորտում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, ինչպես նաև քննության եվրոպական չափանիշները և այդ լույսի տակ ներկայացված են ծառայության գործունեության կատարելագործման հեռանկարները:

Աշխատանքի նպատակն է աջակցել իրավակիրառ գործունեություն իրականացնող մարմիններին ու կազմակերպություններին, ինչպես նաև քաղաքացիներին՝ ծանոթանալու ՀՀ հատուկ քննչական ծառայության գործունեությանը և քննության ժամանակակից չափանիշներին:

Սույն վերլուծությունը կարող է օգտակար լինել նաև իրավաբանական բուհերի ուսանողների և իրավունքի բնագավառում գիտական հետազոտություններ կատարող անձանց համար:

ՀՏԴ 343(479.25)
ԳՄԴ 67.99(2Հ)8

ISBN 978-9939-51-427-7

© Council of Europe, 2012
© Ենգիբարյան Վահե, 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ԲԱԺԻՆ 1.
ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 9

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության գործունեությունը կարգավորող օրենսդրության ընդհանուր բնութագիրը. 9

2. ՀՀ հատուկ քննչական ծառայության իրավական կարգավիճակի առանձնահատկությունները 12

3. ՀՀ հատուկ քննչական ծառայության գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի և ներքին նորմատիվ ակտերի ընդհանուր բնութագիրը 18

ԲԱԺԻՆ 2.
ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 35

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության համակարգը 35

2. ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմը 46

3. Դիմում-բողոքների քննարկման կարգը 52

4. Քաղաքացիների ընդունելության կարգը 55

ԲԱԺԻՆ 3.
ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 57

ՀԱՎԵԼՎԱԾ 1. 99

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք 2008-2010թթ. և 2011թ. ընթացքում խոշտանգումների և բռնությունների առթիվ հարուցված և ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննված քրեական գործերի ու դրանց ընթացքի վերաբերյալ 99

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հատուկ քննչական ծառայությունը Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների համակարգում համեմատաբար երիտասարդ կառույց է, որի գործունեությունը նպատակաուղղված է որոշակի տեսակի հանցագործությունների քննությանը:

Հատուկ քննչական ծառայության ստեղծման անհրաժեշտությունը գնահատվել է նաև միջազգային կառույցների կողմից. «Հատուկ քննչական ծառայության ստեղծումը ցույց տվեց, որ Հայաստանի իշխանություններն ընդունել են խնդրի առկայությունը և ցանկանում են լուծել այն .... »[1]:

Անշուշտ, օրենսդրության վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստելու, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության խնդիրներն ու գործունեության ուղղություններն առավել լայն են, քան միայն վատ վերաբերմունքի կապակցությամբ գործերի քննությունը, այնուամենայնիվ, այդօրինակ գործերի քննությունը ծառայության գործունեության հիմնաքարը կարելի է համարել:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ որպես վատ վերաբերմունքի կապակցությամբ գործերի քննության մարմին՝ Հատուկ քննչական ծառայությունը հասարակական և այլ կառույցների շրջանակներում լայնորեն ներկայացման կարիք ունի: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարի համար պատասխանատու ինստիտուտների նկատմամբ հասարակական վստահության բացակայությունը հանգեցնում է դրա վերաբերյալ տեղեկությունների սակավությանը և նվազեցնում համակարգի կանխարգելիչ ազդեցությունը, ուստի բացահայտ անհրաժեշտություն կա համոզելու հասարակությանը, հատկապես նրա այն տարրերին, ում նկատմամբ հնարավոր է վատ վերաբերմունք դրսևորվի կամ ով հայտարարություն է արել կամ ցանկանում է անել պաշտոնատար անձանց կողմից դրսևորված վատ վերաբերմունքի մասին, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության ստեղծումն իսկապես նպաստել է համապատասխան քննությունների անկախությանը և արդյունավետությանը[2]:

---

1 ***Սվանիձե Է.*** Զեկույց Հայաստանի վերաբերյալ: Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարն ու վատ վերաբերմունքի քննության արդյունավետությունը: Խմբագրությամբ՝ ***Վ. Ենգիբարյանի,*** Երևան, 2011, «Անտարես», էջ 85:

2 Տե՛ս, նույն աշխատությունը, էջ 86:

Այսպիսով, ՀՀ հատուկ քննչական ծառայության՝ որպես վատ վերաբերմունքի գործերի քննության մարմնի, դերի ու կարգավիճակի վերլուծությունը նպատակաուղղված է ոչ միայն վերջինիս առաքելության բացահայտմանը, այլ նաև կնպաստի առկա խնդիրների վերհանմանը և դրանց լուծման ուղիների որոնմանը:

Այդ իսկ նպատակով աշխատանքում նախ վերլուծվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությանը վերաբերող օրենսդրությունը, ներկայացվել են ծառայության իրավական կարգավիճակի և գործունեության առանձնահատկությունները, ապա այդ հիմքի վրա ներկայացվել են վատ վերաբերմունքի քննության եվրոպական չափանիշները, որոնց համադրման արդյունքում արվել են որոշակի հետևություններ: Արդյունքում՝ առանձնացվել են ծառայության հետագա կատարելագործման որոշ հիմնախնդիրներ, որոնք պայմանավորված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայով:

Միաժամանակ, նյութի ամբողջականությունն ապահովելու նպատակով ներկայացվել են նաև վիճակագրական տվյալներ քննարկվող բնագավառում ՀՀ հատուկ քննչական ծառայության գործունեության վերաբերյալ:

Կարծում ենք, սույն վերլուծությունը կնպաստի վատ վերաբերմունքի դեմ պայքարի ոլորտում ՀՀ հատուկ քննչական ծառայության դերի ընդգծմանն ու բարձրացմանը, ինչպես նաև բարեփոխումների շրջանակներում ծառայության գործունեության կատարելագործմանը:

Կցանկանայինք հատուկ շնորհակալություն հայտնել ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ, Արդարադատության 2-րդ դասի պետական խորհրդական Անդրանիկ Միրզոյանին, ինչպես նաև աշխատակազմին սույն հետազոտության կատարման ընթացքում ցուցաբերած օժանդակության համար:

ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ՀՀ դատավորների միության գործադիր տնօրեն,
ԵՊՀ դոցենտ, ՀՀ ԳԱԱ ավագ գիտաշխատող,
իրավագիտության թեկնածու, դոցենտ

ԲԱԺԻՆ 1.

ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Ծառայության գործունեությունը կարգավորող օրենսդրության ընդհանուր բնութագիրը

Հատուկ քննչական ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է ***«Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքից, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքից, այլ օրենքներից ու իրավական ակտերից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից:*** Հատուկ քննչական ծառայության վրա տարածվում է նաև ***«Քաղաքացիական ծառայության մասին»*** Հայաստանի Հանրապետության օրենքն այնքանով, որքանով դրա նորմերն իրենց էությամբ կիրառելի են ծառայության այդ տեսակի նկատմամբ և չեն հակասում «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի և պետական հատուկ ծառայության էությանը:

Օրենքով նախատեսված դեպքերում հատուկ քննչական ծառայության պետն ընդունում է ծառայության կազմակերպման ու գործունեության վերաբերյալ ***ներքին կամ անհատական իրավական ակտեր***:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են «Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հատուկ քննչական ծառայության կազմավորման, գործունեության, դրանում ծառայության անցնելու կարգը և պայմանները, պաշտոնների ու դասային աստիճանների դասակարգումը, ծառայողների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները և ծառայության հետ

կապված մյուս հարաբերությունները կարգավորվում են ***«Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքով***:

Համաձայն այդ օրենքի 2-րդ հոդվածի՝***Հատուկ քննչական ծառայությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաեւ ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն:*** Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են թվարկված պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող:

Հատուկ քննչական ծառայությունում ծառայությունը պետական ծառայության հատուկ տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են վերը նշված օրենքով: ***Հատուկ քննչական ծառայությունում ծառայող անձը պետական ծառայող է:***

Հատուկ քննչական ծառայությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված՝ օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվը և արժանապատվությունը հարգելու, մարդասիրության ու հրապարակայնության սկզբունքների պահպանմամբ:

Հատուկ քննչական ծառայության կողմից իրականացվող նախաքննության օրինականության նկատմամբ ***հսկողություն իրականացնում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրա լիազորած դատախազները***: Հատուկ քննչական ծառայությունը ղեկավարում է ծառայության պետը:

Հատուկ քննչական ծառայությունը հրապարակում է տեղեկատվություն իր գործունեության մասին: Հատուկ քննչական ծառայության պետը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողով և Հանրապետության Նախագահին է ներկայացնում գրավոր հաղորդում՝ հատուկ քննչական ծառայության նախորդ տարվա գործունեության մասին:

Հատուկ քննչական ծառայության նստավայրը Երևան քաղաքն է:

«Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է հատուկ քննչական ծառայության կազմավորման, գործունեության, դրանում ծառայության անցնելու կարգը և պայմանները, պաշտոնների ու դասային աստիճանների դասակարգումը, ծառայողների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները և ծառայության հետ կապված մյուս հարաբերությունները:

Նշված օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է հետևյալ հիմնական հասկացությունները.

1) հատուկ քննչական ծառայության ծառայող՝ հատուկ քննչական ծառայության պետը, նրա տեղակալը, հատկապես կարևոր գործերի ավագ քննիչները և հատկապես կարևոր գործերի քննիչները.

2) օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողներ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը, փոխվարչապետը, պատգամավորները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահը և անդամները, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահները և դատավորները, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության նախարարները, նրանց տեղակալները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները,

Հայաստանի Հանրապետության մարզպետները, նրանց տեղակալները, Երեւանի քաղաքապետը, նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահը և խորհրդի անդամները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահը և խորհրդի անդամները, Հայաստանի Հանրապետության կարգավորող հանձնաժողովների ղեկավարները և անդամները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը և անդամները, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահը և տեղակալը.

3) պետական հատուկ ծառայություն իրականացնող անձ՝ դատախազները, պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի քննիչները, ոստիկանության (բացառությամբ ոստիկանության զորքերի), ազգային անվտանգության (բացառությամբ սահմանապահ զորքերի և զինված ստորաբաժանումների), հարկային, մաքսային, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող, քրեակատարողական և փրկարարական մարմինների պաշտոնատար անձինք.

4) ընտրական գործընթացների հետ կապված հանցագործություններ՝ հանցագործություններ, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-րդ, 150-րդ, 154.1-րդ և 154.2-րդ հոդվածներով:

§ 2. ՀՀ հատուկ քննչական ծառայության իրավական կարգավիճակի առանձնահատկությունները

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործերով ***նախաքննություն կատարում են հատուկ քննչական ծառայության***, ոստիկանության, պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի, ազգային անվտանգության, հարկային և մաքսային մարմինների քննիչները:

Քննչական ենթակայությանն առնչվող ՀՀ ՔԴՕ 190-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նախաքննությունը Հայաստանի Հանրապե-

տության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149, 150, 1541, 1542 հոդվածներով կատարում են ***հատուկ քննչական ծառայության քննիչները:***

Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են թվարկված պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող:

Հատուկ քննչական ծառայության քննիչները կարող են ներգրավվել միայն տվյալ ծառայությանը ենթակա քրեական գործերի քննության համար ստեղծված քննչական խմբերում:

Հատուկ քննչական ծառայությունը չի կարող իր վարույթ ընդունել այլ քննիչի ենթակա քրեական գործ, բացառությամբ վերը նշված գործերի:

ՀՀ ՔԴՕ 53-րդ հոդվածը սահմանում է դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում.

«1. Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝

1) հարուցել և իրականացնել քրեական հետապնդում, վերացնել քննիչի կայացրած որոշումը քրեական գործը կարճելու մասին, դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ.

2) ***(2-րդ կետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ-129-Ն)****.*

3) հանցագործության դեպքով հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել նախապատրաստել նյութեր քրեական գործ հարուցելու համար.

4) հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել կատարելու անհետաձգելի քննչական գործողություններ.

5) ***(5-րդ կետն ուժը կորցրել է 28.11.07 ՀՕ-270-Ն)***

6) հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացնել դատավարական ղեկավարում:

2. Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝

1) ստուգել կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարումը հետաքննության մարմնի կողմից.

2) ստուգման համար հետաքննության մարմնից, քննիչից պահանջել նյութեր, փաստաթղթեր, քրեական գործեր և քննության ընթացքի մասին տեղեկություններ, ինչպես նաև ծանոթանալ դրանց կամ դրանք ստուգել նրանց գտնվելու վայրում.

3) ցանկացած քրեական գործ վերցնել հետաքննության մարմնից և հանձնել նախաքննության մարմնին, քրեական գործը սույն օրենսգրքի 190 հոդվածով սահմանված նախաքննության մի մարմնից հանձնել նախաքննության մեկ այլ մարմնի՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով.

4) անհրաժեշտության դեպքում քննչական բաժնի պետին գրավոր ցուցում տալ գործի քննությունը քննչական խմբի կողմից կատարելու վերաբերյալ, ինչպես նաև ցուցում տալ նախաքննություն իրականացնող տարբեր մարմինների քննչական բաժինների պետերին՝ այդ մարմինների քննիչներից ստեղծված քննչական խմբում ներառելու վերաբերյալ:

Հատուկ քննչական ծառայության քննիչները կարող են ներգրավվել միայն տվյալ ծառայությանը ենթակա քրեական գործերի քննության համար ստեղծված քննչական խմբերում.

5) լուծել հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին, ստորադաս դատախազին հայտնված բացարկի, ինչպես նաև վերջիններիս ինքնաբացարկի հարցերը.

6) հետաքննության մարմնին, քննիչին գրավոր ցուցումներ տալ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու վերաբերյալ.

7) լուծել հետաքննության մարմնի կամ նրա աշխատակցի և քննիչի՝ սույն օրենսգրքով նախատեսված առարկությունները՝ դատավարական ղեկավարում իրականացնող ստորադաս դատախազի ցուցումների վերաբերյալ.

8) գործի քննության օրինականությունն ապահովելու նպատակով հսկողություն իրականացնող դատախազին տալ գրավոր ցուցումներ.

9) լուծել հետաքննության մարմնի, քննիչի որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին.

10) հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին հեռացնել տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցելուց, եթե գործի քննության ընթացքում նրանք թույլ են տվել օրենքի խախտում.

11) դիմել համապատասխան մարմիններ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց կալանավորման հարցը լուծելու, քրեական պատասխանատվության ենթարկելու միջնորդություններով, եթե այդ անձինք քրեական գործով պետք է ներգրավվեն որպես մեղադրյալ.

12) վերադարձնել քրեական գործերը քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու համար պարտադիր ցուցումներով.

13) վերացնել հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը քրեական գործով վարույթը կարճելու մասին, ինչպես նաև նրանց այլ որոշումներ՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում.

14) հաստատել մեղադրական եզրակացությունը, իսկ այն անձանց նկատմամբ քրեական գործերով, որոնք քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարել են անմեղսունակ վիճակում կամ անմեղսունակ են դարձել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարելուց հետո՝ եզրափակիչ որոշումը.

15) գործն ուղարկել դատարան՝ ըստ էության քննելու համար:

3. Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազն իրավասու է նաև՝

1) ***(1-ին կետն ուժը կորցրել է 28.11.07 ՀՕ-270-Ն)***

2) իր իրավասության շրջանակներում հետաքննության մարմնից տեղեկություններ ստանալ օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման և հանցագործությունների բացահայտման, անհայտ կորած անձանց և կորած գույքի հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին.

3) պահանջել փաստաթղթեր, նյութեր և գործեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել դեպքերի և դրանց առնչվող անձանց մասին.

4) հետաքննության մարմնին պարտադիր գրավոր ցուցումներ տալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման մասին՝ կապված քրեական գործով վարույթի հետ.

5) դիմել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով.

6) հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց, կարճել քրեական գործով վարույթը կամ դադարեցնել քրեական հետապնդումը.

7) հետաքննության մարմնին՝ հանձնարարել իրականացնել ձերբակալման, բերման ենթարկելու, կալանավորման, այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ որոշումները.

8) միջոցներ ձեռնարկել տուժողի, վկայի և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց պաշտպանության համար.

9) դիմել դատարան՝ սույն օրենսգրքով նախատեսված միջնորդություններով.

10) ազատել առանց օրինական հիմքերի կամ առանց անհրաժեշտության ձերբակալված կամ կալանավորված անձանց.

11) անհրաժեշտությունը վերանալու դեպքում վերացնել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակումները:

4. Քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում դատախազն իրականացնում է նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ:

(53-րդ հոդվածը փոփ., լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն, փոփ., խմբ. 22.02.07 ՀՕ-129-Ն, փոփ., խմբ. 28.11.07 ՀՕ-270-Ն):

Ինչպես արդեն նշել ենք, «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի ուժով ծառայությունն օժտված է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության բարձրագույն պաշտոնատար անձանց, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց, ինչպես նաև ընտրական իրավունքի խախտման մեջ մեղադրվող անձանց նկատմամբ հարուցված քրեական գործերով նախաքննություն իրականացնելու բացառիկ իրավասությամբ: Թեև ծառայությունը պետք է պայքարեր բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից դրսևորած կոռուպցիայի և պաշտոնեական դիրքի չարաշահման հետ կապված այլ հանցագործությունների կատարման դեմ, սակայն նրա իրավասությունը հավասարապես տարածվեց իրավապահ մարմինների կողմից կատարվող բոլոր հանցագործությունների վրա:

Ծառայությունն ինստիտուցիոնալ առումով առանձին պետական մարմին է: Այն ղեկավարվում է ՀՀ գլխավոր դատախազի առաջարկությամբ երկրի Նախագահի կողմից նշանակվող պետի կողմից: Այլ քննչական մարմինների նման, ՀՀ գլխավոր դատախազությունն օրենքով սահմանված կարգով դատավարական ղեկավարման գործառույթ է իրականացնում դրա քննչական գործողությունների

նկատմամբ: Ծառայությունը համագործակցում է իրավապահ մարմինների և, մասնավորապես, ոստիկանության հետ, սակայն այն որևէ անմիջական կազմակերպական կապ չունի նրանց հետ: Այն պատասխանատու չէ նրանց աշխատանքի համար, և՝ հակառակը:

Միաժամանակ, անգամ համապատասխան գործերի ենթակայության ներպետական սկզբունքները պահանջում են, որպեսզի հաղորդման ստուգումն իրականացվի և քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշում կայացվի բացառապես այն մարմնի կողմից, որն իրավասու է այդ կապակցությամբ քննություն իրականացնել: Այլ կերպ ասած, նման բնույթի ցանկացած գործողություն, որը վերաբերում է ոստիկանության կողմից վատ վերաբերմունք դրսևորելուն, պետք է իրականացվի ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից: Հակառակ այս սկզբունքներին և ծառայության բացառիկ իրավասությանը, նման հաղորդումների ստուգումների բացարձակ մեծամասնությունն իրականացվում է ոստիկանության քննիչների կողմից:

Հետևաբար, չկան նման գործերը ծառայությանն ըստ ենթակայության ուղարկելու հստակ չափորոշիչներ: Համապատասխան բողոքները կամ նյութերը ծառայությանն ըստ ենթակայության ուղարկելու վերաբերյալ որոշումների կայացումը կապված է ոստիկանության քննիչների սուբյեկտիվ գնահատման և հայեցողության հետ: Այսպիսով, բարեփոխումը չի վերհանել լուրջ համակարգային թերություններ՝ կապված ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի դրսևորման մասին հայտարարությունների վերաբերյալ կայացվող սկզբնական որոշումների հետ[1]:

---

[1] ***Սվանիձե Է.*** Զեկույց Հայաստանի վերաբերյալ: Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարն ու վատ վերաբերմունքի քննության արդյունավետությունը: Խմբագրությամբ՝ ***Վ. Ենգիբարյանի,*** Երևան, 2011, «Անտարես», էջեր 65-66:

3. ՀՀ հատուկ քննչական ծառայության գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի և ներքին նորմատիվ ակտերի ընդհանուր բնութագիրը

Անդրադառնալով ՀՀ հատուկ քննչական ***ծառայությանն առնչվող ենթաօրենսդրական ակտերին և ներքին նորմատիվ ակտերին***, հարկ ենք համարում ներկայացնել, որ համաձայն ՀՀ Կառավարության 2008 թվականի փետրվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու մասին» N 106-Ն որոշման՝

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Ստեղծել «Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ, որի գործունեության նպատակներն ու խնդիրներն են՝

1) հատուկ քննչական ծառայությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցության ապահովումը.

2) հատուկ քննչական ծառայության և աշխատակազմի ֆինանսաբյուջետային, նյութատեխնիկական ու տնտեսական ապահովման, կազմակերպական, տեխնիկական սպասարկման, ներքին աուդիտի, պետական գույքի կառավարման, անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման պետական գնումների, աշխատակազմում պետական ծառայողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց կադրային քաղաքականության և այլ բնույթի գործառույթների իրականացումը՝ ուղղված հատուկ քննչական ծառայության արդյունավետ գործունեության ու աշխատողների

համար անհրաժեշտ աշխատանքային պայմանների ստեղծմանը.

3) հատուկ քննչական ծառայության պետի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը, ինչպես նաև մրցութային հանձնաժողովների նիստերի կազմակերպատեխնիկական բնույթի նախապատրաստական գործառույթների իրականացումը.

4) օտարերկրյա կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց, միջազգային կազմակերպությունների ու դրանց ներկայացուցիչների հետ հատուկ քննչական ծառայության համագործակցությունը, հատուկ քննչական ծառայության և աշխատակազմի արտաքին կապերին վերաբերող այլ գործընթացների ապահովումը.

5) զանգվածային տեղեկատվության միջոցների և հասարակայնության հետ հատուկ քննչական ծառայության կապի ապահովումը, մամուլի ասուլիսների, հարցազրույցների նախապատրաստումը.

6) հատուկ քննչական ծառայության միասնական արխիվային գործի կազմակերպումը.

7) հատուկ քննչական ծառայության պետի և աշխատակազմի ղեկավարի կողմից ընդունվող իրավական ակտերի հաշվառումը.

8) աշխատակազմում կառավարման ժամանակակից տեխնիկական միջոցների, համակարգչային ծրագրերի, հաղորդակցության էլեկտրոնային միջոցների, տեղային ցանցի, տեղեկատվական միջազգային համակարգերի, հասանելիության միջոցների ներդրման և շահագործման ապահովումը.

9) գործավարության միասնականության, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, էլեկտրոնային գործավարության և դրա գործունեության ընթացքում առաջացած էլեկտրոնային փաստաթղթերի արխիվացման ու պահպանման ապահովումը...

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի՝ 2007 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 1 հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը:

Ստորև ներկայացվում է ՀՀ հատուկ քննչական ծառայության կանոնադրությունը

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության աշխատակազմ» Պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) կազմված է հատուկ քննչական ծառայության պետից (այսուհետ՝ ծառայության պետ), պետի տեղակալից, քննիչներից և աշխատակազմից:
2. Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության աշխատակազմը (այսուհետ՝ աշխատակազմ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և իրավական այլ ակտերով ծառայությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումն ու քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը:
3. Աշխատակազմի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Աշխատակազմը վերակազմակերպվում և իր գործունեությունը դադարեցնում է հիմնադրի որոշմամբ:
4. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:
5. Աշխատակազմի իրավական վիճակն ու գործունեության կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով:
6. Աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, ամրագրված գույք և իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնա-

կան ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
7. Աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառույթների և մատուցած ծառայությունների դիմաց կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:
8. Աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետությունը:
9. Աշխատակազմի լրիվ անվանումն է.
հայերեն՝ «Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ, ռուսերեն՝ “Аппарат специальной следственной службы Республики Армения” государственное управленческое учреждение, անգլերեն՝ “Staff of the special investigation service of the Republic of Armenia” state administrative institution:
10. Աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, քաղաք Երևան, Վազգեն Սարգսյան 5:

II. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Աշխատակազմի հիմնական խնդիրն է՝ ապահովել Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը:
12. Աշխատակազմն իր խնդիրների լուծման համար իր կառուցվածքային ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց միջոցով՝

1) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ծառայությանը վերապահված լիազորությունների իրականացումն ապահովող գործառույթներ.
2) իրականացնում է ծառայության և աշխատակազմի ֆինանսաբյուջետային, նյութատեխնիկական ու տնտեսական ապահովման, կազմակերպական, տեխնիկական սպասարկման, ներքին աուդիտի, պետական գույքի կառավարման, անհրաժեշտ

ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման, պետական գնումների, աշխատակազմում պետական ծառայողների ու տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց կադրային քաղաքականության իրականացման ապահովման և այլ բնույթի գործառույթներ՝ ուղղված ծառայության արդյունավետ գործունեության ու աշխատակիցների համար անհրաժեշտ աշխատանքային պայմանների ստեղծմանը.

3) իրականացնում է ծառայության գործունեության ընթացքում անցկացվող խորհրդակցությունների, քննարկումների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստման, ինչպես նաև՝ մրցութային հանձնաժողովների նիստերի կազմակերպատեխնիկական բնույթի նախապատրաստական գործառույթներ.

4) ապահովում է ծառայության ներկայացուցչական արարողակարգերը.

5) իրականացնում է միջազգային պայմանագրերով նախատեսված համապատասխան աշխատանքներ՝օտարերկրյա քննչական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, միջազգային կազմակերպությունների ու դրանց ներկայացուցիչների հետ ծառայության համագործակցությունը, ինչպես նաև՝ ծառայության և աշխատակազմի արտաքին կապերին վերաբերող գործընթացներն ապահովելու ուղղությամբ.

6) իրականացնում է ծառայության զանգվածային լրատվական միջոցների և հասարակայնության հետ կապերի ապահովման, մամուլի ասուլիսների և հարցազրույցների նախապատրաստման հետ կապված գործառույթներ.

7) իրականացնում է ծառայության միասնական արխիվային գործի կազմակերպմանն ուղղված գործառույթները.

8) ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենքների և իրավական այլ ակտերի շտեմարանի վարումը, պատրաստում համապատասխան իրավական ակտերի ժամանակագրական օրինակներ, հաշվառում ծառայության պետի և աշխատակազմի ղեկավարի կողմից ընդունվող իրավական ակտերը.

9) ապահովում է ծառայությունում և աշխատակազմում կառավարման ժամանակակից տեխնիկական միջոցների, համակարգչային ծրագրերի, հաղորդակցության էլեկտրոնային միջոցների, տեղային ցանցի, տեղեկատվական միջազգային համակարգերի, հասանելիության միջոցների ներդրումը և շահագործումը.

10) ապահովում է գործավարության միասնականությունը, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, էլեկտրոնային գործավարության և նրա գործունեության ընթացքում առաջացած էլեկտրոնային փաստաթղթերի արխիվացումն ու պահպանումը.

11) ապահովում է ծառայության վարչական շենքերի և դրանց հարող տարածքների շահագործումը, բարեկարգումը, ընթացիկ շինարարությունը.

12) իրականացնում է իրավական ակտերով աշխատակազմին վերապահված այլ լիազորություններ:

III. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

13. Աշխատակազմը կառավարում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետը:

14. Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

1) ստեղծում, վերակազմակերպում և դադարեցնում է աշխատակազմի գործունեությունը.

2) հաստատում է աշխատակազմի կանոնադրությունը և դրա մեջ կատարվող փոփոխություններն ու լրացումները.

3) որոշում է աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

4) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված այլ լիազորություններ:

15. Ծառայության պետը.

1) հաստատում և փոփոխում է աշխատակազմի կառուցվածքը և հաստիքացուցակը.

2) հաստատում և փոփոխում է ծառայության աշխատակազմում պետական ծառայության (այսուհետ՝ պետական ծառայություն) պաշտոնների անվանացանկն ու հաստիքների քանակը.

3) հաստատում է պետական ծառայության պաշտոնների անձնագրերը.

4) միջնորդություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին՝աշխատակազմում պետական ծառայողներին (այսուհետ՝ պետական ծառայողներ) բարձրագույն պետական խորհրդականի դասային աստիճան շնորհելու վերաբերյալ.

5) սահմանում է.

ա. ծառայության պետի մամուլի քարտուղարի, օգնականի և կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ուղղություններն ու կարգը.

բ. պետական ծառայության թափուր պաշտոնների զբաղեցման համար մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգը և աշխատակարգը.

գ. պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի կարգը.

դ. պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստերի կազմման և թեստավորման կարգը.

ե. պետական ծառայողների ատեստավորման կարգը.

զ. պետական ծառայողների վերապատրաստման կարգը.

է. աշխատակազմի ստորաբաժանումների գործունեության կարգը.

ը. պետական ծառայողների անձնական գործերի վարման կարգը.

թ. ծառայության աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների պաշտոնային, ինչպես նաև մյուս հաստիքների դրույքաչափերը՝ ՀՀ պետական բյուջեով յուրաքանչյուր տարվա համար նախատեսված աշխատավարձի ֆոնդի սահմաններում.

6) աշխատակազմի խնդիրներին համապատասխան՝ սահմանում է աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունները և գործառույթները.

7) նշանակում և ազատում է աշխատակազմի ղեկավարին, աշխատակազմի ղեկավարի տեղակալին, աշխատակազմի

կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, իր օգնականին և մամուլի քարտուղարին.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ իր կողմից նշանակվող պետական ծառայողների նկատմամբ կիրառում է խրախուսանքի միջոցներ և կարգապահական տույժեր.

9) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում աշխատակազմի ղեկավարի՝ իրավական ակտերի պահանջներին հակասող իրավական ակտերը.

10) վերահսկողություն է իրականացնում աշխատակազմին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

11) լսում է աշխատակազմի գործունեության հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության ստուգման արդյունքները.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորություններ:

16. Աշխատակազմի անմիջական ղեկավարումն իրականացնում է աշխատակազմի ղեկավարը: Աշխատակազմի ղեկավարի լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով:

17. Աշխատակազմի ղեկավարն օրենքով, այլ իրավական ակտերով, ծառայության պետի հրամաններով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության կառավարության ու ծառայության պետի հրամանների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

18. Աշխատակազմի ղեկավարն, օրենքով սահմանված կարգով, գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված գույքային վնասի համար: Աշխատակազմի ղեկավարի

լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

19. Աշխատակազմի ղեկավարը պարտավոր է չկատարել հիմնադրի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամաններն ու հրահանգները:

20. Աշխատակազմի ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է նրա տեղակալներից մեկը՝ ծառայության պետի հրամանով:

21. Աշխատակազմի ղեկավարն աշխատակազմում պետական ծառայող է և ենթակա ու հաշվետու է Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետին:

22. Աշխատակազմի ղեկավարը՝

1) ապահովում է աշխատակազմում պետական ծառայության իրականացումը.

2) առաջարկություն է ներկայացնում ծառայության պետին՝ օրենքով, իրավական այլ ակտերով և կանոնադրությամբ նախատեսված աշխատակազմի գործունեության բնագավառներին, նպատակներին, խնդիրներին համապատասխան՝ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հիմնական ուղղությունների և կարգի վերաբերյալ.

3) ապահովում է աշխատակազմի բնականոն գործունեությունը, պարբերաբար վերլուծում է աշխատակազմի գործունեությունը, իրականացնում ընթացիկ գործունեության վերահսկողությունը.

4) բացահայտում է հրատապ լուծման ենթակա խնդիրները, գնահատում կարծիքները և դրանց հիման վրա մշակում համապատասխան առաջարկություններ, իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ, վերահսկում և ստուգում դրանց կատարումը.

5) առանց լիազորագրի, իր իրավասության սահմաններում, հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության և ծառայության անունից, ներկայացնում է նրանց շահերը այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ փոխհարաբերություններում, կնքում պայմանագրեր և գործարքներ, իր լիազորության

սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր՝ դատարանում գործը վարելու և դատավարական այլ գործողություններ իրականացնելու համար.

6) օրենքով, իրավական այլ ակտերով, հիմնադրի և աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված կարգով, տնօրինում է աշխատակազմին ամրագրված պետականգույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

7) տալիս է Հայաստանի Հանրապետության և ծառայության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով.

8) քննարկում է աշխատակազմի իրավասու պետական ծառայողների՝ իրենց վստահված նյութական միջոցների պահպանման և օգտագործման համապատասխանության ստուգման արդյունքները.

9) պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից պահանջում և ստանում է իր իրավասությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ ու նյութեր.

10) տնօրինում է աշխատակազմի գործունեության արդյունքում ձևավորված տեղեկատվությունը, օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված կարգով ապահովում է տեղեկատվության տրամադրումն ըստ նշանակության.

11) հսկողություն է իրականացնում ծառայության արխիվում՝ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջների կատարման նկատմամբ.

12) օրենքով սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և ազատում պետական ծառայողներին և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի միջոցներ և կարգապահական տույժեր՝ բացառությամբ սույն կանոնադրության 15-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված պաշտոնների.

13) շնորհում է պետական ծառայության դասային աստիճաններ՝ բացառությամբ բարձրագույն պետական խորհրդականի դասային աստիճանների.

14) ծառայության պետի հաստատմանն է ներկայացնում պետական ծառայության պաշտոնների անձնագրերի նկարագրերը, հիշյալ պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը.
15) որոշում է կայացնում պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին, հայտարարում է մրցույթները.
16) տալիս է տեղեկանքներ պետական ծառայության թափուր պաշտոնների մասին, պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց՝ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանելու մասին.
17) առաջարկներ է ներկայացնում ծառայության պետին՝ աշխատակազմի համապատասխան աշխատակիցներին խրախուսելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.
18) սահմանված կարգով կազմակերպում է աշխատակազմի աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրացման աշխատանքները.
19) ապահովում է աշխատակազմի կապը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ու այլ մարմինների հետ.
20) հանդիսանում է ծառայության ֆինանսական միջոցների կարգադրիչը՝ գլխավոր ֆինանսիստը և իրականացնում օրենսդրությամբ նրան վերապահված լիազորությունները.
21) կարգավորում է աշխատակազմի գործունեության ընթացքում գանձապետարանի հետ առաջացող հարաբերությունները և խնդիրները.
22) ապահովում է բյուջետային տարվա ֆինանսական հատկացումների նպատակային օգտագործման, հաշվապահական հաշվառման, վճարման փաստաթղթերի կազմման, բանկային գործարքների և ֆինանսական հաշվետվությունների կազմման հետ կապված աշխատանքները,
23) միջոցներ է ձեռնարկում աշխատակազմին հատկացված դրամական միջոցների արդյունավետ օգտագործման ուղղությամբ.

24) ապահովում է ծառայության համակարգի միջնաժամկետ ծախսային ծրագրի և առաջիկա տարվա բյուջետային հայտի մշակման աշխատանքները.
25) իրականացնում է բյուջեի կատարողականի վերլուծություն, ֆինանսական հաշվետվությունների և վերլուծությունների հիման վրա պատրաստում է ֆինանսավորման հայտերը.
26) ապահովում է աշխատակազմին հատկացված բյուջետային միջոցների համամասնական բաշխման նախագծի կազմումը.
27) ապահովում է ֆինանսաբյուջետային կարգապահությունը, վերահսկում է աշխատակազմի հաշվապահական հաշվառումը,
28) հաստատում է աշխատակազմի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները.
29) ապահովում և վերահսկում է դրամական միջոցների ու նյութական արժեքների՝ սահմանված կարգով հաշվառումը և դրանց հետագա շարժին առնչվող գործառնությունների գույքագրումը.
30) ծառայության պետի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի պահպանման ծախսերի նախահաշիվը.
31) ապահովում է ծառայության պետին ներկայացվող, ինչպես նաև նրա կողմից ստորագրման ենթակա փաստաթղթերի մասնագիտական ֆինանսատնտեսական փորձաքննությունը.
32) կազմակերպում է ծառայության պետի բյուջետային ֆինանսավորման հայտերի, համակարգի պահպանման ծախսերի նախահաշվի նախապատրաստման աշխատանքները.
33) ապահովում է աշխատակազմում ֆինանսական հոսքերի կառավարման ու ներքին աուդիտի համակարգի առկայությունը.
34) ապահովում է աշխատակազմում և համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպություններում ֆինանսական հարցերի վերաբերյալ հաստատված ակտերի պահանջների կատարման գնահատումը և հաշվապահական հաշվառման գրանցումների մեջ անհամապատասխանությունների բացահայտումն ու դրանց ճշգրտումը.
35) գնումների մասին օրենսդրությանը համապատասխան, ապահովում է գնումների համակարգի առկայությունը.

36) ընդունում և հաստատում է բյուջետային ծախսերի գործառնական ու տնտեսագիտական դասակարգմամբ նախորդ ամսվա ընթացքում աշխատակազմի եկամուտների և ծախսերի վերաբերյալ ամսական հաշվետվությունները.
37) ընդունում և հաստատում է ընթացիկ ֆինանսական տարվա մնացած ժամանակահատվածի համար սպասվող եկամուտների և ծախսերի կանխատեսումները.
38) սահմանված կարգով վերլուծում և համեմատում է աշխատակազմի ստորաբաժանումներից, ընթացիկ հաշվետվությունների հետ ստացված անհրաժեշտ հաշվետվությունները, ամփոփում դրանք ու ներկայացնում ծառայության պետի հաստատմանը.
39) ապահովում է ծառայության կողմից իրականացվող միջոցառումների և ծրագրերի կատարման մասին հաշվետվությունների ամփոփումը՝ ծրագրից շեղումների պատճառների բացահայտմամբ.
40) ապահովում է ծառայության կողմից առգրավված նյութական արժեքների և դրամական միջոցների հաշվառումը.
41) օրենքով սահմանված կարգով տնօրինում է ծառայության դեպոզիտ հաշիվներում առկա գումարները.
42) ծառայությունում կազմակերպում է տարեկան գույքագրում, հսկում գույքի նպատակային օգտագործումը, օգտագործման ժամկետները, ինչպես նաև կատարում մնացորդ գույքի և այլ արժեքների հատկացման վերաբաշխումը, դուրսգրումը,
43) ծառայության աշխատակիցների անվտանգության ապահովման նպատակով կազմակերպում է անցագրային ռեժիմը, վարչական շենքերի և շինությունների շահագործումն ու պահպանությունը.
44) կազմակերպում է ծառայության համակարգչային, հաղորդակցման այլ միջոցների միասնական ցանցի ստեղծման, ավտոտրանսպորտային տնտեսության արդյունավետ շահագործումն ու անխափան աշխատանքը,
45) պատասխանատու է ծառայության և աշխատակազմի ֆինանսական պարտավորությունները և հիմնական միջոցներն

արդյունավետ կառավարելու (ներառյալ՝ հիմնական միջոցների հաշվառումը, պահպանությունը և շահագործումը), ինչպես նաև նյութական և ֆինանսական միջոցների վատնումն ու չնախատեսված ծախսերը կանխելու, արդյունավետ օգտագործելու համար.

46) պատասխանատու է համակարգի պետական հիմնարկներին՝ բյուջետային դասակարգմանը համապատասխան, բյուջեով նախատեսված հատկացումներն ապահովելու և դրանց կողմից միջոցների նպատակային ծախսումները վերահսկելու համար.

47) պատասխանատու է աշխատակազմի կողմից օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական միջոցների հավաքումն ապահովելու համար.

48) ծառայությունում ապահովում է գործավարության միասնականությունը.

49) իրականացնում է աշխատակազմի գործունեությանն առնչվող օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորություններ:

23. Աշխատակազմի ղեկավարն ունի տեղակալ, որը գործում է նրա անմիջական ենթակայությամբ և իրականացնում է իրեն հանձնարարված ոլորտներում աշխատանքների կազմակերպումը և համակարգումը:

24. Աշխատակազմի ղեկավարի տեղակալը պետական ծառայող է, որին պաշտոնի է նշանակում ծառայության պետը:

25. Աշխատակազմի ղեկավարի տեղակալի լիազորությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ, պաշտոնի անձնագրով և իրավական այլ ակտերով:

26. Աշխատակազմի ղեկավարի տեղակալն աշխատակազմի ղեկավարի բացակայության դեպքում կատարում է վերջինիս պարտականությունները:

27. Աշխատակազմի ղեկավարի և նրա տեղակալի միաժամանակյա բացակայության դեպքում աշխատակազմի ղեկավարի պարտականությունները, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետի հրամանով, կարող է կատարել նաև այլ պետական ծառայող:

IV. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

28. Ծառայության աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններին է ներկայացնում ֆինանսական, հարկային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:
29. Ծառայության աշխատակազմիգործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

V. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

30. Աշխատակազմի պետական ծառայողները և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցներն իրենց գործառույթներն իրականացնում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի և իրավական այլ ակտերի համաձայն:
31. Աշխատակազմում պետական ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
32. Աշխատակազմում պետական ծառայողներ չեն համարվում ծառայության պետի օգնականն ու մամուլի քարտուղարը, տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցները, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով այլ խնդիրներ ու գործառույթներ իրականացնող անձինք:
33. Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետի օգնականն ու մամուլի քարտուղարը, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք. համարվում են աշխատակազմի աշխատողներ: Նրանց հաստիքները ներառվում են աշխատակազմի հաստիքացուցակում, իսկ այդ հաստիքների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով:

34. Աշխատակազմում պետական ծառայող չհանդիսացող աշխատակիցներին աշխատանքի է ընդունում ու աշխատանքից ազատում աշխատակազմի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով:
35. Աշխատակազմի պետական ծառայողները և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցները հաշվետու են ըստ վերադասության և գործում են յուրաքանչյուրն իր պաշտոնի անձնագրին կամ լիազորություններին համապատասխան:

VI. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

36. Աշխատակազմի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անունից աշխատակազմի կնքած գործարքներով ձեռք բերված և ծառայության աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում:
37. Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերցնելու ծառայության աշխատակազմի գույքը:
38. Աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով ու իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան, օգտագործելու, տնօրինելու և տիրապետելու իր գույքը:
39. Աշխատակազմի պահպանման ծախսերն ամբողջությամբ ֆինանսավորվում են պետական բյուջեից: Աշխատակազմը կարող է նաև ֆինանսավորվել օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներից:
40. Աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն ու իր կարիքների համար գնումները կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գանձապետական համակարգի միջոցով:

41. Ծառայության պահպանման ծախսերի ֆինանսավորումը և բյուջետային գործընթացն իրականացնում է աշխատակազմը՝ կենտրոնացված համակարգով:
42. Աշխատակազմի կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

VII. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

43. Աշխատակազմի վերակազմակերպումը և գործունեության դադարեցումն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 2.

ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. ՀՀ Հատուկ քննչական ծառայության համակարգը

Հատուկ քննչական ծառայությունը գործում է «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված գործառույթների շրջանակներում:

Հատուկ քննչական ծառայությունն ինքնուրույն պետական մարմին է և լիազորություններն իրականացնելիս անկախ է: ՀՔԾ-ի գործունեության իրավական երաշխիքները սահմանված են «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով, համաձայն որի՝ ծառայողի պարտականությունների կատարմանը խոչընդոտներ ստեղծելը, օրինական պահանջները չկատարելը, նրա և նրա ընտանիքի անդամների կյանքի, առողջության կամ գույքի նկատմամբ ոտնձգություն գործադրելը կամ դրա սպառնալիքն առաջացնում են օրենքով նախատեսված պատասխանատվություն: Հատուկ քննչական ծառայության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցում և քրեական գործի ենթակայությունը որոշում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

Ծառայությունը գտնվում է Երևանում և իր հայտնի առանձնահատկության պատճառով գործում է առանց տարածքային ստորաբաժանումների: Նրա աշխատակազմը ներառում է 25 պաշտոն, որոնք բավարար են միայն նրա իրավասությանը վերապահված հարուցված քրեական գործերով նախաքննության իրականացման համար[1]:

Իր սահմանափակ ռեսուրսների պատճառով ծառայությունը կարող է ներգրավվել այն դատավարությունների առաջին փուլերին,

[1] Անհրաժեշտ է հիշել, որ ծառայության իրավասությունը տարածվում է պաշտոնատար անձանց կողմից դրսևորված վատ վերաբերմունքի վերաբերյալ գործերից բացի նաև այլ գործերի վրա:

որոնք վերաբերում են կարևոր բողոքներին կամ նյութերին և որոնցով քրեական գործեր հարուցելու հստակ հեռանկարներ կան: Իհարկե, չի կարելի ակնկալել, որ նման առանձնահատուկ մարմինը կարող է ներգրավված լինել նման քննությունների և որոշումների համար անհրաժեշտ բոլոր փուլերում: Ուստի, գործնականում, պաշտոնապես անկախ Հատուկ քննչական ծառայությունը ներգրավված է լինում միայն քրեական գործերի քննությանը[1]:

ՀՀ հատուկ քննչական ծառայության կառուցվածքը



[1] ***Սվանիձե Է.*** Զեկույց Հայաստանի վերաբերյալ: Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարն ու վատ վերաբերմունքի քննության արդյունավետությունը: Խմբագրությամբ՝ ***Վ. Ենգիբարյանի,*** Երևան, 2011, «Անտարես», էջեր 65-66:

«Հատուկ քննչական ծառայության մասին» **ՀՀ օրենքի** 5-րդ հոդվածի համաձայն՝ Հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոնների համակարգը:

Հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) հատուկ քննչական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ՝
   - հատուկ քննչական ծառայության պետ,
   - հատուկ քննչական ծառայության պետի տեղակալ.
2) հատուկ քննչական ծառայության գլխավոր խմբի պաշտոններ՝
   - հատկապես կարևոր գործերի ավագ քննիչներ.
3) հատուկ քննչական ծառայության առաջատար խմբի պաշտոններ՝
   - հատկապես կարևոր գործերի քննիչներ:

Հատուկ քննչական ծառայության պետը՝

- կազմակերպում, վերահսկում և ղեկավարում է ծառայության ծառայողների գործունեությունը.
- կատարում է պարտականությունների բաշխում ծառայության աշխատակիցների միջև.
- ընդունում է ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված որոշումներ,
- տալիս է հրամաններ, հանձնարարականներ և ցուցումներ.
- նշանակում է ծառայողական քննություններ կամ դադարեցնում դրանք, փոխում է ծառայողական քննություն կատարողին.
- հաստատում է ծառայության կառուցվածքը, հաստիքացուցակը և կանոնադրությունը.
- միջնորդություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ հատուկ քննչական ծառայության ծառայողներին բարձրագույն դասային աստիճան շնորհելու վերաբերյալ.
- կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն, քննում է ծառայության ծառայողների դեմ բերված բողոքները և դիմումները.
- կազմակերպում է ծառայության նյութատեխնիկական ապահովումը.
- օրենսդրությամբ վերապահված լիազորությունների սահմաններում տնօրինում է ծառայության դեպոզիտ հաշվի միջոցները.
- կազմակերպում է ծառայության ծառայողների մասնագիտական և հատուկ ուսուցումը.

- իր իրավասության սահմաններում խրախուսում կամ կարգապահական տույժի է ենթարկում ծառայության ծառայողներին.
- առաջարկություններ է ներկայացնում ծառայության կազմավորման ու գործունեության մասին օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.
- ապահովում է ծառայության համագործակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ.
- հրապարակում է տեղեկատվություն իր գործունեության մասին, յուրաքանչյուր տարի ՀՀ Նախագահին և Ազգային ժողովին ներկայացնում է գրավոր հաղորդում ծառայության նախորդ տարվա գործունեության մասին.
- իրականացնում է օրենքներով ու իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ.
- հատուկ քննչական ծառայության պետը պատասխանատվություն է կրում ծառայության գործունեության համար:

Հատուկ քննչական ծառայության պետի տեղակալը՝

- փոխարինում է ծառայության պետին՝ վերջինիս բացակայության ժամանակահատվածում.
- մասնակցում է առավել բարդ քննչական գործողությունների կատարմանը, քննիչներին ցույց է տալիս անհրաժեշտ օգնություն դրանց կատարման գործում.
- ամփոփում և վերլուծում է ծառայության աշխատանքը՝ նրա գործունեության առանձին ուղղություններով.
- կազմում է ծառայության վիճակագրական հաշվետվությունները, նախապատրաստում է նյութեր՝ օպերատիվ խորհրդակցություններում քննարկելու համար.
- իրականացնում է քաղաքացիների ընդունելություն.
- պետի հանձնարարությամբ կազմակերպում, վերահսկում և ղեկավարում է ծառայության ծառայողների գործունեությունը:

Հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի ավագ քննիչները և հատկապես կարևոր գործերի քննիչները՝

- քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնարարված քրեական գործերով կատարում են նախաքննություն, կրում պատասխանատվություն՝ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, քննչական և այլ դատավարական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելու համար.
- ծառայության պետի հանձնարարությամբ գլխավորում են քննչական խումբը, կազմակերպում վերջինիս աշխատանքը և ղեկավարում նրա կազմի մեջ մտնող մյուս քննիչների գործողությունները, մասնակցում են մյուս քննիչների կողմից կատարվող քննչական գործողություններին, խմբի անդամներին կատարման համար պարտադիր ցուցումներ տալիս քննչական գործողությունների և դրանց կատարման կարգի մասին, անձամբ կատարում քննչական գործողություններ և կայացնում որոշումներ, պատասխանատվություն կրում խմբի աշխատանքի արդյունավետության համար.
- իրականացնում են քաղաքացիների ընդունելություն.
- իրենց իրավասության սահմաններում իրականացնում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով քննիչին վերապահված լիազորություններ.
- կատարում են ծառայության խնդիրներին և գործառույթներին առնչվող՝ ծառայության պետի և տեղակալի հանձնարարություններ:

***«Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ* օրենքի** 6-րդ հոդվածը սահմանում է ծառայության անցնելու համար ներկայացվող հիմնական պահանջները

1. Հատուկ քննչական ծառայությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, Հայաստանի Հանրապետությունում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավոր-

ման աստիճան կամ նմանատիպ աստիճան օտարերկրյա պետությունում ձեռք բերած, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց կամ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի) կամ պահեստազորի սպա է.

2) տիրապետում է գրական հայերենին.

3) բավարարում է սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված պահանջները:

2. Հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Հատուկ քննչական ծառայության պաշտոնի կարող են նշանակվել նաև սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներին չհամապատասխանող, սակայն դիմելու պահին «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-ե» կետերով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ 13-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 27 տարին լրանալը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած և պահեստազորում հաշվառված անձինք:

4. Հատուկ քննչական ծառայությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

4) գտնվում է քրեական հետապնդման մեջ.

5) չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:

5. Հատուկ քննչական ծառայությունում պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիք է համարվում 60 տարեկանը: Սահմանային տարիքը լրանալուց հետո հատուկ քննչական ծառայության պետը կարող է մինչև 5 տարի ժամկետով երկարաձգել ծառայության ժամկետը: Հատուկ քննչական ծառայության պետի և պետի տեղակալի պաշտոնի սահմանային տարիքը համարվում է 65 տարեկանը:

Պետք է նշել, որ Հատուկ քննչական ծառայությունում առաջին անգամ պաշտոնի նշանակվող անձինք հատուկ քննչական ծառայության պետի սահմանած կարգով Հայաստանի Հանրապետության դրոշի առջև տալիս են հետևյալ բովանդակությամբ երդում. «Ես (անուն, հայրանուն, ազգանուն), հատուկ քննչական ծառայությունում պաշտոն ստանձնելով, երդվում եմ՝ հավատարմորեն ծառայել Հայաստանի Հանրապետության ժողովրդին, խստագույնս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, հասարակական կարգը, անվտանգությունն ու սահմանադրական կարգը, անվերապահորեն և բարեխղճորեն կատարել իմ պարտականությունները»:

2. Հատուկ քննչական ծառայության ծառայողը երդում տալիս է մեկ անգամ՝ անհատական կարգով, երդման տեքստն ընթերցելու միջոցով:

3. Հատուկ քննչական ծառայության ծառայողը ստորագրում է իր ընթերցած երդման տեքստը, որը պահպանվում է նրա անձնական գործում:

***«Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ* օրենքի** 18 և 19-րդ հոդվածները սահմանում են Հատուկ քննչական ծառայության ծառայողի իրավունքներն ու պարտականությունները:

1. Հատուկ քննչական ծառայության ծառայողն իրավունք ունի՝

1) ծանոթանալու զբաղեցրած պաշտոնում իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին.

2) ծանոթանալու անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատագրերին և այլ փաստաթղթերին, ներկայացնելու բացատրություններ.

3) ստանալու ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր.

4) իր իրավասության սահմաններում ընդունելու որոշումներ.

5) ստանալու վարձատրություն և օրենքով սահմանված այլ վճարներ.

6) ունենալու սոցիալական պաշտպանություն և ապահովություն.

7) օգտվելու իրավական պաշտպանությունից.

8) դասային աստիճանի սահմանված կարգով բարձրացման.

9) բողոքարկելու ատեստավորման և ծառայողական քննության արդյունքները.

10) ներկայացնելու առաջարկություններ ծառայության կազմակերպման ու կատարելագործման հարցերի վերաբերյալ:

2. Հատուկ քննչական ծառայության ծառայողը կարող է ունենալ սույն օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

1. Հատուկ քննչական ծառայության ծառայողի պարտականություններն են՝

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի պահանջները կատարելը.

2) մասնագիտական և գործնական անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը.

3) աշխատանքային կարգապահությունը պահպանելը.

4) հաշվետվություն ներկայացնելը.

5) սահմանված կարգով տրված հանձնարարականները, հրամանները, ցուցումները և ընդունված որոշումները կատարելը.

6) սահմանված կարգով և ժամկետներում առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ քննության առնելը և դրանց ընթացք տալը.

7) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

8) օրենսդրությամբ սահմանված կարգով եկամուտների հայտարարագիր ներկայացնելը:

2. Ծառայողի համար սույն օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով կարող են սահմանվել նաև այլ պարտականություններ:

Հատուկ քննչական ծառայության ծառայողի ատեստավորման կարգն ու պայմանները

1. «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանվում է, որ հատուկ քննչական ծառայության յուրաքանչյուր ծառայող 3 տարին մեկ ենթակա է պարտադիր ատեստավորման:

2. Ատեստավորումն անցկացվում է հատուկ քննչական ծառայության ծառայողի անմիջական մասնակցությամբ:

3. Ատեստավորման ենթակա չեն՝

1) հատուկ քննչական ծառայության պետը, նրա տեղակալը.

2) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող հատուկ քննչական ծառայության ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել.

3) հղի կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հատուկ քննչական ծառայության ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել.

4) սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ տվյալ տարում ծառայությունից ազատվողները:

4. Հղիության կամ երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հատուկ քննչական ծառայության ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար:

5. Հատուկ քննչական ծառայության՝ ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ծառայողները ենթակա են ատեստավորման ծառայության ներկայանալուց հետո՝ երկամսյա ժամկետում:

6. Հատուկ քննչական ծառայության՝ ատեստավորման ենթակա ծառայողները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին:
7. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ծառայողի անմիջական ղեկավարը ներկայացնում է հատուկ քննչական ծառայության ծառայողի ծառայողական բնութագիրը:
8. Ծառայողական բնութագիրը պետք է պարունակի տվյալներ հատուկ քննչական ծառայության ծառայողի, նրա գործնական, անձնական հատկանիշների մասին, ինչպես նաև ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատագիրը, որը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում հատուկ քննչական ծառայության ծառայողի կողմից իր կատարած աշխատանքների մասին տարին մեկ անմիջական ղեկավարին ներկայացրած հաշվետվության հիման վրա վերջինիս կազմած եզրակացության վրա:
9. Ծառայողն ատեստավորումից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին:
10. Սույն հոդվածով սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել հատուկ քննչական ծառայության ծառայողի ատեստավորման արդյունքների վրա:
11. Ատեստավորման հանձնաժողովի գործառույթներն իրականացնում է սույն օրենքով նախատեսված մրցութային հանձնաժողովը:
12. Ատեստավորումից հետո ատեստավորման հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.
2) կարող է զբաղեցնել ավելի բարձր պաշտոն.
3) կարող է ներկայացվել խրախուսման.
4) ատեստավորումը հետաձգել մինչև մեկ տարի ժամկետով և առաջարկել հատուկ քննչական ծառայության ծառայողին գործուղելու վերապատրաստման.
5) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

13. Ատեստավորման հանձնաժողովը ատեստավորման օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, ատեստավորման արդյունքները և կայացրած որոշումները ներկայացնում է հատուկ քննչական ծառա-

յության պետին, որը տասնօրյա ժամկետում ընդունում է համապատասխան որոշում:
14. Ծառայողն իրավունք ունի ծանոթանալու ատեստավորման արդյունքներին ու հանձնաժողովի կայացրած որոշմանը և դրանք 7 օրվա ընթացքում բողոքարկելու հատուկ քննչական ծառայության պետին:
15. Ծառայողի ժամանակավոր անաշխատունակության կամ արձակուրդում գտնվելու ժամանակ ատեստավորման արդյունքների հիման վրա համապատասխան որոշումն ընդունվում է նրա՝ ծառայության ներկայանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում:
16. Ատեստավորման արդյունքները պահվում են հատուկ քննչական ծառայության ծառայողի անձնական գործում:

Հատուկ քննչական ծառայության ծառայողի վերապատրաստումը և հատուկ ուսուցումը («Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդված)

1. Հատուկ քննչական ծառայության գլխավոր և առաջատար խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողները առնվազն 3 տարին մեկ ենթակա են պարտադիր վերապատրաստման:
2. Պարտադիր վերապատրաստման ժամկետը կարող է տևել մինչև 1 ամիս:
3. Ատեստավորումը հետաձգելու և հատուկ քննչական ծառայության ծառայողին վերապատրաստման գործուղելու դեպքում ծառայողն անցնում է եռամսյա վերապատրաստում:
4. Հատուկ ուսուցում անցնելուց հետո հատուկ քննչական ծառայության ծառայողներն իրավունք են ստանում սահմանված կարգով կրելու, պահելու և գործադրելու հրազեն ու օրենքով նախատեսված հատուկ միջոցներ:
5. Վերապատրաստում և հատուկ ուսուցում անցնելու կարգն ու պայմանները սահմանում է հատուկ քննչական ծառայության պետը:

2. ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմը

Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և իրավական այլ ակտերով Հատուկ քննչական ծառայությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումն ու քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը:

Հատուկ քննչական ծառայության աշխատակազմի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ ՀՔԾ պետի 2008 թվականի մարտի 26-ի թիվ 05-Լ հրամանով:

Աշխատակազմի հիմնական խնդիրն է՝ ապահովել Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը:

Իր խնդիրների լուծման համար՝

- ապահովում է ծառայության և աշխատակազմի ֆինանսաբյուջետային, նյութատեխնիկական ու տնտեսական ապահովման, կազմակերպական, տեխնիկական սպասարկման, ներքին աուդիտի, պետական գույքի կառավարման, անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման, պետական գնումների, աշխատակազմում պետական ծառայողների ու տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց կադրային քաղաքականության իրականացումը,
- իրականացնում է ծառայության գործունեության ընթացքում անցկացվող խորհրդակցությունների, քննարկումների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստման, ինչպես նաև՝ մրցութային հանձնաժողովների նիստերի կազմակերպատեխնիկական բնույթի նախապատրաստական գործառույթներ.

- իրականացնում է միջազգային պայմանագրերով նախատեսված համապատասխան աշխատանքներ՝օտարերկրյա քննչական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, միջազգային կազմակերպությունների ու դրանց ներկայացուցիչների հետ ծառայության համագործակցությունը, ինչպես նաև՝ ծառայության և աշխատակազմի արտաքին կապերին վերաբերող գործընթացներն ապահովելու ուղղությամբ.
- ապահովում է ծառայության՝ զանգվածային լրատվական միջոցների և հասարակայնության հետ կապերը, կազմակերպում մամուլի ասուլիսներ և հարցազրույցներ.
- ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենքների և իրավական այլ ակտերի շտեմարանի վարումը, պատրաստում համապատասխան իրավական ակտերի ժամանակագրական օրինակներ, հաշվառում ծառայության պետի և աշխատակազմի ղեկավարի կողմից ընդունվող իրավական ակտերը.
- ապահովում է գործավարության միասնականությունը, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, էլեկտրոնային գործավարության և նրա գործունեության ընթացքում առաջացած էլեկտրոնային փաստաթղթերի արխիվացումն ու պահպանումը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Աշխատակազմը կառավարում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

- ստեղծում, վերակազմակերպում և դադարեցնում է աշխատակազմի գործունեությունը.
- հաստատում է աշխատակազմի կանոնադրությունը և դրա մեջ կատարվող փոփոխություններն ու լրացումները.
- իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված այլ լիազորություններ:

Ծառայության պետը.

- հաստատում և փոփոխում է աշխատակազմի կառուցվածքն ու հաստիքացուցակը.
- հաստատում և փոփոխում է ծառայության աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անվանացանկն ու հաստիքների քանակը.
- հաստատում է պետական ծառայության պաշտոնների անձնագրերը.
- միջնորդություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին՝աշխատակազմում պետական ծառայողներին բարձրագույն խորհրդականի դասային աստիճաններ շնորհելու վերաբերյալ.

սահմանում է՝

- պետական ծառայության թափուր պաշտոնների զբաղեցման համար մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգը և աշխատակարգը.
- պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի կարգը.
- պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստերի կազմման և թեստավորման կարգը.
- պետական ծառայողների ատեստավորման կարգը.
- պետական ծառայողների վերապատրաստման կարգը.
- աշխատակազմի ստորաբաժանումների գործունեության կարգը.
- պետական ծառայողների անձնական գործերի վարման կարգը.
- ծառայության աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների պաշտոնային, ինչպես նաև մյուս հաստիքների դրույքաչափերը՝ ՀՀ պետական բյուջեով յուրաքանչյուր տարվա համար նախատեսված աշխատավարձի ֆոնդի սահմաններում.
- աշխատակազմի խնդիրներին համապատասխան՝ աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունները և գործառույթները.
- կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում աշխատակազմի ղեկավարի՝ իրավական ակտերի պահանջներին հակասող իրավական ակտերը.

- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորություններ.
- նշանակում և ազատում է աշխատակազմի ղեկավարին, աշխատակազմի ղեկավարի տեղակալին, աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին:

Աշխատակազմի անմիջական ղեկավարումն իրականացնում է աշխատակազմի ղեկավարը, ում նշանակում և ազատում է ՀՀ հատուկ քննչական ծառայության պետը: Աշխատակազմի ղեկավարի լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով:

Աշխատակազմի ղեկավարն իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության կառավարության ու ծառայության պետի հրամանների, կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Աշխատակազմի ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է նրա տեղակալներից մեկը՝ ծառայության պետի հրամանով: Աշխատակազմի ղեկավարը աշխատակազմում պետական ծառայող է և ենթակա ու հաշվետու է Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետին:

Աշխատակազմի ղեկավարը՝

- ապահովում է աշխատակազմում պետական ծառայության իրականացումը.
- առաջարկություն է ներկայացնում ծառայության պետին՝օրենքով, իրավական այլ ակտերով և կանոնադրությամբ նախատեսված աշխատակազմի գործունեության բնագավառներին, նպատակներին, խնդիրներին համապատասխան՝ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հիմնական ուղղությունների և կարգի վերաբերյալ.

- ապահովում է աշխատակազմի բնականոն գործունեությունը, պարբերաբար վերլուծում է աշխատակազմի գործունեությունը, իրականացնում ընթացիկ գործունեության վերահսկողությունը.
- բացահայտում է հրատապ լուծման ենթակա խնդիրները, գնահատում կարծիքները և դրանց հիման վրա մշակում համապատասխան առաջարկություններ, իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ, վերահսկում և ստուգում դրանց կատարումը.
- առանց լիազորագրի, իր իրավասության սահմաններում, հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության և ծառայության անունից, ներկայացնում է նրանց շահերը այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ փոխհարաբերություններում, կնքում պայմանագրեր և գործարքներ, իր լիազորության սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր՝ դատարանում գործը վարելու և դատավարական այլ գործողություններ իրականացնելու համար.
- օրենքով, իրավական այլ ակտերով, հիմնադրի և աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ տնօրինում է աշխատակազմին ամրագրված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
- տնօրինում է աշխատակազմի գործունեության արդյունքում ձևավորված տեղեկատվությունը, օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված կարգով ապահովում է տեղեկատվության տրամադրումն ըստ նշանակության.
- հսկողություն է իրականացնում ծառայության արխիվում՝օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջների կատարման նկատմամբ.
- օրենքով սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և ազատում պետական ծառայողներին և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի միջոցներ և կարգապահական տույժեր՝ բացառությամբ կանոնադրության 15-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված պաշտոնների.

- շնորհում է պետական ծառայության դասային աստիճաններ՝ բացառությամբ բարձրագույն պետական խորհրդականի դասային աստիճանի.
- Ծառայության պետի հաստատմանն է ներկայացնում պետական ծառայության պաշտոնների անձնագրերի նկարագրերը, հիշյալ պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը.
- որոշում է կայացնում պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին, հայտարարում է մրցույթները.
- սահմանված կարգով կազմակերպում է աշխատակազմի աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրացման աշխատանքները.
- ապահովում է աշխատակազմի կապը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ու այլ մարմինների հետ.
- հանդիսանում է ծառայության ֆինանսական միջոցների կարգադրիչը՝գլխավոր ֆինանսիստը և իրականացնում օրենսդրությամբ նրան վերապահված լիազորությունները.
- պատասխանատու է ծառայության և աշխատակազմի ֆինանսական պարտավորությունները և հիմնական միջոցներն արդյունավետ կառավարելու (ներառյալ՝ հիմնական միջոցների հաշվառումը, պահպանությունը և շահագործումը), ինչպես նաև նյութական և ֆինանսական միջոցների վատնումն ու չնախատեսված ծախսերը կանխելու, արդյունավետ օգտագործելու համար:

Աշխատակազմի ղեկավարն ունի տեղակալ, որը գործում է նրա անմիջական ենթակայությամբ և իրականացնում է իրեն հանձնարարված ոլորտներում աշխատանքների կազմակերպումը և համակարգումը: Աշխատակազմի ղեկավարի տեղակալը պետական ծառայող է, որին պաշտոնի է նշանակում ծառայության պետը: Աշխատակազմի ղեկավարի տեղակալի լիազորությունները սահմանվում են կանոնադրությամբ, պաշտոնի անձնագրով և իրավական այլ ակտերով: Աշխատակազմի ղեկավարի տեղակալն աշխատակազմի ղեկավարի բացակայության դեպքում կատարում է վերջինիս պարտականությունները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

Աշխատակազմի պետական ծառայողները և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցներն իրենց գործառույթներն իրականացնում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի և իրավական այլ ակտերի համաձայն: Աշխատակազմում պետական ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կանոնադրությամբ:

Աշխատակազմում պետական ծառայողներ չեն համարվում ծառայության պետի օգնականն ու մամուլի քարտուղարը, տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցները, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով այլ խնդիրներ ու գործառույթներ իրականացնող անձինք:

3. Դիմում-բողոքների քննարկման կարգը

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քաղաքացիների դիմում-բողոքների քննարկման և քաղաքացիների ընդունելության կարգը սահմանվում է ՀՀ հատուկ քննչական ծառայության կանոնակարգով և «Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում բողոքների, առաջարկությունների քննարկման, անձանց ընդունելության և գործավարության կարգի մասին» ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի 2008թ. փետրվարի 13-ի թիվ 3 հրամանով:

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննարկման են ենթակա ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, իրավաբանական անձանց, պետական մարմինների պաշտոնատար անձանց այն դիմումները, որոնք տեղեկություններ են պարունակում հանցագործությունների, պետության գույքային շահերի, օրենքով նախատեսված դեպքերում՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, օրինականության խախտումների մասին: Քրեական գործերի քննության հետ կապված քննիչների, հետաքննության մարմինների, դատախազների գործո-

ղությունների, դատարանների դատավճիռների, վճիռների և որոշումների դեմ բերված բողոքներն ստուգվում են ՀՀ քրեական դատավարության և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով սահմանված կարգով:

- Դիմումներն ուսումնասիրվում և լուծվում են Ծառայությունում գրանցվելուց հետո՝ ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:
- Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գրագրությունները, կախված դրանց ծավալից, նշանակությունից և բարդության աստիճանից, ուսումնասիրվում ու լուծվում են գրանցման օրվանից մինչև 15, իսկ առանձին դեպքերում՝ 30 օրվա ընթացքում կամ հեղինակի հետ համաձայնեցված ժամկետում:
- Եթե ծառայողը չի կարողացել սահմանված ժամկետում լուծում տալ դիմումին կամ գրագրությանը, ապա սահմանված ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն է ներկայացնում ծառայության պետին կամ պետի տեղակալին՝ նշելով ժամկետի խախտման պատճառները:

Ծառայության պետը կամ պետի տեղակալը, ուսումնասիրելով միջնորդության մեջ նշված պատճառները, որոշում է ընդունում այն օբյեկտիվ համարելու և սահմանված ժամկետը երկարացնելու մասին կամ հարցի լուծումը հանձնարարում է այլ ծառայողի, կամ մերժում է միջնորդության բավարարումը՝ հանձնարարելով կատարել համապատասխան գործողություններ:

- Այն դիմումները, որոնց առաջադրված հարցերի լուծումը չի մտնում ծառայության իրավասության մեջ, եռօրյա ժամկետում վերադարձվում են դիմումատուին՝ չբավարարող տվյալները լրացնելու առաջարկությամբ՝ միաժամանակ պարզաբանելով, թե ում է անհրաժեշտ դրա համար դիմել:
- Քրեական գործերի քննության հետ կապված քննիչի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ բերված բողոքներն ստուգվում են քրեադատավարական նորմերին համապատասխան:
- Քննարկման ընթացքում առանց համաձայնության չի թույլատրվում հրապարակել դիմումի (գրագրության) բովանդակությունը, ինչպես նաև դիմումատուի անձնական կյանքին վերաբերող տվյալներ: Տվյալների հրապարակում չի համարվում գրավոր

դիմումի ուղարկումն այն մարմնին կամ պաշտոնատար անձին, որի իրավասության մեջ է մտնում դիմումում ներկայացված հարցերի լուծումը:

- Այն դիմումները, որոնք չունեն լուծման համար բավարար տվյալներ, եռօրյա ժամկետում վերադարձվում են դիմումատուին՝ չբավարարող տվյալները լրացնելու առաջարկությամբ՝ միաժամանակ պարզաբանելով, թե ում է անհրաժեշտ դրա համար դիմել: Դիմումատուի լրացված դիմումի նորից ներկայացման դեպքում այն քննարկվում է սույն կարգին համապատասխան՝ որպես առաջին անգամ ստացված:
- Լուծման ենթակա չեն այն դիմումները (գրագրությունը), որոնց հեղինակներն ուղղակի միջամտում են ծառայության գործունեությանը: Այդ մասին ոչ ուշ, քան յոթնօրյա ժամկետում դիմումատուին ուղարկվում է պատճառաբանված հաղորդում՝ այդպիսի գործողությունների անթույլատրելիության մասին:
- Քննարկման ընթացքում առանց համաձայնության չի թույլատրվում հրապարակել դիմումի (գրագրության) բովանդակությունը, ինչպես նաև դիմումատուի անձնական կյանքին վերաբերող տվյալները: Տվյալների հրապարակում չի համարվում գրավոր դիմումի ուղարկումն այն մարմնին կամ պաշտոնատար անձին, որի իրավասության մեջ է մտնում դիմումում ներկայացված հարցերի լուծումը:
- Եթե գրավոր դիմումի տեքստն ընթեռնելի չէ, ապա դրան պատասխան չի տրվում: Այդ մասին յոթնօրյա ժամկետում հայտնվում է դիմումատուին, եթե նրա անունը, ազգանունը և հասցեն հնարավոր է կարդալ:
- Դիմումը կարող է թողնվել առանց լուծման, եթե այն զուրկ է տրամաբանությունից և իմաստից, կամ քննարկվող նյութերում առկա է դիմումատուին հոգեկան հիվանդության հետևանքով անգործունակ ճանաչելու կամ հոգեկան հիվանդության կապակցությամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին դատական ակտ:
- Դիմումն ըստ էության առանց պատասխանի թողնելու մասին որոշումը կայացնում է ծառայության պետը կամ պետի տեղակալը:

- Եթե դիմումում (գրագրությունում) ներկայացված հարցերին ըստ էության պատասխան տալ հնարավոր չէ առանց պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տվյալներ հրապարակելու, ապա դիմումատուին հաղորդվում է իր դիմումում ներկայացված հարցին ըստ էության պատասխան տալու անհնարինության մասին՝ նշված տվյալները հրապարակելու անթույլատրելիության պատճառաբանությամբ:

4. Քաղաքացիների ընդունելության կարգը

- Ըստ կանոնակարգի՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քաղաքացիների, պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ընդունելության կազմակերպումն ապահովում է ծառայության աշխատակազմը՝ ընդունելություն իրականացնող պաշտոնատար անձի նշանակած օրը:
- Ծառայության իրավասու պաշտոնատար անձի մոտ կոնկրետ բողոքով առաջին անգամ ընդունելության եկած անձինք ընդունվում են անմիջապես:
- Ծառայության պետը կամ պետի տեղակալն ընդունում է այն անձին, ում դիմումի վերաբերյալ իրավասու ծառայողի կողմից ավելի վաղ որոշում է կայացվել Ծառայությունում, կամ ում դիմումը վերաբերում է ծառայողների գործողություններին, կամ դիմողներն այլ իրավապահ մարմինների, նախարարությունների, գերատեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ կամ նրանց տեղակալներ են:
- Եթե բողոքը վերաբերում է ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի կամ պետի տեղակալի ընդունած որոշմանը, ապա անձնական ընդունելությունը կարող է կազմակերպվել Ծառայության պետի կամ պետի տեղակալի հանձնարարությամբ:
- Ծառայության պետի կամ պետի տեղակալի մոտ անձնական ընդունելությունը կարող է կազմակերպվել Ծառայության պետի կամ պետի տեղակալի հանձնարարությամբ:

ԲԱԺԻՆ. 3

ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ-ՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՀՀ հատուկ քննչական ծառայության կարևորագույն առաքելություններից մեկը վատ վերաբերմունքի դեպքի (դիմումների) քննությունն է:

Հարկ ենք համարում ներկայացնել, որ վատ վերաբերմունքի դեպքերին և դրանց քննության չափանիշներին, հիմնախնդիրներին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերի վերլուծության արդյունքում առանձնացվել են որոշակի չափորոշիչներ[1], մանսավորապես, ***վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների քննության վերաբերյալ:***

Ներպետական կառուցակարգերի տեսակները, որոնք հարմար են վատ վերաբերմունքի մասին բողոքների քննության համար, բնորոշվում են խախտման բնույթով և պահանջվող միջոցների ծավալով:

Այսպիսով, ծերբակալման կամ բժշկական օգնության պայմանների անհամապատասխանության, ինչպես նաև չնախատեսված վատ վերաբերմունքի այլ տեսակների դեմ բողոքելու ամենաբնորոշ միջոցը ***վերադասներին բողոք ներկայացնելն է***՝ ըստ ոստիկանության համակարգի կամ վերահսկողություն իրականացնող ***մարմինների և դատական իշխանության***[2]***:*** Վերջին տարբերակը ներառում է հրատապ կամ հետագա քաղաքացիական դատավարություն սկսելը՝ խախտման կամ պատճառված վնասվածքի դիմաց փոխհատուցման նպատակով:

Ինչ վերաբերում է ֆիզիկական կամ հոգեկան տառապանքին, անհարկի ուժի գործադրմանը և դիտավորյալ վատ վերաբերմունքի

---

[1] Քննությանը վերաբերող չափորոշիչների մասին մանրամասն տե՛ս ***Սվաիծե է.*** «Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարը: Ազատությունից զրկված անձանց իրավունքները և իրավապահ մարմինների աշխատակիցների պարտականությունները: 11 հիմնական հարցեր և պատասխաններ», խմբագրությամբ՝ ***Վ. Գ. Ենգիբարյանի***, Երևան, 2011, «Անտարես», էջեր 24-27:

[2] Երբեմն նման գործերը նույնպես կարող են լինել քննության առարկա: Տե՛ս՝ Ռամիշվիլին և Կոխրեիձեն ընդդեմ Վրաստանի գործով Եվրոպական դատարանի 2009 թվականի հունվարի 27-ի վճիռ, գանգատ թիվ 1704/06, կետ 80:

դրսևորման այլ ձևերին, ապա իրավասու մարմինները պարտավոր են այդ կապակցությամբ իրականացնել անհրաժեշտ ***քննություն***: Այդ իսկ պատճառով, նման բողոքները կարող են քննվել քրեական և վարչական վարույթների շրջանակներում, որոնք կիրականացվեն ***ոստիկանություն ներկայացվող բողոքների մեխանիզմի, քննչական կամ դատախազական մարմինների միջոցով***:

Վատ վերաբերմունքի հայտնի կամ ենթադրյալ զոհերը պետք է համագործակցեն իրավասու մարմինների հետ, պետք է հարցաքննվեն կամ մասնակցեն այլ քննչական գործողությունների և ընթացակարգերի: Բացի դրանից, նրանք պետք է ***իրենց օրինական շահերը ներկայացնեն*** իրականացվող քննությունների ընթացքում և ***պաշտպանվեն*** այս պարտականությունը չկատարելուց[1]: Ուստի կարևոր է, որ նրանք տեղյակ լինեն այս առնչությամբ մշակված հատուկ պահանջների և չափանիշների մասին:

Միաժամանակ սահմանված են, թե ***ինչպիսի պահանջների պետք է համապատասխանի վատ վերաբերմունքի առնչությամբ քննությունը:***

Համառոտ՝ քննությունը պետք է ***հաստատի գործի փաստերը,*** և եթե խախտումները կամ վատ վերաբերմունքի մասին այլ ցուցմունքները ճշմարիտ լինեն, քննությունը պետք է ***բացահայտի*** և ***պատժի մեղավորներին*** հնարավոր վարույթների միջոցով: ***Համապատասխանության և արդյունավետության*** տեսանկյունից՝ վատ վերաբերմունքի առնչությամբ իրականացվող քննությունը պետք է համապատասխանի մի շարք առանձնահատուկ չափորոշիչների: Այդպիսով, քննությունը պետք է լինի.

- ***անկախ,*** այսինքն՝ պաշտոնատար անձինք, որոնք պատասխանատու են քննության համար, իրականացնում են դրա փուլերը կամ կայացնում հիմնական որոշումները, չպետք է լինեն ո՛չ միևնույն

[1] Նշված պարտականության առնչությամբ տե՛ս՝ Մասլովան ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 2008 թվականի հունվարի 24-ի վճիռ, գանգատ թիվ 839/02, կետ 91. Ձելիլոֆն ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 2004 թվականի մայիսի 24-ի վճիռ, գանգատ թիվ 17060/03, կետ 55. Ալթունն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 2004 թվականի հունիսի 1-ի վճիռ, գանգատ թիվ 24561/94, կետ 71. Այդերը և այլոք ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 2004 թվականի հունվարի 8-ի վճիռ, գանգատ թիվ 23656/94, կետեր 122-129:

ոստիկանական բաժանմունքից կամ այլ կերպ կապ ունենան (մասնագիտական փոխկապակցվածություն, ենթակարգություն) գործին առնչվող անձանց հետ[1], ո՛չ էլ պետք է հաշվետու լինեն դիմողի քրեական հետապնդման համար[2],

- ***բազմակողմանի,*** այսինքն՝ քննությունը պետք է ներառի «բոլոր անհրաժեշտ քայլերը» և իրական ջանքերը նշված նպատակներին հասնելու համար. հավաքված ապացույցների ստանդարտ արձանագրումը[3] պետք է պարունակի զոհերի մանրամասն և սպառիչ ցուցմունքները, նրանց բժշկական, ցանկալի է՝ դատաբժշկական զննումը, պատշաճ հարցաքննությունը և, անհրաժեշտության դեպքում՝ մեղավորների հայտնաբերումը, վկաների պատշաճ հայտարարությունները, այլ կալանավորվածների, կալանավայրի անձնակազմի, հասարակության ներկայացուցիչների, իրավապահ մարմինների և այլ պաշտոնատար անձանց հայտարարությունների հնարավոր ներառումը, իրեղեն ապացույցներ ձեռք բերելու նպատակով դեպքի տեղի զննությունը, ներառյալ՝ վատ վերաբերմունքի գործադրման գործիքները, կալանքի արձանագրության, որոշումների, գործի նյութերի և դեպքին առնչվող այլ փաստաթղթերի հետազոտությունը[4] ,
- ***արագ,*** այսինքն՝ անհրաժեշտ ապացույցների պահպանման նպատակով, ներառյալ՝ նրանք, որոնք կարող են կորչել կամ նվազել, ինչպես նաև վարույթների ժամանակին իրականացումը, որոնք

---

1 Տե՛ս Ռեհբոքն ընդդեմ Սլովենիայի գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 28 -ի վճիռ, գանգատ թիվ 36220/02, կետ 48. Միխեևն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 2006 թվականի հունվարի 26-ի վճիռ, գանգատ թիվ 77617/01, կետ 115:

2 Տե՛ս Բարաբանշիկովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 2009 թվականի հունվարի 8-ի վճիռ, գանգատ թիվ 36220/02, կետ 48. Տոտովան ընդդեմ Բուլղարիայի գործով Եվրոպական դատարանի 2004 թվականի մայիսի 19-ի վճիռ, գանգատ թիվ 42027/98, կետ 63. 2005 թվականի մայիսի 23-ից հունիսի 3-ն Ալբանիա կատարած այցի վերաբերյալ CPT զեկույցը, CPT/Inf (2006) 24, կետ 50:

3 Տե՛ս Խադիսովը և Տսեչոևն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 2009 թվականի փետրվարի 5-ի վճիռ, գանգատ թիվ 21519/02, կետ 114. Բատին և այլոք ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 2004 թվականի հունիսի 3-ի վճիռ, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, կետ 134. Ստամբուլյան արձանագրություն, կետեր 88-106. CPT գործունեության վերաբերյալ 14-րդ ընդհանուր զեկույցը, CPT/Inf (2004) 28, կետ 33:

4 Վատ վերաբերունքի առնչությամբ հատուկ քննությունները կարող են պահանջել որոշ լրացուցիչ կամ հատուկ քննչական գործողություններ և ընթացակարգեր:

անհրաժեշտ են վերջնական որոշման կայացման կամ մեղավորներին պատժելու համար[1],

- ***ենթակա լինեն հետազոտման*** զոհի կամ իր փաստաբանի կողմից, որոնք պետք է համապատասխանաբար տեղեկացվեն քննության ընթացքի և կայացված հիմնական որոշումների մասին, պետք է իրավունք ունենան միջնորդելու՝ կատարել քննչական գործողություններ, վիճարկել բացթողումները կամ եզրակացությունները՝ պատշաճ դատական վերահսկողության միջոցով[2]:

Վերջապես, քննչական համակարգը պետք է ***բացառի ցանկացած անձեռնմխելիություն կամ այլ ձևական արգելք*** քննության նպատակների համար[3], պետք է ապահովի, որպեսզի ***զոհերը կամ վկաներն օգտվեն պաշտպանության միջոցներից***, ներառյալ՝ մեղավորների ծառայության կամ պաշտոնավարման ժամանակավոր դադարեցումը[4]:

---

[1] Տե՛ս Միխեևն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 2006 թվականի փետրվարի 23-ի վճիռ, գանգատ թիվ 77617/01, կետ 109. Յամանն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 2004 թվականի նոյեմբերի 2-ի վճիռ, գանգատ թիվ 32446/96, կետեր 57, 59:

[2] Տե՛ս Օգնյանովան և Չոբան ընդդեմ Բուլղարիայի գործով Եվրոպական դատարանի 2006 թվականի փետրվարի 23-ի վճիռ, գանգատ թիվ 46317/99, կետ 115. Չիտաևան և Չիտաևն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով Եվրոպական դատարանի 2007 թվականի հունվարի 18-ի վճիռ, գանգատ թիվ 59334/00, կետ 165. Հյուգ Ջորդանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 2001թվականի մայիսի 4-ի վճիռ, գանգատ թիվ 24746/94, կետ 132. Խաղիսովը և Տսեչոևն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 2009 թվականի փետրվարի 5-ի վճիռ, գանգատ թիվ 21519/02, կետ 122. Գարիբաշվիլին ընդդեմ Վրաստանի գործով Եվրոպական դատարանի 2008 թվականի հուլիսի 29-ի վճիռ, գանգատ թիվ 11830/03, կետ 74. Սելմոունին ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի 2004 թվականի հուլիսի 24-ի վճիռ, գանգատ թիվ 57671/00. Ռամիշվիլին և Կոխրեիձեն ընդդեմ Վրաստանի գործով Եվրոպական դատարանի 2009 թվականի հունվարի 27-ի վճիռ, գանգատ թիվ 1704/06, կետ 80:

[3] Տե՛ս Հյուգ Ջորդանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 2001 թվականի մայիսի 4-ի վճիռ, գանգատ թիվ 24746/94, կետ 135: Սույն գործով Եվրոպական դատարանը չի գտել, որ հանգամանքները, այդուհանդերձ, էական են քննության նպատակների համար: Տե՛ս նաև՝ Բեկոսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 2005 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռ, գանգատ թիվ 15250/02, կետ 54: Ստամբուլյան արձանագրություն, կետ 80:

[4] Տե՛ս Յամանն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 2004 թվականի նոյեմբերի 2-ի վճիռ, գանգատ թիվ 32446/96, կետ 55: Տե՛ս նաև Բեկոսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 2005 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռ, գանգատ թիվ 15250/02, կետ 54: Ստամբուլյան արձանագրություն, կետ 80.

Քննարկվող ոլորտում ՀՀ հատուկ քննչական ծառայության գործառույթների տեսանկյունից անհրաժեշտ է նշել, որ վատ վերաբերմունքի դեպքերի քննությունը ԵԽ անդամ պետությունների համար սահմանված պարտականություններ են:

Ըստ այդմ, «Առանց վատ վերաբերմունքի վերաբերյալ հայտարարությունները և այլ տեղեկությունները քննելու պոզիտիվ պարտականության արգելքը կլինի տեսական և պատրանքային՝ այդպիսով թույլ տալով իշխանության ներկայացուցիչներին և նրանց ենթականերին գործել անպատժելիության պայմաններում»:

Չնայած տառացի ամրագրման բացակայությանը՝ ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածը սահմանում է ոչ միայն վատ վերաբերմունք դրսևորելուց ձեռնպահ մնալու պարտականություն, այլ նաև պոզիտիվ գործողություններ կատարելու պարտականություն է նախատեսում: Պոզիտիվ պարտականության հայեցակարգը բխում է 1-ին հոդվածում ամրագրված՝ ՄԻԵԿ-ով նախատեսված իրավունքների և ազատությունների ապահովման պահանջից: «Ապահովել» բառը ենթադրում է այնպիսի միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականության առկայություն, որոնց արդյունքում կապահովվի իրավունքների երկուստեք՝ տեսական և գործնական պատշաճ պաշտպանություն:

Վատ վերաբերմունքի դեպքերը քննելու պոզիտիվ պարտականության այս առկայությունն ուղղակիորեն սահմանվել է Դատարանի կողմից, որը «հիշեցնում է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը սահմանում է վատ վերաբերմունքի մասին հայտարարությունների արդյունավետ քննության պոզիտիվ պարտականություն (Assenov and Others . . . «« 101-106)»:[1] Դատարանն իր դիրքորոշումը հիմնավորել է հետևյալ կերպ.

«Դատարանը հիշեցնում է, որ եթե անձն անում է վստահելի հայտարարություն այն մասին, որ ինքն ի խախտումն 3-րդ հոդվածի՝ ենթարկվել է խոշտանգման ոստիկանի կամ նման այլ պետական պաշտոնատար անձի կողմից, ապա այդ դրույթը Կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված՝ «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայով սահմանված իրավունքների

---

[1] *Afanasyev*. v. *Russia*, 2005 թվականի ապրիլի 5-ի վճիռ, գանգատ թիվ 38722/02, կետ 69:

և ազատությունների ապահովման»՝ պետությունների ընդհանուր պարտականության հետ մեկտեղ, ենթադրում է արդյունավետ պաշտոնական քննության առկայություն:... Այլ կերպ ասած, խոշտանգումների և անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի և պատժի ընդհանուր իրավական արգելքը, չնայած իր հիմնարար կարևորությանը, գործնականում ոչ արդյունավետ կլինի և որոշ դեպքերում հնարավոր կլինի պետական մարմինների կողմից խախտել իրենց տրամադրության տակ գտնվող անձանց իրավունքները և փաստացի մնալ անպատիժ (ի թիվս այլ աղբյուրների՝ տե՛ս Labita v. Italy [GC], գանգատ թիվ 26772/95, կետ 131, ՄԻԵԿ 2000-IV)»:[1]

Նույն կերպ՝ CPT-ն նշել է, որ.

«Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքի նկատմամբ վստահելիությունը խարխլվում է ամեն անգամ, երբ նման հանցագործությունների համար պատասխանատու անձինք չեն պատժվում իրենց արարքների համար: Եթե վատ վերաբերմունքի վերաբերյալ տեղեկության վերհանմանը չի հաջորդում անհապաղ և արդյունավետ պատասխանատվությունը, ապա այն անձինք, ովքեր տրամադրված են վատ վերաբերմունք դրսևորել ազատությունից զրկված անձանց նկատմամբ, շատ շուտով կհամոզվեն, և բավական լուրջ հիմքերով, որ կարող են նման կերպ վարվել և անպատիժ մնալ»:[2]

Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի կանխարգելման պարտականություններն առավել ամբողջական սահմանված են UNCAT-ում: Ի լրումն քննելու պարտականության (հոդված 12), այն վկայակոչում է «օրենսդրական, վարչական, դատական և կանխարգելման այլ միջոցները», ինչպես նաև այնպիսի առանձնահատուկ դրույթների անհրաժեշտությունը, ինչպիսիք են.

- *անձի արտաքսման, վերադարձման կամ մեկ այլ պետության հանձնման կանխումը, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նա կարող է խոշտանգման ենթարկվել (հոդված 3),*

---

1 *Bekos and Koutropoulos* v. *Greece*, Եվրոպական դատարանի 2005 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռ, գանգատ թիվ 15250/02, կետ 53:

2 CPT-ի գործունեության վերաբերյալ 14-րդ ընդհանուր զեկույց, CPT/Inf (2004) 28, կետ 25:

- *խոշտանգման բոլոր գործողությունների քրեականացումը (հոդված 4)*,
- *խոշտանգումը հանձնման ենթակա հանցագործություն դիտելը, և խոշտանգումների կապակցությամբ հարուցված քրեական վարույթով այլ պետությունների կողմերի հետ համագործակցելը (հոդվածներ 5, 7 և 8)*,
- *ենթադրյալ հանցագործներին կալանավորելը (հոդված 6)*,
- *իրավապահ և համապատասխան այլ մարմինների անձնակազմերի ուսուցումը (հոդված 10)*,
- *իրավապահ գործունեության կանոնների, ցուցումների, մեթոդների և պրակտիկայի պարբերաբար վերանայումը (հոդված 11)*,
- *բողոքարկման պատշաճ համակարգի գործունեությունը (հոդված 13)*,
- *արդար և համապատասխան փոխհատուցման հնարավորությունը (հոդված 14)*, *և*
- *խոշտանգման արդյունքում տրված ցանկացած վկայության տուժողների դեմ որպես ապացույց չվկայակոչվելու ապահովումը (հոդված 15):*

Այս ցանկն սպառիչ չէ և թարմացվել է OPCAT-ի կողմից: Այն ներառում է անկախ փորձագիտական մարմինների կողմից կալանավայրեր պարբերաբար այցելելու համակարգի ձևով մոնիթորինգի միջոցառումների համընդհանուր նվազագույն չափանիշներ, ինչպես նաև ազգային կանխարգելիչ մեխանիզմներ:

Վատ վերաբերմունքի կանխարգելման և քննության իրականացման պարտականության միջև առկա կապը պետության ներկայացուցիչների և հակաահաբեկչական ենթատեքստի շեշտադրմամբ ուղղակիորեն ընդգծվել է CAT-ի կողմից.

«Կոմիտեն շեշտադրում է, որ խոշտանգումների կանխարգելման պետության պարտականությունը վերաբերում է նաև բոլոր անձանց, ովքեր de jure կամ de facto գործում են պետական մարմնի անունից կամ նրա հրահանգով կամ կապված են նրա հետ: Անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր պետական մարմին անմիջականորեն վերահսկի իր ծառայողներին և այն անձանց, ովքեր գործում են

իր հրահանգով, և պետք է վերհանի ու Կոմիտեին զեկուցի, ի թիվս այլոց, հակաահաբեկչական միջոցառումների արդյունքում կիրառված խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի դեպքերի և դրանց քննությանը, պատասխանատու անձանց պատժելուն և ապագայում խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ՝ պատշաճ ուշադրություն դարձնելով երկուստեք՝ անմիջական իրավախախտների և դրդչության, համաձայնության կամ թույլտվության հետ կապված գործողությունների դեպքում ղեկավարման շղթայում գտնվող պաշտոնատար անձանց իրավական պատասխանատվության հարցերին»:[1]

Մարդու իրավունքների պաշտպանության հարցերով եվրոպական պայմանագրերը նվազ առանձնահատուկ են, փոփոխությունների հնարավորություն են ընձեռում: Այդ իսկ պատճառով, CPT-ի ուղեցույցն ուսուցողական է: Գործնական մոտեցման այլ տարրերի վերաբերյալ վերջինիս տեսակետները շարադրված են դրա 14-րդ ընդհանուր զեկույցում:

*«26. Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, օրինակ՝ ուսուցման եղանակով, **առաջ մղելու համար** պրոֆեսիոնալ վարքագծի այնպիսի **մշակույթը**, որի դեպքում ոչ պրոֆեսիոնալ (և առաջխաղացման առումով ոչ անվտանգ) է համարվում վատ վերաբերմունքի դիմող գործընկերների հետ աշխատելը կամ միավորվելը, և, ընդհակառակը, ճիշտ և պրոֆեսիոնալ առումով գնահատելի է համարվում այն անձանց թվին պատկանելը, ովքեր ձեռնպահ են մնում նման գործողություններից»:*

*«42. Վերջում, որևէ մեկի մոտ չպետք է կասկած մնա անպատժելիության դեմ պաքարելու կապակցությամբ **պետական մարմինների անվարանության** կապակցությամբ: Դա կխրախուսի մնացյալ բոլոր մակարդակներում միջոցառումների ձեռնարկումը: Անհրաժեշտության դեպքում իշխանությունները պետք է բարձր քաղաքական մակարդակում հայտարարություն անեն,*

[1] Ընդհանուր մեկնաբանություն N2, CAT/C/GC/2, կետ 7:

որում առկա կլինի հստակ ուղերձ այն մասին, որ խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի նկատմամբ պետք է լինի «զրոյական հանդուրժողականություն»:

Իր վճիռներում Դատարանը վկայակոչում է նաև արգելքի կանխարգելիչ բաղադրամասի որոշ տարրեր: Դրանցից մի քանիսը դիտվում են որպես արդյունավետ ներպետական ընթացակարգերի վերաբերյալ պահանջի մաս, այլ կերպ ասած, ՄԻԵԿ-ի 3-րդ և 13-րդ հոդվածներից բխող պարտականություններ:[1] Դատարանի կողմից նշվել են նաև Կոնվենցիոն այլ իրավունքներ, որոնք փոխկապակցված են վատ վերաբերմունքի կանխարգելման հետ, դրանց թվին են դասվում.

- *ազատությունից ինկոմունիկադո զրկելու արգելքը,*
- *ծերբակալման պատշաճ արձանագրման պահանջը[2] և*
- *3-րդ հոդվածի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման արգելքը:[3]*

Քննության պարտականությունը պահանջում է միջոցառումների փոխկապակցված համակարգի առկայություն, որն ունակ կլինի ապահովել խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի համար համապատասխան պատասխանատվություն: Այն պահանջում է, որպեսզի պետությունները սահմանեն այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնց միջոցով հնարավոր կլինի վարույթ հարուցել և համապատասխանաբար պատժել վատ վերաբերմունքի համար պատասխանատու անձանց:

Պետական մարմինները պետք է իրենց քննչական պարտականություններն իրականացնեն անպատժելիության դեմ պայքարի իրենց պարտականությանը համապատասխան:

Դատարանն ընդունում է, որ այս պոզիտիվ պարտականությունները պահանջում են անպատժելիության դեմ պայքարի իրավական, դատավարական և այլ միջոցներ.

---

1 Ինչպիսին է փոխհատուցում վճարելու պահանջը, տե՛ս *Balogh* v. *Hungary*, 2004 թվականի հուլիսի 20-ի վճիռ, գանգատ թիվ 47940/99, կետ 62:

2 *Menesheva* v. *Russia*, 2006 թվականի մարտի 9-ի վճիռ, գանգատ թիվ 59261/00, կետ 87:

3 *Harutyunyan* v. *Armenia*, 2007 թվականի հունիսի 28-ի վճիռ, գանգատ թիվ 36549/03, կետեր 63-66:

«Դիմողները կալանավորման ընթացքում վատ վերաբերմունքի են ենթարկվել: Սակայն դիմողներին վատ վերաբերվելու համար ոստիկանության ոչ մի աշխատակից ո՛չ քրեական, ո՛չ ոստիկանության ներքին կարգապահական վարույթի կարգով չի պատժվել: [...] Ապա նա նշում է, որ ոչ պրն Ցիկրիկասը, ո՛չ պրն Ավգերիսը չեն հեռացվել ծառայությունից՝ չնայած վարչական վարույթի արդյունքների հիման վրա կազմված զեկույցում առկա հանձնարարականներին [...]: Վերջում ներպետական դատարանը բավարարվել է այն պատճառաբանությամբ, որ դիմողները ձերբակալման ժամանակ վնասվածքներ են ստացել թեթև հագուստի պատճառով: Այսպիսով, քննության արդյունքները շոշափելի չեն եղել, և դիմողներն իրենց պահանջների բավարարում չեն ստացել»:[1]

Դատարանի վճիռներում առկա են քննություն իրականացնելու պարտականության իրավական բնորոշման վերաբերյալ բազմաթիվ մոտեցումներ: Այն բնորոշվում է կամ միաժամանակ 3-րդ և 13-րդ հոդվածների[2], կամ ուղղակի 3-րդ հոդվածի լույսի ներքո: Ենթադրելով, որ համապատասխան բնորոշումը հիմնված է գործի փաստական հանգամանքների վրա,[3] սակայն ակնհայտ է, որ Դատարանը ելնում է 3-րդ հոդվածում առկա մոտեցումից:[4] Յուրաքանչյուր դեպքում ընտրված դասակարգումը չի ազդում պարտականության բնույթի վրա:

Նախադեպային իրավունքից պարզ է դառնում, սակայն, որ քաղաքացիական և վարչական կարգով վնասների փոխհատուցումը Դատարանը դիտում է որպես 3-րդ հոդվածով սահմանված բուն ընթացակարգից ուղղակիորեն դուրս գտնվող ընթացակարգեր: Դրանք հանդիսանում են ՄԻԵԿ-ի 13-րդ հոդվածով սահմանված պարտականություններին վերաբերող տարբեր ընթացակարգեր: Որպես ընթա-

---

1 *Bekos and Koutropoulos* v. *Greece*, 2005 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռ, գանգատ թիվ 15250/02, կետեր 54 և 55:

2 *Çelik and İmret* v. *Turkey*, 2004 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռ, գանգատ թիվ 44093/98, կետեր 54-60, *Yaman* v. *Turkey*, 2004 թվականի նոյեմբերի 2-ի վճիռ, գանգատ թիվ 32446/96, կետ 49, *Afanasyev.* v.. *Ukraine*, 2005 թվականի ապրիլի 5-ի վճիռ, գանգատ թիվ 38722/02, կետեր 69-70, *Cobzaru* v. *Romania*, 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռ, գանգատ թիվ 48254/99, կետեր 80-84:

3 *Bati and Others* v. *Turkey*, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռ, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, կետեր 126-127:

4 Տես *Assenov.* v. *Bulgaria*, 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ, գանգատ թիվ 24760/94, կետեր 106 և 118:

ցակարգ՝ դրա արդյունավետությունը, սակայն, կարող է կախված լինել քննության արդյունքներից.

«Վերոնշյալ պատճառներով չի կարելի ասել, որ կատարված քննությունը համապատասխանում է 13-րդ հոդվածին, որի պահանջներն ավելի լայն են, քան 3-րդ հոդվածով սահմանված՝ քննություն կատարելու պարտականությունը (տե՛ս mutatis mutandis, Buldan v. Turkey, թիվ 28298/95, կետ 105, 2004 թվականի ապրիլի 20, Tanrıkulu v. Turkey, թիվ 23763/94, կետ 119, ՄԻԵԿ 1999-IV, և Tekdağ՝ կետ 98): Հետևաբար, դիմողին տրամադրված ցանկացած այլ ընթացակարգ, ներառյալ վնասների հատուցման վերաբերյալ պահանջը, հաջողությամբ չի պսակվի և կհանդիսանա տեսական ու պատրանքային, և դիմողին հնարավորություն չի ընձեռվի փոխհատուցում ստանալ: Քաղաքացիական դատարաններն իրավասու են փաստին անկախ գնահատական տալ, մինչդեռ, գործնականում, նախորդ քրեական վարույթին տրված կշիռն այնքան մեծ է լինում, որ անգամ հայցվորի կողմից ներկայացված՝ հակառակը հիմնավորող ամենահամոզիչ ապացույցը հաճախ կարող է մերժվել և այդպիսով նման ընթացակարգը կարող է դառնալ տեսական ու պատրանքային (տե՛ս Menesheva v. Russia, թիվ 59261/00, կետ 77, 2006 թվականի մարտի 9, և Corsacov v. Moldova, թիվ 18944/02, կետ 82, 2006 թվականի ապրիլի 4) [...] Այսպիսով, Դատարանը կարող է հետևություն անել այն մասին, որ գործի կոնկրետ հանգամանքներում վնասների համար ոստիկանի հետապնդման հնարավորությունը միայն տեսական է»:[1]

Միջազգային չափանիշները վկայակոչում են վատ վերաբերմունքի արդյունավետ քննության պարտականության մի շարք տարրեր: Ի լրումն քննության պատշաճությանը, այն ներառում է այնպիսի միջոցներ, որոնք ապահովում են քննության հարուցման և իրավախախտների համապատասխան պատժման ուղիները: Քննության պարտականության նեղ ընկալման համեմատ, որն ամրագրված է մի շարք միջազգային փաստաթղթերում,[2] լայն մեկնաբանման պահան-

---

1 *Cobzaru* v. *Romania*, 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռ, գանգատ թիվ 48254/99, կետ 83:

2 Տե՛ս Ստամբուլյան արձանագրությունը և Ստամբուլյան սկզբունքները, որոնք, մասնավորապես, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի քննությունը դիտում են որպես պարզապես աջակցություն քրեական հետապնդմանը

ջը[1] ենթադրում է պարտականության կատարման հետևողականության բարձր աստիճան, որն իրենում ներառում է վատ վերաբերմունքի անպատժելիության նպատակը: Հետևողականության անհրաժեշտությունը հաշվի է առնվում CPT-ի կողմից իր այցերի արդյունքում հանձնարարականների կազմման ժամանակ:[2]

Պետությունները պետք է սահմանեն կառուցակարգերի և ընթացակարգերի հստակ համակարգ, որի շնորհիվ կարող են հայտնաբերվել վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումները, մատնանշումները և ապացույցները:

Այս համակարգը պետք է հավասար հիմունքներով հասանելի լինի բոլոր մարդկանց, այդ թվում՝ կալանավորված անձանց համար:

Նման համակարգ չձևավորելը կարող է ինքնին հանգեցնել արդյունավետ քննություն իրականացնելու պարտականության խախտման:

Սույն Չափանիշներում ներկայացված երաշխիքները և չափանիշները կազմվել են՝ նկատի ունենալով ազատությունից զրկված անձանց: Սակայն ՄԻԵԿ-ի 1-ին հոդվածի հիման վրա դրանք պետք է տրամադրվեն պետության իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի: Երաշխիքներ, այսպիսով, պետք է տրամադրվեն վատ վերաբերմունքից տուժած բոլոր անձանց:

Քննությունը. հիմքերը և նպատակները

Քննության հիմքերը

Քննություն սկսելու պարտականությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավասու պաշտոնատար անձինք ստանում են համոզիչ հայտարարություն կամ վատ վերաբերմունքի հավանական առկայության մասին այլ բավականաչափ հստակ մատնանշում:

կամ կարգապահական սանկցիային (Ստամբուլյան արձանագրության կետ 78): Նեղ ընկալումն ունի քննչական տեխնիկաների և մեթոդաբանությունների վրա ուշադրություն կենտրոնացնելու նպատակի իր հիմնավորումը:

1 Ինչպես երևում է Դատարանի վճիռներից և CPT-ի ուղեցույցից:

2 Տես 2005 թվականի մայիսի 23-ից հունիսի 3-ն Ալբանիա կատարած այցից հետո CPT-ի զեկույցը, CPT/Inf (2006) 24, կետեր 19-55:

Այս դեպքում քննությունը պետք է իրականացվի անգամ ուղղակի բողոքի բացակայության պայմաններում:

Մինչև վերջերս Դատարանը պահանջում էր «ապացուցելի դիմումի» առկայություն վատ վերաբերմունքի կապակցությամբ քննություն սկսելուն պարտավորեցնելու համար:[1] Բազմաթիվ տարբեր իրավիճակների հանդիպելով՝ Դատարանը նեղացրել է 3-րդ հոդվածի իր չափանիշները՝ պահանջելով քննություն անգամ հստակ դիմումի բացակայության պայմաններում: Խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի կապակցությամբ քննություն հարուցելու պարտականությունը ներկայումս առկա է այն դեպքում, երբ «բավականաչափ հստակ մատնանշումներ» կան այն մասին, որ վատ վերաբերմունք է «տեղի ունեցել»:[2]

Այս մոտեցումը համապատասխանում է Ստամբուլյան սկզբունքներին[3] և CPT-ի չափանիշներին:[4] Այդ պատճառով քննություններ պետք է իրականացվեն այն դեպքերում, երբ հնարավոր վատ վերաբերմունքն ակնհայտ է տեսանելի վնասվածքներով, անձի ընդհանուր տեսքով կամ վարքագծով և այլ համապատասխան նշաններով:[5] Ստրասբուրգի դատարանը նաև ամրագրում է, որ քննության իրականացումն անհրաժեշտ է այն դեպքերում, երբ «իրավասու պաշտոնատար անձինք ստանում են հայտարարություն, որը փաստորեն անհնարին չէ կամ առկա են այլ բավականաչափ հստակ մատնանշումներ, որ լուրջ վատ վերաբերմունք է տեղի ունեցել»:[6] Համապատաս-

---

1 Տե՛ս *Kuznetsov*. v. *Ukraine*, 2003 թվականի ապրիլի 29-ի վճիռ, գանգատ թիվ 39042/97, կետ 105 և *İpek* v. *Turkey*, 2004 թվականի փետրվարի 17-ի վճիռ, գանգատ թիվ 25760/94:

2 *Bati and Others* v. *Turkey*, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռ, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, կետ 100, *97 members of the Gldani Congregation of Jehovah's Witnesses and 4 Others* v. *Georgia*, 2007 թվականի մայիսի 3-ի վճիռ, գանգատ թիվ 71156/01, կետ 97:

3 Ստամբուլյան սկզբունքների 2-րդ կետ:

4 CPT-ի գործունեության վերաբերյալ 14-րդ ընդհանուր զեկույց, CPT/Inf (2004) 28, կետ 27:

5 CPT-ի գործունեության վերաբերյալ 14-րդ ընդհանուր զեկույց, CPT/Inf (2004) 28, կետ 28:

6 Տե՛ս *97 members of the Gldani Congregation of Jehovah's Witnesses and 4 Others* v. *Georgia*, 2007 թվականի մայիսի 3-ի վճիռ, գանգատ թիվ 71156/01, կետ 97: Չափանիշների նպատակներից ելնելով՝ այս արտահայտությունը փոխարինաբար կիրառվում է «արժանահավատ հաշվետվություններ» արտահայտության հետ, եթե հակառակը չի նշվում:

խանաբար, Չափանիշները ենթադրում են, որ «ճշմարտացի հայտարարություններ *կամ վատ վերաբերմունքի այլ մատնանշումներ*» կամ «վատ վերաբերմունքի վերաբերյալ արժանահավատ հաշվետվություններ» արտահայտությունները պետք է կիրառվեն ապահովելու համար քննության հարուցման հեռանկարները և ուղիները:

Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքի նյութական սահմանների ընդլայնման հետ մեկտեղ, ընդլայնվում է այն հանգամանքների շարքը, որոնց առկայության դեպքում քննություն կատարելու պարտականություն է առաջանում: Այսպիսով, ենթադրվում է, որ պետք է ելնել ունեցվածքի դիտավորյալ ոչնչացումից:

«Եթե անձը ներկայացնում է ապացուցելի դիմում այն մասին, որ իր ունեցվածքը նպատակադրված ոչնչացվել է պետության ներկայացուցիչների կողմից, 13-րդ հոդվածը պահանջում է, որ ի լրումն փոխհատուցման իրականացվի համակողմանի և արդյունավետ քննություն, որը կհանգեցնի պատասխանատու անձանց բացահայտման և պատժման քննության ընթացակարգին, արդյունավետ կերպով կներառի դիմողին (տե՛ս վերը՝ Menteş and Others, էջեր 27, 15-16, կետ 89)»:[1]

2-րդ հոդվածի նախադեպային իրավունքի անալոգիայով քննություն կատարելու պարտականությունը ծագում է նաև իրավապահ կամ ոստիկանական գործունեության ընթացքում ուժի անհամաչափ կիրառման վերաբերյալ հայտարարությունների կապակցությամբ:[2]

Ըստ դատարանում վարույթի ցուցանիշների՝ կալանավորված և վերոնշյալ անձանց վերահսկողության տակ գտնվող անձանց վնասվածքների վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պարտականությունը դրված է պաշտոնատար անձանց վրա: Սա ազդեցություն ունի ներպետական քննությունների վրա՝ սահմանելով պաշտոնատար անձանց պարտականությունը՝ հաշվետու լինելու անձանց պատճառված վնասվածքների համար, քանի դեռ նրանք գտնվում են իրենց վերահսկողության ներքո:[3] Հետևաբար, դրանք դիտվում են

---

1 *Altun* v. *Turkey*, 2004 թվականի հունիսի 1-ի վճիռ, գանգատ թիվ 24561/94, կետ 71: Տե՛ս նաև *Ayder and Others* v. *Turkey*, 2004 թվականի հունվարի 8-ի վճիռ, գանգատ թիվ 23656/94, կետեր 122-129:

2 *Zelilof* v. *Greece*, 2004 թվականի մայիսի 24-ի վճիռ, գանգատ թիվ 17060/03, կետ 55:

3 *Mikheev*. v. *Russia*, 2006 թ. հունվարի 26-ի վճիռ, գանգատ թիվ 77617/01, կետ 127:

որպես վատ վերաբերմունքի լուրջ մատնանշումներ, որոնք ենթակա են քննության:

Վատ վերաբերմունքի առնչությամբ քննությունը դադարեցնելու կամ մերժելու մասին որոշումները կարող են կայացվել միայն անկախ և իրավասու պաշտոնատար անձի կողմից բոլոր համապատասխան փաստերի ամբողջական և անհապաղ քննության արդյունքում: Նման որոշումները պետք է պատշաճ հետազոտության առարկա հանդիսանան և հասարակական ու մրցակցային դատական վերահսկողության ընթացակարգի իմաստով վիճարկելի լինեն:

Հայտարարության անհիմն լինելու մասին որոշումը հավասարազոր է քննություն իրականացելը մերժելուն և ենթադրյալ տուժողին՝ քննության պարտականությունից բխող իրավունքներից զրկելուն: Նման որոշումը պետք է, հետևաբար, ստուգման բարձր աստիճան ունենա:

Քննությունների սկզբունքային նպատակները

Արդյունավետ քննությունը պահանջում է իրական ջանքերի գործադրում վատ վերաբերմունքի վերաբերյալ համապատասխան փաստերի պատշաճ վերհանման և, անհրաժեշտության դեպքում, դրա համար պատասխանատու անձանց բացահայտելու և պատժելու նպատակով:

Չափանիշները նախատեսում են քննության երկու հիմնական նպատակ՝ փաստերի հայտնաբերում և անհրաժեշտության դեպքում իրավախախտների պատժում: Ըստ դրանց՝ բոլոր գործերով չէ, որ փաստերը կարող են հայտնաբերվել, և որ երբեմն բավարար ապացույցներ չեն լինի իրավախախտներին պատժելու համար:

Սակայն պաշտոնատար անձինք պետք է իրական ջանք գործադրեն արդյունքի հասնելու համար: Այս Չափանիշներն արտացոլում են սույն ոլորտում Դատարանի կողմից կիրառվող ընդհանուր հասկացությունները.

«Քննություն իրականացնելու պարտականությունը «հանդիսանում է ոչ թե արդյունքի, այլ միջոցների պարտականություն». ոչ բոլոր քննությունները պետք է հաջողությամբ ավարտվեն կամ հանգեցնեն դեպքի վերաբերյալ դիմողի հայտարարությանը համապատասխանող եզրակացության, սակայն այն պետք է սկզբունքորեն հնարավորություն ունենա հանգեցնելու գործի հանգամանքների պարզմանը, և եթե հայտարարությունը կհամապատասխանի իրականությանը, պատասխանատու անձանց հայտնաբերմանը և պատժմանը: Այսպիսով, լուրջ հայտարարությունների վերաբերյալ քննությունը պետք է համակողմանի լինի: Դա նշանակում է, որ պաշտոնատար անձինք պետք է միշտ լուրջ ջանքեր գործադրեն պարզելու համար, թե ինչ է տեղի ունեցել և քննությունն ավարտելիս կամ որոշումներ կայացնելիս չպետք է հիմնվեն հապճեպ և անհիմն եզրակացությունների վրա»:[1]

Քննչական մարմինների առջև կարող է նաև խնդիր դրվել սահմանել և կիրարկել միջոցառումներ վատ վերաբերմունքի կրկնակի դրսևորումների կանխարգելման նպատակով:

Կանխարգելիչ միջոցառումներ կիրառելիս քննչական մարմինների դերը լուսաբանված է երկուստեք՝ Ստամբուլյան սկզբունքներում[2] և CEHRC-ում:[3]

Արդյունավետության որոշումը. առանցքային չափանիշները

Թեև Ստրասբուրգի դատարանի և այլ միջազգային մարմինների կողմից և ակտերում կիրառվող եզրութաբանությունը կարող է տարբեր լինել,[4] սակայն համընդհանուր չափանիշները ներառում են անկախությունը և անկողմնակալությունը, ամբողջականությունը, անհապաղությունը, համապատասխան իրավասությունը, տուժողի ներգրավվածությունը և հասարակական վերահսկողությունը:

---

1 *Barabanshchikov*. v. *Russia*, 2009 թվականի հունվարի 8-ի վճիռ, գանգատ թիվ 36220/02, կետ 54:

2 Ստամբուլյան սկզբունքների 1.b սկզբունք:

3 CEHRC-ի դիրքորոշումը, կետ 22:

4 Տե՛ս CPT-ի գործունեության վերաբերյալ 14-րդ ընդհանուր զեկույց, CPT/Inf (2004) 28 կետեր 31-36, Ստամբուլյան արձանագրություն, կետեր 79-82, CEHRC-ի դիրքորոշումը, կետեր 62-79:

Անկախությունը և անկողմնակալությունը

Քննությունների իրականացմանը ներգրավված պաշտոնատար և որոշում կայացնող բոլոր անձինք պետք է անկախ լինեն քննվող փաստերի հետ առնչություն ունեցող անձանցից: Սա պահանջում է անկախության գործնական պայմանների առկայություն, այլ ոչ միայն ենթակարգության կամ ինստիտուցիոնալ հարաբերությունների բացակայություն:

Հաճախ քննություն իրականացնող անձինք կարող են սերտ համագործակցություն ունենալ ոստիկանության համապատասխան ծառայության հետ: Նման իրավիճակ առկա է եղել Ռումինիայի զինվորական դատախազության վերաբերյալ գործով: Քննությունն իրականացնող անձինք ծառայել են նույն զինվորական համակարգում, ինչ քննության ենթարկվող ոստիկանները:[1]

Քննությունների իրականացմանը ներգրավված պաշտոնատար և որոշում կայացնող բոլոր անձինք պետք է անկողմնակալ լինեն: Մասնավորապես, նրանք չպետք է առնչված լինեն ենթադրյալ տուժողների վերաբերյալ կոնկրետ գործով իրականացված քննություններին կամ կայացված որոշումներին:

Միջազգային իրավական ակտերը հանգամանորեն չեն անդրադառնում քննություն իրականացնող անձանց անկախության ակնհայտ պահանջին, դա կարգավորվում է Ստրասբուրգի դատարանի նախադեպային իրավունքով:[2] Բացի դրանից, քննություն իրականացնող մարմինները հաճախ երկակի դերակատարություն են ունենում ենթադրյալ տուժողների դեմ հարուցված գործերով, քանի որ պատասխանատու են նաև վատ վերաբերմունքի մասին նրանց հայտարարությունների քննության համար.

«[Դատարանը] զարմացած է այն հանգամանքից, որ 2001 թվականի օգոստոսի 9-ի մասնագիտական փորձաքննությունը նշանակ-

---

1 Տե՛ս *Barbu Anghelescu* v. *Romania*, 2004 թվականի հոկտեմբերի 5-ի վճիռ, գանգատ թիվ 46430/99, կետ 67:

2 Տե՛ս *97 members of the Gldani Congregation of Jehovah's Witnesses and 4 Others* v. *Georgia*, 2007 թվականի մայիսի 3-ի վճիռ, գանգատ թիվ 71156/01, կետ 117:

վել էր ոստիկանության նույն քննիչի՝ տիկին Զ.-ի կողմից, ով հարցաքննել էր դիմողին նրա ծերբակալությունից հետո և հավանական է, որ ենթադրյալ ծեծի ականատեսը եղած լիներ...»:[1]

CPT-ն նմանապես ընդգծել է, որ «շահերի բախում կարող է առկա լինել այն ժամանակ, երբ ենթադրվող վատ վերաբերմունքի քննությունն իրականացնող անձը ներգրավված լինի վատ վերաբերմունքի մասին հայտարարություն տված անձի վերաբերյալ քրեական գործի քննությանը»:[2]

Ամբողջականությունը

Վատ վերաբերմունքի քննությունը պետք է ներառի համապատասխան դեպք(եր)ի վերաբերյալ ապացույցների պահպանությունն ապահովելու նպատակով բոլոր ողջամիտ քայլերի ձեռնարկումը:

Ամբողջականության չափանիշն ապահովելու համար անհրաժեշտ քննչական գործողությունների սպառիչ ցանկ հնարավոր չէ նախատեսել: Սակայն Ստրասբուրգի դատարանի կողմից զարգացվել է «ողջամիտ բոլոր քայլերը» ձեռնարկելու կամ պատշաճ ջանասիրություն ցուցաբերելու ընդհանուր պահանջը: Իր վճիռներում հաճախ նշում է ցանկալի միջոցառումների բացատրական և ոչ սպառիչ ցանկ.

«Պաշտոնատար անձինք պետք է ձեռնարկեն հնարավոր բոլոր ողջամիտ քայլերն ապահովելու համար միջադեպին վերաբերող ապացույցների պահպանումը, ներառյալ, inter alia, հայտարարության վերաբերյալ ենթադրյալ տուժողի, ականատես վկաների ցուցմունքները, դատաբժշկական ապացույցները և, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ բժշկական հավաստագրեր՝ համապատասխանաբար ապահովելու համար վնասվածքների ամբողջական և հստակ արձանագրումը և, մասնավորապես՝ վնասվածքների պատճառների վերաբերյալ բժշկական եզրակացությունների օբյեկտիվ վերլուծությունը: Քննության յուրաքանչյուր թերացում, որը կհան-

---

1 *Barabanshchikov*. v. *Russia*, 2009 թվականի հունվարի 8-ի վճիռ, գանգատ թիվ 36220/02, կետ 48: Տե՛ս նաև *Toteva* v. *Bulgaria*, 2004 թվականի մայիսի 19-ի վճիռ, գանգատ թիվ 42027/98, կետ 63:

2 2005 թվականի մայիսի 23-ից հունիսի 3-ը Ալբանիա կատարած այցի արդյունքում կազմված CPT-ի զեկույցը, CPT/Inf (2006) 24, կետ 50:

գեցնի վնասվածքների պատճառների և պատասխանատու անձի բացահայտման հնարավորության թուլացմանը, կարող է դիտվել որպես այս չափանիշներին հակասող»:[1]

Այլ միջազգային իրավական ակտեր, որպես կանոն, մեկնաբանում են այն միջոցները, որոնք ակնկալելի են:[2]

Պահանջվող քննչական միջոցառումների և ապացույցների ցուցակի մեջ ներառված են.

Եվրոպական չափանիշներում ներկայացված՝ հիմնական քննչական միջոցառումների ցանկը նկարագրական է: Այն հիմնված է Ստրասբուրգի դատարանի նախադեպային իրավունքում և CPT-ի այցերի արդյունքում կազմված զեկույցներում առկա տիպական օրինակների վրա:

- **ենթադրյալ տուժողների մանրամասն և ամբողջական հայտարարությունները, որոնք ձեռք են բերվել համապատասխան աստիճանի ջանադրությամբ:**

Շատ դեպքերում տուժողների հարցաքննություն կամ ընդհանրապես չի իրականացվում կամ պաշտոնատար անձանց կողմից չեն պարզաբանվում առանձին դրույթներ, որոնք կոնկրետ հանգամանքներում առանցքային են: Նման խախտումներն արժանացել են Ստրասբուրգի դատարանի քննադատությանը.

«Հատկանշական է նաև այն, որ դիմողը կապտուկների ծագման առնչությամբ չի հարցաքննվել ո՛չ այն ժամանակ, երբ հայտարարություն է ներկայացրել այն մասին, որ Կրինել Մ.-ն ծեծել է իրեն, ո՛չ այն բանից հետո, երբ նա դատախազին բողոք է ներկայացրել այն մասին, որ ծեծի է ենթարկվել ոստիկանի կողմից: Նմանապես, ոստիկաններից ոչ ոքից, նաև ով արձանագրել էր, որ դիմողը ոստիկանության բաժին բերվել է կապտուկներով, չի պարզվել, թե ինչու նա իր կապտուկների ծագման մասին չի հարցաքննվել ո՛չ 1997 թվականի հուլիսի 4-ին ոստիկանության բաժին բերվելու ժամանակ, ո՛չ

---

1 *Bati and Others* v. *Turkey*, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռ, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, կետ 134:

2 Ստամբուլյան արձանագրություն, կետեր 88-106, CEHRC-ի դիրքորոշում, կետ 69, CPT-ի գործունեության վերաբերյալ 14-րդ ընդհանուր զեկույց, CPT/Inf (2004) 28, կետ 33:

դրանից հետո, երբ նրանք պարզել են, որ նա հիվանդանոցում է գտնվել: Պաշտոնատար անձանց կողմից որևէ բացատրություն չի ներկայացվել, թե ինչու քայլեր չեն ձեռնարկվել պարզելու համար Կրիմել Մ.-ի կողմից ծեծված լինելու ենթադրյալ հանգամանքը»:[1]

Հոգեբանական վատ վերաբերմունքից տուժած անձանց խոցելիությունը, մասնավորապես, պահանջում է, որ նրանք հարցաքննվեն առանձնահատուկ հոգատարությամբ: Ստամբուլյան արձանագրությունն այս կապակցությամբ մանրամասն դատողություններ է պարունակում:[2]

- **Պատասխանատու անձանց բացահայտման համար անհրաժեշտ համապատասխան հարցաքննությունները և, անհրաժեշտության դեպքում, առերեսումները և այլ առանձնահատուկ քննչական գործողությունները:**

Ենթադրյալ իրավախախտների և վատ վերաբերմունքի կապակցությամբ իրականացվող բոլոր քննությունների այլ պարտադիր տարրերի բացահայտմանն ու հարցաքննությանն ուղղված իրական ջանքեր: Իր նախադեպային իրավունքում Ստրասբուրգի դատարանն այս կապակցությամբ բազմաթիվ թերություններ է արձանագրել.

«Դատարանի համար հատկապես զարմանալի է այն, որ թեև դիմողը 1995 թվականի մարտի 9-ին կրկնել է, որ կարող է ճանաչել քրեակատարողական հիմնարկի համապատասխան աշխատակցին, ոչինչ չի արվել նրան այդ հնարավորությունն ընձեռելու համար, և միայն ինն օր անց պետական մեղադրողի գրասենյակը պահանջել և ստացել է իրավունք գործն արխիվացնելու ոչ թե այն հիմքով, որ հայտարարությունը հիմնավորված չէ, այլ այն պատճառով, որ պատասխանատու անձը չի հայտնաբերվել»:[3]

---

1 *Cobzaru* v. *Romania*, 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռ, գանգատ թիվ 48254/99, կետ 71:

2 Ստամբուլյան արձանագրություն, կետեր 120-160: Որպես տուժողների պաշտպանության լրացուցիչ միջոցներ տե՛ս Եվրոպական չափանիշների 4.4.3-րդ, 4.4.4-րդ կետերը և ստորև նշված համապատասխան մեկնաբանությունները:

3 *Labita* v. *Italy*, 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռ, գանգատ թիվ 26772/95, կետ 72: Տե՛ս նաև *Bati and Others* v. *Turkey*, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռ, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, կետ 142, *Barabanshchikov*. v.. *Russia*, 2009 թվականի հունվարի 8-ի վճիռ, գանգատ թիվ 36220/02, կետ 44:

- **ենթադրյալ տուժողների՝ ֆիզիկական և հոգեկան վիճակի՝ խորհրդապահական և հստակ բժշկական (նախընտրելի է դատաբժշկական) հետազոտություն: Սրանք պետք է իրականացվեն անկախ և համապատասխան պատրաստվածություն ունեցող անձնակազմի կողմից, ովքեր կարող են ախտորոշել վնասվածքների պատճառները և դրանց համապատասխանությունը հայտարարություններին:**
- **Այլ բժշկական ապացույցները, այդ թվում՝ կալանավորման վայրերի և բժշկական հիմնարկների կողմից կազմված արձանագրությունները,**

Ստամբուլյան արձանագրությունը շեշտադրում է ենթադրյալ տուժողների ֆիզիկական և հոգեբանական հետազոտության, ախտորոշիչ թեստերի և միասնական փաստաթղթավորման կարևորությունը:[1]

«Բժշկական հետազոտությունը պետք է իրականացվի՝ անկախ խոշտանգումից անցած ժամանակահատվածի տևողության, սակայն եթե ենթադրվում է, որ այն տեղի է ունեցել նախորդ վեց շաբաթների ընթացքում, ապա նման հետազոտությունը պետք է անհապաղ իրականացվի՝ նախքան ակնհայտ հետքերի անհետացումը: Հետազոտությունը պետք է ներառի վնասվածքների և հիվանդությունների բուժման, հոգեբանական օգնության, խորհրդատվության և հսկողության անհրաժեշտության գնահատումը: Ենթադրյալ խոշտանգման տուժողի հոգեբանական գնահատումը միշտ անհրաժեշտ է և կարող է հանդիսանալ ֆիզիկական հետազոտության մաս կամ, եթե չկան ֆիզիկական նշաններ, կարող է ինքնին իրականացվել (հոգեբանական գնահատականի նկարագրությունը տե՛ս վեցերորդ գլխում)».[2]

Համանման միտումով՝ Ստրասբուրգի դատարանի վճիռները և CPT-ի այցերի արդյունքում կազմվող զեկույցներում առկա դատողությունները լուսաբանում են այս մարմինների պահանջները.

«Ապա Դատարանը կրկնում է, որ պատշաճ բժշկական հետազոտությունները հանդիսանում են վատ վերաբերմունքի դեմ անհրաժեշտ երաշխիքներ: Դատական բժիշկը պետք է պաշտոնապես և de

---

[1] Տե՛ս Ստամբուլյան արձանագրությունը, գլուխներ V-V.I, լրացումներ II-IV:
[2] Ստամբուլյան արձանագրություն, կետ 104:

facto անկախություն ունենա, ունենա մասնագիտական կրթություն և իրավասությունների լայն շրջանակ (տե՛ս Akkoç v. Turkey, թիվ 22947/93 և 22948/93, կետ 55 և կետ 118, ՄԻԵԿ 2000-X): Վատ վերաբերմունքի մասին հայտարարություն տված անձի հետազոտության արդյունքում զեկույցի կազմումից հետո չափազանց կարևոր է, որ բժիշկն արձանագրի վատ վերաբերմունքի մասին պատմության հետևողականության աստիճանը [...]»:[1]

«Նաև հղումներ պետք է արվեն ավելի ուշ իրականացված նախնական քննությանը, որը հարուցվել է 2006 թվականի հունիսի 2-ին «Բ.-ի» նկատմամբ: Այս կալանավորը տեղափոխվել էր թիվ 1 ՀՊՎ 2006 թվականի մայիսի 23-ին, և բերվելուց հետո իրականացված բժշկական հետազոտության արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ մարմնական վնասվածքներ, որոնք նրա հայտարարությամբ ինքն ստացել էր ORB-2 աշխատակիցների կողմից ծեծի ենթարկվելու արդյունքում: Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը կայացվել է IVS-ի բժշկական գրանցամատյանի և ֆելդշերի բացատրության հիման վրա, որոնց համաձայն՝ «Բ.-ն» 2006 թվականի մայիսի 13-ին IVS բերվելուց հետո ցույց է տվել ծերբակալման ժամանակ ստացած վնասվածքները. որևէ դատաբժշկական հետազոտություն երբևէ չի պահանջվել»:[2]

- **Համապատասխան վկաների ցուցմունքները, հնարավորության դեպքում, ներառյալ կալանավորված այլ անձանց, կալանավայրի վարչակազմի, հասարակայնության ներկայացուցիչների, իրավապահ մարմինների և այլ պաշտոնատար անձանց ցուցմունքները:**

Վատ վերաբերմունքը, որպես կանոն, տեղի է ունենում գաղտնի: Այնուամենայնիվ, քննությունը պետք է իրական ջանքեր գործադրի քննարկվող միջադեպի հնարավոր ականատեսներից ցուցմունքներ ստանալու համար կամ ունակ լինի լույս սփռել դրան զուգակցող

---

1 *Barabanshchikov*. v. *Russia*, 2009 թվականի հունվարի 8-ի վճիռ, գանգատ թիվ 36220/02, կետ 59:

2 Ռուսաստանի Դաշնության Չեչնիայի Հանրապետության վերաբերյալ 2007 թվականի մարտի 13-ի CPT-ի Հրապարակային հայտարարության առաջին հավելվածը, CPT/Inf (2007) 17, կետ 48:

հանգամանքների վրա: Այս պահանջներն արտացոլված են Ստամբուլյան արձանագրության մեջ, որի համաձայն.

«Տեղեկություն պետք է ձեռք բերվի քննությանը հետաքրքրող շենքում կամ վայրում ներկա գտնված յուրաքանչյուր անձից պարզելու համար, թե նրանք հանդիսացել են, արդյոք, ենթադրյալ խոշտանգման միջադեպի վկա»:[1]

Հավասարապես, Դատարանը հաճախ մատնանշել է համապատասխան անձանց չհարցաքննելու հետ կապված խախտումը.

«Քննիչը չի փորձել հայտնաբերել և հարցաքննել 1998 թվականի սեպտեմբերի 10-ից 19-ը Բոգորոդսկ և Լենինսկի ոստիկանության բաժիններում դիմողի հետ կալանավորված անձանց, ովքեր կարող էին ինքնասպանության փորձից առաջ դիմողի վարքագծի վերաբերյալ օգտակար տեղեկության տիրապետել, և պարզ չէ, թե Վ.-ն՝ դիմողի հետ նույն խցում պահվող անձանցից մեկը, երբևէ հարցաքննվել է քննիչի կողմից»:[2]

- **Դեպքի տեղի զննությունն իրեղեն ապացույցներ, այդ թվում՝ վատ վերաբերմունքի դրսևորման ժամանակ կիրառված գործիքներ, մատնահետքեր, մարմնի արտադրած հեղուկներ և հյուսվածքներ հայտնաբերելու նպատակով: Զննությանը պետք է մասնակցեն դատաբժշկական և այլ ոլորտի մասնագետներ, ովքեր կարող են վերցնել և հետազոտել ապացույցներ, համապատասխան բանավոր նկարագրության հիման վրա ուրվագծել անձի դիմանկարը և/կամ վերականգնել դեպքի հանգամանքները:**

Դեպքի տեղի զննության արդյունքում ձեռք բերված ապացույցներն առանցքային նշանակություն ունեն յուրաքանչյուր դեպքի հանգամանքները պարզելու համար և հատկապես կարևոր են վատ վերաբերմունքի դեպքերի քննության ժամանակ, ինչպես ընդգծվել է Ստրասբուրգի դատարանի[3] և CPT-ի կողմից:[1] Դեպքի տեղի զննու-

---

1 Ստամբուլյան արձանագրություն, կետ 103:

2 *Mikheev* v. *Russia*, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռ, գանգատ թիվ 77617/01, կետ 112: Տե՛ս նաև *Barabanshchikov* v. *Russia*, 2009 թվականի հունվարի 8-ի վճիռ, գանգատ թիվ 36220/02, կետ 62:

3 *Altun* v.. *Turkey*, 2004 թվականի հունիսի 1-ի վճիռ, գանգատ թիվ 24561/94, կետ 73: Տե՛ս նաև *Mikheev* v. *Russia*, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռ, գանգատ թիվ 77617/01, կետ 112:

թյան արդյունքում ձեռք բերված ապացույցների վերաբերյալ Չափանիշները ևս վկայակոչում են Ստամբուլյան արձանագրության (ոչ սպառիչ) դրույթները.

«Բոլոր ապացույցները պետք է պատշաճ կերպով հավաքվեն, վերցվեն, փաթեթավորվեն, կնքվեն և տեղադրվեն անվտանգ պահպանման վայրերում կանխելու համար դրանց փչացումը, վնասումը կամ կորուստը: Եթե խոշտանգումը համեմատաբար վերջերս է տեղի ունեցել և համապատասխան այնպիսի ապացույցներ, ինչպիսիք են՝ մարմնի արտադրած հեղուկները (արյուն կամ սերմնահեղուկ), մազ, հյուսվածք կամ մանրաթելեր, պահպանվել են, ապա դրանք պետք է վերցվեն, կնքվեն և պատշաճ կերպով պահպանվեն: Յուրաքանչյուր գործիք, որը կարող է օգտագործված լինել խոշտանգման ժամանակ, անկախ այն հանգամանքից, թե դա նախատեսված է եղել այդ նպատակով օգտագործելու, թե օգտագործվել է կոնկրետ իրավիճակում, պետք է վերցվի և պահպանվի: Եթե դեպքը համեմատաբար վերջերս է տեղի ունեցել, թողնված մատնահետքերը պետք է վերցվեն և պահպանվեն: Պետք է պատրաստվի այն շենքի կամ վայրի՝ նշագրված, մասշտաբային գծագիրը, որտեղ ենթադրվում է, որ խոշտանգում է տեղի ունեցել, այդ գծագրում պետք է ցույց տրված լինեն համապատասխան բոլոր մանրամասները, ինչպիսիք են շենքի հարկերի, սենյակների, մուտքերի, պատուհանների, կահույքի դասավորությունը և շրջակայքը: Նույնն անհրաժեշտ է արձանագրել նաև գունավոր նկարներով: Պետք է կազմվի ենթադրյալ խոշտանգման վայրում գտնված բոլոր անձանց ինքնությունը, այդ թվում՝ նրանց ամբողջական անունը, հասցեն և հեռախոսի համարը կամ այլ կոնտակտային տեղեկությունը պարզելու վերաբերյալ արձանագրություն: Եթե խոշտանգումը համեմատաբար վերջերս է տեղի ունեցել, ապա խոշտանգման վերաբերյալ հայտարարություն տված անձի հագուստը պետք է նկարագրվի և լաբորատոր փորձաքննության

---

[1] Ռուսաստանի Դաշնության Չեչնիայի Հանրապետության վերաբերյալ 2007 թվականի մարտի 13-ի CPT-ի Հրապարակային հայտարարության առաջին հավելվածը, CPT/Inf (2007) 17, կետ 49:

ենթարկվի հնարավորության դեպքում մարմնի մասեր կամ այլ իրեղեն ապացույցներ ծեռք բերելու նպատակով»:[1]

- Ձերբակալման արձանագրությունների, որոշումների, գործի նյութերի և կոնկրետ դեպքի վերաբերյալ այլ փաստաթղթերի ուսումնասիրությունը:

Ձերբակալման արձանագրությունները, գործի նյութերը և կալանավորմանը, ուժի կիրառմանը կամ այլ գործողությունների կատարմանն առնչվող այլ փաստաթղթերը պահպանելու պարտականությունը պայմանավորված է քննության ընթացքում նման նյութերի կիրառման անհրաժեշտությամբ:[2] Համապատասխանաբար, Ստամբուլյան արձանագրությունը սահմանում է, որ.

«Համապատասխան յուրաքանչյուր թուղթ, արձանագրություն կամ փաստաթուղթ պետք է պահպանվի որպես ապացույց կիրառելու կամ դատաձեռագրաբանական փորձաքննության համար»:[3]

Ապացույցները պետք է հավաքվեն և քննությունները պետք է իրականացվեն ներպետական դատավարական կանոններին համապատասխան: Դատավարական խախտումները, որոնք հանգեցրել են հետագա իրավական ընթացակարգերի խաթարման, հանդիսանում են այնպիսի խախտումներ, որոնք պահանջում են միջադեպի վերաբերյալ ապացույցների ապահովման ողջամիտ բոլոր քայլերի իրականացում:

Սահմանելով վատ վերաբերմունքի համար պատասխանատու անձանց պատժելու նպատակը՝ քննության ընթացքում թույլ տրված դատավարական խախտումները, որոնց արդյունքում ոչ պիտանի են դառնում այդ անձանց դեմ հավաքված ապացույցները, հանգեցնում են արդյունավետ քննության չափանիշների չպահպանման: Այս Չափանիշն արտացոլում է Ստրասբուրգի դատարանի դատական պրակտիկան:[4]

---

1 Ստամբուլյան արձանագրություն, կետ 103:

2 Տե՛ս նաև Եվրոպական չափանիշների 2.3.1-րդ կետը և վերոնշյալ չափանիշները:

3 Ստամբուլյան արձանագրություն, կետ 103:

4 *Maslova and Nalbandov* v. *Russia*, *Mikheev* v. *Russia*, 2008 թվականի հունվարի 24-ի վճիռ, գանգատ թիվ 839/02, կետ 95:

Վատ վերաբերմունքի վերաբերյալ տեղեկությունը և ապացույցները պետք է ձեռք բերվեն ամբողջական, հետևողական և օբյեկտիվորեն:

Քննություններն ի սկզբանե պետք է իրականացվեն ամբողջական, հետևողական և փոխկապակցված եղանակով: Ինչպես նշել է CPT-ն, պետք է խուսափել «հապճեպ կամ անհիմն եզրակացություններից».

«Վատ վերաբերմունքի մասին հայտարարությունների պատշաճ գնահատումը հաճախ ոչ այնքան ակնհայտ հարց է հանդիսանում: Վատ վերաբերմունքի որոշ ձևեր (ինչպիսիք են խեղդումը կամ էլեկտրահարող սարքի կիրառումը) ակնհայտ հետքեր չեն թողնի, եթե գործադրվել են որոշակի հմտությամբ: Նման կերպ, եթե անձին ստիպեն մի քանի ժամ անհարմար դիրքով ուղղակի կամ ծնկաչոք կանգնել կամ քնից զրկեն, ապա դա դժվար թե հստակ տեսանելի հետքեր թողնի: Անգամ մարմնին հասցված հարվածները կարող են թեթև ֆիզիկական հետքեր թողնել, որոնք դժվար է նկատել և որոնք շուտ անհետանում են: Հետևաբար, երբ վատ վերաբերմունքի նման ձևերի մասին դիմումները հասնում են դատախազական կամ դատական մարմիններին, վերջիններս պետք է հատկապես զգույշ լինեն, որպեսզի մեծ ուշադրություն չդարձնեն ֆիզիկական հետքերի բացակայությանը: Անգամ a fortiori դա վերաբերում է հոգեկան բնույթի վատ վերաբերմունքի մասին հայտարարություններին, այն դեպքում, երբ բողոքարկվող վատ վերաբերմունքն ունի առավելապես հոգեբանական բնույթ (սեռական նվաստացում, ծերբակալված անձի և/կամ նրա ընտանիքի կյանքի կամ ֆիզիկական ամբողջականության նկատմամբ սպառնալիք և այլն): Վատ վերաբերմունքի մասին հայտարարությունների պատշաճ գնահատման համար կարող է պահանջվել բոլոր համապատասխան անձանցից ցուցմունքներ վերցնելը և ժամանակին տեղում ստուգում և/կամ բժշկական հետազոտություն կատարելը»:[1]

---

[1] CPT-ի գործունեության վերաբերյալ 14-րդ ընդհանուր զեկույց, CPT/Inf (2004) 28 կետ 29:

«Արժանահավատության» նկատմամբ Եվրոպական դատարանի մոտեցումը երևում է հետևյալ վճռից.

«[...] Քննիչը պետք է ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները որպես արժանահավատ գնահատի՝ չնայած այն հանգամանքին, որ նրանց ցուցմունքները կարող են հանդիսանալ պաշտպանության ռազմավարության մաս և նպատակ հետապնդել կասկած հարուցելու դիմողի հայտարարության արժանահավատության նկատմամբ: Դատարանի կարծիքով, քննության իրականացումը սահմանում է ցուցմունքների գնահատման այլ չափանիշներ այն ժամանակ, երբ սուբյեկտիվ են թվում դիմողի և ոչ թե ոստիկանության աշխատակցի տված ցուցմունքները: Վերջինիս ցուցմունքների արժանահավատությունը ևս պետք է կասկածի տակ դրվի, քանի որ քննությունն իրականացվում է պարզելու համար, թե պաշտոնատար անձինք արդյոք ենթակա են պատասխանատվության կարգապահական կամ քրեական մեղադրանքների հիմքով However, t (տե՛ս Ognyanova and Choban v. Bulgaria, թիվ 46317/99, կետ 99, 2006 թվականի փետրվարի 23)»:[1]

Այս մոտեցումն ուղղակիորն համապատասխանում է CEHRC-ի դիրքորոշմանը, որն ընդգծում է պաշտոնատար անձանց պարտականությունը.

«քննությունների շարք իրականացնել հիմնավոր կասկածի հիման վրա և չանտեսել բողոքը հիմնավորող ապացույցը կամ անքննադատ կերպով ընդունել բողոքը ժխտող ապացույցը, մասնավորապես՝ ոստիկանի ցուցմունքը»:[2]

Քննությունները պետք է համակողմանի լինեն

Քննությունները պետք է համակողմանի լինեն, հատկապես, եթե դրանցում ներառված են մեկից ավելի միջադեպեր կամ փոխկապակցված փաստերի ամբողջություն: Սա արտացոլում է CPT-ի այցերի արդյունքում կազմվող զեկույցների բովանդակությունը.

---

[1] *Barabanshchikov* v. *Russia*, 2009 թվականի հունվարի 8-ի վճիռ, գանգատ թիվ 36220/02, կետեր 46, 59, 61:

[2] CEHRC-ի դիրքորոշումը, կետ 69:

«Քննությունը ևս պետք է բազմակողմանի լինի: CPT-ն բախվել է այնպիսի իրավիճակների, երբ, չնայած վատ վերաբերմունքի հետ կապված բազմաթիվ միջադեպերի և փաստերի վերաբերյալ հաղորդումներին, քննության ծավալը չափազանց սահմանափակ է եղել, կարևոր դրվագներ և դրանց ուղեկցող հանգամանքներ, որոնք վատ վերաբերմունքի մասին էին վկայում, թողնվել են առանց քննության»:[1]

Փաստերի նման ամբողջության օրինակ է հանդիսանում այն, երբ վատ վերաբերմունքը դրսևորվում է ոստիկանության՝ ուժի կիրառում ենթադրող պլանավորված գործողությունների ժամանակ: Քննություն իրականացնող անձինք պետք է պարզեն, թե գործողությունը (օպերացիան) պլանավորվել և իրականացվել է ուժի սահմանազանցող կիրառման համապատասխան ռիսկի գնահատմամբ և նախազգուշական միջոցների ձեռնարկմամբ, և ապա ուսումնասիրեն այն, թե գործողությունը եղել է, արդյոք, հետապնդվող ամբողջական նպատակին համաչափ:[2]

Չափանիշները նաև ենթադրում են անհապաղության անհրաժեշտություն նախնական քննությունից մինչև վերջնական իրավական ընթացակարգ ընկած ժամանակահատվածում: Դրանք չեն նախատեսում ժամանակային սահմանափակումներ, սակայն կիրառվող չափանիշները պետք է արտացոլեն ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ Դատարանի մոտեցումները, որոնցում Դատարանը մեկնաբանել է «ողջամիտ ժամկետ» հասկացությունը՝ որպես «առանձնահատուկ ջանասիրություն» և «մանրամասն քննություն» պահանջող երևույթ:[3] Գնահատականը շատ դեպքերում կախված է գործի հանգամանքներից:[4]

---

[1] CPT-ի գործունեության վերաբերյալ 14-րդ ընդհանուր զեկույց, CPT/Inf (2004) 28 կետ 33: Տե՛ս նաև 2003 թվականի հուլիսի 13-ից 18-ն Ալբանիա կատարած այցի արդյունքում կազմված զեկույցը, CPT/Inf (2006) 22, կետ 30:

[2] Տե՛ս *Tzekov* v. *Bulgaria*, 2006 թվականի փետրվարի 23-ի վճիռ, գանգատ թիվ 45500/99 և *Nachova* v. *Bulgaria*, 2004 թվականի փետրվարի 26-ի վճիռ, գանգատներ թիվ 43577/98 և 43579/98 հետագա հղումներով:

[3] Տե՛ս *համապատասխան փոփոխություններով Wemhoff* v. *Germany*, 1968 թվականի հունիսի 27-ի վճիռ, գանգատ թիվ 2122/64, կետ 17:

[4] Տե՛ս *համապատասխան փոփոխություններով Scott* v. *Spain*, 1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ, գանգատ թիվ 21335/93, կետ 17:

Անհապաղությունը հասարակական վստահության ապահովման բանալին է

Ստրասբուրգի դատարանը պարբերաբար ընդգծում է անհապաղության անհրաժեշտությունը հասարակայնության վստահությունը և աջակցությունը ձեռք բերելու համար: Սա երևում է *Բատիի և այլոց* գործով կայացված վճռում.

«136. Անկասկած, անհապաղության և ողջամիտ արագության պահանջն այս ենթատեքստում ենթադրվում են: Վատ վերաբերմունքի հայտարարությունների քննության ժամանակ պաշտոնատար անձանց կողմից դրսևորվող անհապաղ արձագանքը, որպես կանոն, անհրաժեշտ է իրենց կողմից օրենքի գերակայության պահպանման և գաղտնի համաձայնության ցանկացած դրսևորման կամ ոչ իրավաչափ վարքագծի հանդեպ հանդուրժողականության կանխարգելման նկատմամբ հասարակական վստահության ապահովման համար (տե՛ս, ի թիվս այլնի, Indelicato v. Italy, *թիվ 31143/96, կետ 37, 2001 թվականի հոկտեմբերի 18, և* Özgür Kılıç v. Turkey *(dec.), թիվ 42591/98, 2002 թվականի սեպտեմբերի 24)»:*

Իրավասությունը

Քննչական մարմինները պետք է լիակատար իրավասություն ունենան գործի հանգամանքները պարզելու և անհրաժեշտության դեպքում պատասխանատու անձանց բացահայտելու և պատժելու համար:
Իրավական կամ փաստական հանգամանքները չպետք է խոչընդոտեն քննությունը:

Քննչական մարմինները պետք է իրավասություն ունենան ժամանակավորապես դադարեցնել քննության տակ գտնվող անձանց կողմից ծառայության կամ առանձին պարտականությունների իրականացումը:
Քննչական մարմինները պետք է հնարավորություն ունենան դիմելու պաշտպանության միջոցների՝ համոզված լինելու համար, որ ենթադրյալ տուժողները և քննությանը ներգրավված

այլ անձինք չեն ահաբեկվում կամ այլ կերպ համոզվում չմասնակցել քննությանը:

Չափանիշները չեն պահանջում, որպեսզի վատ վերաբերմունքի կատարման մեջ կասկածվող անձինք ձերբակալվեն, սակայն քննչական մարմինները պետք է գոնե իրավասու լինեն քննության ընթացքում ժամանակավորապես դադարեցնել նրանց գործունեությունը կամ կիրառել այլ միջոցներ: Կասկածյալների գործունեությունը ժամանակավորապես չդադարեցնելը քննադատվել է Դատարանի կողմից.

«Դատարանը նաև ընդգծում է քննության կամ դատական վարույթի տակ գտնվող պաշտոնատար անձի գործունեության ժամանակավոր դադարեցման, ինչպես նաև դատապարտվելու դեպքում նրա՝ աշխատանքից հեռացման կարևորությունը (տե՛ս Խոշտանգումների դեմ Միավորված ազգերի կազմակերպության կոմիտեի եզրակացությունները և հանձնարարականները. Թուրքիա, 2003 թվականի մայիսի 27, CAT/C/CR/30/5)»:[1]

Քննչական համակարգեր

Քննության տարբեր ձևերը պետք է ներառվեն փոխկապակցված և փոխներազդող համակարգում:

Շատ իրավական համակարգերում քրեական, կարգապահական և վարչական ընթացակարգերն իրականացվում են տարբեր օրենսդրական շրջանակներում և տարբեր պաշտոնատար անձանց կողմից: Վատ վերաբերմունքի վերաբերյալ գործերի բարդությունը հաճախ պահանջում է համախմբված և զուգահեռ մոտեցում, որը ներառում է այս շրջանակների ակնհայտ փոխազդեցություն: Ստրասբուրգի դատարանն ընդգծում է նման զուգահեռ գործողությունների անհրաժեշտությունը.

«Դատարանը նշում է, որ ո՛չ քրեական վարույթի ընթացքում, ո՛չ այն ժամանակ, երբ քրեական դատավարության արդյունքները պարզ են դարձել, ոստիկանության աշխատակիցների նկատմամբ

[1] *Yaman* v. *Turkey*, 2004 թվականի նոյեմբերի 2-ի վճիռ, գանգատ թիվ 32446/96, կետ 55: Տե՛ս նաև *Bekos and Koutropoulos* v. *Greece*, 2005 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռ, գանգատ թիվ 15250/02, կետ 54:

որևէ կարգապահական միջոցառում չի իրականացվել (համեմատելու համար տե՛ս Fazıl Ahmet Tamer and Others v. Turkey, թիվ 19028/02, կետ 97, 2007 թվականի հուլիսի 24)»:[1]

Անկախ և արդյունավետ ոստիկանական բողոքարկման մարմինը պետք է օժտված լինի վատ վերաբերմունքի վերաբերյալ հայտարարությունների քննության իրավասությամբ:

Թեև Ստրասբուրգի դատարանն այնքան հեռու չի գնացել, որ հիմնավորի ոստիկանության ղեկավարության ներքո հատուկ և անկախ քննչական մարմինների ստեղծումը, սակայն մի քանի միջազգային պայմանագրեր արդեն արել են դա: Օրինակ՝ Ստամբուլյան արձանագրությունը.

«85. Այն դեպքերում, երբ պաշտոնատար անձինք կասկածվում են խոշտանգմանը մասնակից լինելու մեջ, ներառյալ այն դեպքերը, երբ խոշտանգումն իրականացվում է նախարարների, նախարարների օգնականների կողմից կամ նախարարների, նախարարություններում, զինվորական համակարգերում ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց տեղեկությամբ կամ նշված անձանց թողտվությամբ, ապա օբյեկտիվ և անկողմնակալ քննությունը հնարավոր չի կարող լինել, եթե քննություն իրականացնող հատուկ հանձնաժողով չձևավորվի: Քննություն իրականացնող հանձնաժողովի ձևավորումը կարող է անհրաժեշտ լինել նաև այն դեպքում, երբ քննիչների մասնագիտական որակները և անկողմնակալությունը կասկածի տակ են դրված»:[2]

Ենթադրվում է, որ նման մարմինները պետք է անկախ լինեն և ապահովված համապատասխան տեխնիկական և վարչական անձնակազմով: Նրանց նաև պետք է անկողմնակալ իրավական խորհրդատվություն տրամադրվի հաստատելու համար, որ քննության արդյունքում ձեռք են բերվել թույլատրելի ապացույցներ, որոնք կարող են օգտագործվել քրեական դատավարության ընթացքում: Մասնա-

---

1 *Ali and Ayşe Duran* v. *Turkey*, 2008 թվականի ապրիլի 8-ի վճիռ, գանգատ թիվ 42942/02, կետ 70: Տե՛ս նաև *Okkali* v. *Turkey*, 2006 թվականի հոկտեմբերի 16-ի վճիռ, գանգատ թիվ 52067/99, կետ 71:

2 Ստամբուլյան արձանագրություն, կետ 85:

կից պետությունը, այսպիսով, անհրաժեշտ ռեսուրսներ և իշխանություն պետք է տրամադրի նման մարմիններին, որոնք պետք է նաև իրավասու լինեն ստանալու միջազգային իրավական և բժշկական փորձագետների աջակցությունը:[1]

Անկախ հանձնաժողովների առկայությունը կարող է հիմք տալ ասելու, որ քննություններն ի սկզբանե արդյունավետ են եղել: Իրենց զբաղեցրած դիրքով նրանք հաստատում են, որ իրենց կողմից վերհանված համապատասխան հանգամանքների հիման վրա հարուցվում են կարգապահական, վարչական և/կամ քրեական վարույթներ:[2] Բացի դրանից, ըստ CEHRC-ի դիրքորոշման՝ առաջարկվում է այս մարմիններին օժտել մեղադրանք առաջադրելու իրավասությամբ.

«Նման անկախ ոստիկանական հետապնդման համակարգեր կարող են ստեղծվել ոստիկանության համակարգում, որը գործում է IPCB-ի հովանու ներքո: Հետևելով եվրոպական մի շարք երկրներում օմբուդսմենի ինստիտուտի օրինակին, որոնք օժտված են սեփական հայեցողությամբ դատարան մեղադրանք ներկայացնելու իրավասությամբ, IPCB-ին կարող է վերապահվել հայտարարության կապակցությամբ իրականացված քննության ավարտից հետո քրեական մեղադրանք ներկայացնելու՝ համանման իրավասություն: Բնականաբար, յուրաքանչյուր մասնակից պետության սահմանադրական և իրավական համակարգը կարևոր դերակատարություն կունենա նման կարգավորման կիրառելիությունը որոշելիս: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի նաև համապատասխան երաշխիքների ապահովմանը և ոստիկանության աշխատակիցների՝ որպես քրեական դատավարությունում ներգրավված անձանց, իրավունքների պաշտպանությանը:[3]

Քննչական համակարգերը պետք է ապահովվեն համապատասխան ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներով և պատշաճ

---

[1] Տե՛ս նույն տեղում, կետ 87:
[2] Տե՛ս նույն տեղում, կետ 119: Տե՛ս նաև CEHRC-ի դիրքորոշումը, կետ 83:
[3] CEHRC-ի դիրքորոշում, կետ 22:

պատրաստված՝ իրավական, բժշկական և այլ ոլորտների մասնագետներով:

Քննչական համակարգերի պատշաճ ֆինանսավորման և ռեսուրսավորման անհրաժեշտությունը կարևորվել է երկուստեք՝ Ստամբուլյան արձանագրության և CEHRC-ի դիրքորոշման մեջ:[1] Արձանագրությունը շեշտել է, որ.

«Քննությունն իրականացնող անձինք պետք է իրենց հայեցողության տակ ունենան արդյունավետ քննության համար անհրաժեշտ բոլոր բյուջետային և տեխնիկական ռեսուրսները».[2]

Քննչական խմբի անդամները և նրանց օժանդակող փորձագետները պետք է պատշաճ կրթություն ունենան և մասնագիտացված լինեն իրենց գործունեության համապատասխան ոլորտում: Ստամբուլյան արձանագրությունը, հետևաբար, նշում է «մասնագիտական հիմնական կրթության» անհրաժեշտությունը:[3] CPT-ն նաև իր այցերի արդյունքում կազմվող զեկույցներում շեշտադրել է պատշաճ ուսուցման և մասնագիտացման կարևորությունը.

«CPT-ն կոչ է անում Ռուսաստանի իշխանություններին Չեչնիայի Հանրապետության դատախազությանը և Ուժերի միավորված խմբերի զինվորական դատախազությանը Հյուսիսային Կովկասի տարածաշրջանում «հակաահաբեկչական գործողությունների» կատարման ժամանակ վատ վերաբերմունքի, անօրինական կալանավորման և անհայտացումների կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու նպատակով տրամադրել վարչակազմ, ռեսուրսներ և անհրաժեշտ սարքավորում:

Այս կապակցությամբ Չեչնիայի Հանրապետությունում դատաբժշկական ծառայության էական ամրապնդման անհրաժեշտությունը պետք է շեշտադրվի: Ներկայումս նրանք չեն կարողանում վերոնշյալ խնդիրների կապակցությամբ իրականացվող գործունեության ժամանակ աջակցել քրեական արդարադատության համակարգին: Չեչնիայի Հանրապետության դատական բժշկության բյուրոն հանդիպում է բազմաթիվ սահմանափակումների՝ կապված ռեսուրս-

---

[1] CEHRC-ի դիրքորոշում, կետ 28:
[2] Ստամբուլյան արձանագրություն, կետ 80:
[3] Նույն տեղում, կետեր 89, 90, 131, 162, 305:

ների, սարքավորումների և աշխատակազմի հետ, և դեռևս Հանրապետության տարածքում ամբողջական դիահերձում կատարելու հնարավորություն չկա: CPT-ն հորդորում է Ռուսաստանի իշխանություններին, առաջնահերթության կարգով, անհրաժեշտ քայլեր ձեռնարկել Չեչնիայի Հանրապետության դատական բժշկության բյուրոյի պատշաճ գործունեությունն ապահովելու համար»:[1]

Ի դեպ, Դատարանը նշել է քննություններին ներգրավված մասնագետների, մասնավորապես՝ դատական բժիշկների համապատասխան ուսուցման կարևորությունը:

Վատ վերաբերմունքի վերաբերյալ քննությունը պետք է գնահատվի փոխկապակցված, միասնական, համապետական համակարգի միջոցով, որը հիմնված կլինի ներկայացված բողոքների, իրականացված քննությունների ու դատական վարույթների և կատարված պատիժների վերաբերյալ հստակ վիճակագրական տվյալների վրա:

Իրավասու պաշտոնատար անձինք պետք է շարունակաբար տեղեկացնեն հասարակական և իրավապահ մարմիններին վատ վերաբերմունքի դեպքերի կապակցությամբ իրականացվող քննությունների, վատ վերաբերմունքի բացահայտված դեպքերի քանակի և, արդյունքում՝ իրականացված գործողությունների մասին:

Արդյունավետ լինելու համար քննչական համակարգերը պետք է շարունակաբար գնահատվեն: CPT-ն, ուստի, մատնանշել է վիճակագրական տվյալների փոխկապակցված համակարգի անհրաժեշտությունը, որի միջոցով հնարավոր կլինի մշտադիտարկման ենթարկել վատ վերաբերմունքի վերաբերյալ քննությունների արդյունավետությունը.

«Վերոնշյալ տեղեկության բազմազանությունը դժվարացնում է իրավիճակի հստակ պատկերի վերհանումը: Վիճակագրական տվյալների ամբողջականացումն ինքնին գործընթացի ավարտը չէ. պատշաճ կերպով հավաքվելու և վերլուծվելու դեպքում այն կարող է միտումների հատկանիշներ պարունակել և օժանդակել այս ոլոր-

[1] Ռուսաստանի Դաշնության Չեչնիայի Հանրապետության վերաբերյալ 2003 թվականի հուլիսի 10-ի Հրապարակային հաշվետվություն:

տում քաղաքական որոշումների կայացմանը: Այս առումով ուղղակիորեն անհրաժեշտ է ներքին գործերի նախարարության և դատախազության համագործակցության ընդլայնում: CPT-ն կոչ է անում Բուլղարիայի իշխանություններին սահմանելու ոստիկանության աշխատակիցների դեմ բողոքների, նրանց նկատմամբ կիրառված կարգապահական սանկցիաների և քրեական վարույթների/սանկցիաների վերաբերյալ վիճակագրական տվյալների ամբողջականացման միասնական ազգային համակարգ»:[1]

Տեղեկացման համակարգերի ստեղծմանն ուղղված ջանքերը ևս կարևոր են վատ վերաբերմունքի կանխարգելման նպատակով հասարակական աջակցության ձևավորման համար:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունն ինստիտուցիոնալ առումով կայացած և ժամանակի քննությունն անցած մարմին է, որն իր կազմակերպման ու գործունեության տեսանկյունից միանգամայն կարող է իր գործառույթների շրջանակներում կենսագործել վատ վերաբերմունքի քննության եվրոպական չափանիշները:

Միևնույն ժամանակ հարկ է նաև արձանագրել, որ, ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից վատ վերաբերմունքի քննության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներ, որոնք ոչ միայն կբարելավեն այդ տեսակ հանցագործությունների քննության որակը, այլ նաև կնպաստեն ՀՀ քննչական պրակտիկայում եվրոպական չափանիշների տեղայնացմանը, ինչու չէ նաև կնպաստեն ՀՀ-ում պայքարը անպատժելիության դեմ պայքարի ուժեղացմանը:

Այս առումով ՀՀ հատուկ քննչական ծառայության գործունեության արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև դրա հետագա կատարելագործումն ուղղակի երաշիքների դեր են կատարում վատ վերաբերմունքի քննության արդյունավետության ապահովման համար: «Ի լրումն վատ վերաբերմունքի քննու-

---

[1] 2002 թվականի ապրիլի 17-26-ը Բուլղարիա կատարած այցի արդյունքում կազմված CPT-ի Զեկույցը, CPT/Inf (2004) 21, կետ 24:

թյան արդյունավետության չափանիշների ապահովման, վերոնշյալ մարմնի բարեփոխումը կարող է իրականացվել միայն որոշ համակարգային միջոցներով: Հաշվի առնվող գործոններում պետք է ներառվեն Հատուկ քննչական ծառայության սահմանափակ ռեսուրսները, այլ համապատասխան քննչական համակարգերի բացակայությունը և ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի քննության համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացման անհրաժեշտությունը»:[1]

Ընդ որում, բարեփոխումները պետք է երաշխավորեն վատ վերաբերմունքի վերաբերյալ հայտարարությունների և այլ հաղորդումների արդյունավետ և պատշաճ քննության սկզբունքների անհապաղ կիրառություն: Ինչ վերաբերում է ոստիկանական բողոքարկման մարմնի մոդելին և առանձնահատկություններին, ապա Հայաստանի իշխանությունները կարող են հետևել ոստիկանության դեմ ներկայացված բողոքների անկախ և արդյունավետ քննության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարի դիրքորոշման մեջ առկա մոտեցումներին:[2]

Ընդհանուր առմամբ ձեռնարկվող միջոցառումները նպատակահարմար է, որպեսզի նպատակաուղղվեն ՀՀ հատուկ քննչական ծառայության նյութատեխնիկական և շենքային պայմանների ապահովմանը, քննիչների հաստիքների քանակի ավելացմանը և նրանց շարունակական վերապատրաստման ծրագրերի մշակմանը, ինչպես նաև մարզային նստվայրերի և համապատասխան օպերատիվ ծառայության հիմնադրմանը և այլն:

---

1 ***Սվանիձե Է.*** Զեկույց Հայաստանի վերաբերյալ: Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարն ու վատ վերաբերմունքի քննության արդյունավետությունը: Խմբագրությամբ՝ ***Վ. Ենգիբարյանի,*** Երևան, 2011, «Անտարես», էջ 86:

2 Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համարբերգի դիրքորոշումը՝ կապված ոստիկանության դեմ ներկայացված բողոքների անկախ և արդյունավետ քննության հետ, ommDH(2009)4:

RESUME

SPECIAL INVESTIGATION SERVICE OF THE RA

General provisions on Service

According to Article 189 of the Criminal Procedure Code of Republic of Armenia (hereinafter the Code) the preliminary investigation of criminal cases are dealt with by the Special investigation service, the police, respective authorized body in the field of defense, investigators of national security, and investigators of tax and customs bodies.

According to Article 190 of the same Code in certain events the General Prosecutor of the Republic may take of such cases from the investigators and delegate those to the investigators of special investigation service, which deal with cases related to state officials or crimes committed by them or cases, where officials have been the victims.

The special investigation service may not take of cases from other investigators with the exception of the cases, especially prescribed by Law.

According to the Law of the Republic of Armenia on “Special investigation service” Special Investigation Service conducts preliminary investigation of the cases related to the crimes committed by the officials of legislative, executive and judicial bodies, employees implementing special state services or their compliance in connection with their positions, election procedures, as well as election procedures envisaged by the Criminal Procedure Code of the Republic of Armenia.

In the circumstances prescribes by the legislation the Prosecutor General of the Republic of Armenia may take criminal cases, related to

the compliance of the activities of the aforementioned officials mentioned or the crimes committed by them, or those people who are acknowledged as aggrieved by those cases, that are under the procedure of the investigators of other bodies conducting investigation and transfer them to the investigators of Special Investigation Service.

Service in Special Investigation Service is a special type of public service and its characteristics are defined by this law. The employee of Special Investigation Service is a public servant.

Special Investigation Service is implemented according to the rules prescribed by Constitution of the Republic of Armenia, Criminal Procedure Code of the Republic of Armenia and other laws with the maintenance of legality, principles of respect for human rights and freedoms, honor and dignity, humanity and publicity.

The competence to control the legality of the preliminary investigation conducted by the Special Investigation Service is held with the Prosecutor General of the Republic of Armenia or prosecutors authorized by him.

Special Investigation Service is governed by the Head of Service, who is appointed by the President of the Republic of Armenia based on the nomination of Prosecutor General of the RA.

Special Investigation Service publishes information about its activity. Each year Head of Special Investigation Service submits written report to President of the Republic and National Assembly of the Republic of Armenia on the the activity of the Service during the previous year.

Residence of Special Investigation Service is Yerevan city.

Legislation on Special Investigation Service

Legislation on Special Investigation Service consists of law RA "On Special Investigative Service", Criminal Procedure Code of the

Republic of Armenia, other laws and legal acts, International Agreements of the Republic of Armenia.

Law of the Republic of Armenia on Civil Service also applies to Special Investigation Service so far as its norms are applicable for that type of Service according to their nature and do not contradict with the nature of this law and special public service.

Head of Special Investigation Service is empowered to adopt internal or individual legal acts related to the organization of the Service and its activity in cases envisaged by law.

If other norms are established by International Agreements of the Republic of Armenia than are envisaged by this law then the norms of International Agreements prevail.

Special Investigation Service operates according to the Law "On Special Investigative Service" within functions vested by law.

Special Investigation Service is an independent state body and is independent while managing the service. The legal guarantees of activities of the Special Investigation Service are determined by Article 17 of the Law on Special Investigation Service, which prescribes that creating barriers to implementation of the Service employee duties, failure to comply with the legal requirements, infringement to his/her health or property or family member's life, or threats towards him/her gives rise to a responsibility under the Law. Criminal prosecution against the Special Investigation Service employees may be initiated only based on the decision of the Prosecutor General of the Republic of Armenia.

Main Concepts of the Law on Special investigation service

The following main concepts are used in the Law:

1) employee of special Investigation service: Head of Special Investigation Service, Deputy Head, senior investigators cases of special importance and investigators of cases of special importance;

2) officials of legislative, executive and judicial bodies: President of the Republic of Armenia, Prime Minister of the Republic of Armenia, Deputy Prime Minister, deputies, Chairman and members of Constitutional Court of the Republic of Armenia, Chairmen and judges of Courts of the Republic of Armenia, Head of the Staff of President of the Republic of Armenia, Head of the Staff of National Assembly of the Republic of Armenia, Head of the Staff of Government of the Republic of Armenia, Ministers, deputy ministers of the Republic of Armenia, Heads and Deputy Heads of state governing bodies under Government of the Republic of Armenia, Regional Governors of the Republic of Armenia and their deputies, Mayor of Yerevan, his/her deputies, Chairman of Chamber of Control of the Republic of Armenia and the members of Council, President of Central Bank of the Republic of Armenia and the members of Council, Heads and members of regulatory commissions of the Republic of Armenia, Chairman and members of Central Electoral Commission of the Republic of Armenia, President and Vice-President of National Statistical Service of the Republic of Armenia,

3) person conducting special public service: prosecutors, investigators of authorized state body in defense sector, officials in police (except for troops of police), national security (except for frontier troops and armed subdivisions), officials of tax, customs, providing compulsory enforcement of judicial acts, criminal executive and rescue bodies,

4) crimes related to electoral procedure: crimes envisaged by Articles 149, 150, 154.1 and 154.2 of Criminal Code of the Republic of Armenia.

The Statutes, Structure and Staff of the Service

By order N1 of 7.12. 2007 of the Head of Service the Statutes, Structure and Stuff of the Service of the Service were established.

According to the Statutes, the Special investigation service consists of the Head of the service, the Deputy Head, the investigators and the staff:



Recommendations and future development of Special Investigation Service of the RA in the field of combating ill-treatment and impunity.

To summarise this research, we can state that Special Investigation Service of the RA is entire and time-proved body in its institutional sense, which from the view of its organization and operation may implement European standards of ill-treatment within the framework of its functions.

At the same time, it should be also noted that in order to increase the efficiency of investigation of ill-treatment by the Special Investigation Service of the RA a number of institutional and legislative reforms should be implemented, that will not only improve the quality of investigations of this type of crimes, but also will promote the localization of European standards in investigative practice of Armenia, also will contribute to the strengthening of fight against impunity.

In general, it would be appropriate to direct such measures to the improvement of logistics of building conditions of Special Investigation Service of the RA, increasing the number of investigators and their staff with continuous training programs, as well as the establishment of regional administrations and efficient service and etc.

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2008–2010թթ. և 2011թ. ընթացքում խոշտանգումների և բռնությունների առթիվ հարուցված և ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննված քրեական գործերի ու դրանց ընթացքի վերաբերյալ

2008–2010թթ. և 2011թ. անցած ժամանակահատվածի ընթացքում ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվել է նման բնույթի 22 քրեական գործ, որոնցից՝

- 22 քրեական գործերից 11-ը՝ 22 անձի նկատմամբ, **մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան**:

Դատի տրված 22 անձից նախաքննության ընթացքում կալանավորվել է 4-ը, իսկ 18 անձի նկատմամբ կիրառվել է կալանքի հետ չկապված խափանման միջոց:

Դատի տրված 22 անձանցից 19-ը հանդիսացել են ոստիկանության աշխատակից,

այդ թվում՝

- ՃՈ տեսուչներ ---------- 8-ը,
- Քրեական հետախուզության օպերլիազորներ ---------- 4-ը,
- Քրեական հետախուզության բաժնի պետեր ---------- 2-ը,
- ՊՊԾ գնդի հրամանատարի օգնական,

ջոկատի հրամանատար և վաշտի ավագ՝ ----------1-ական,

- ՊՊԾ գնդի ոստիկաններ ---------- 2-ը,

իսկ 3-ը ՔԿՀ աշխատակիցներ (ՔԿՀ պետի տեղակալ,

անվտանգության բաժնի պետ

և նույն բաժնի մասնագետ՝ ----------1-ական):

Կարճվել է ---------- 6-ը,

- 3-ը (ՀՀ քր. դատ. օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցադեպի բացակայության)

- 3-ը (ՀՀ քր. դատ. օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 2-ին կետով՝ հանցակազմի բացակայության պատճառով):

Կասեցվել է ---------- 2-ը՝

- ՀՀ քր. դատ. օր-ի 31 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործությունը կատարած անձի չպարզվելու պատճառով:

Միացվել է վարույթում եղած քրեական գործերին ------ 2-ը:

Մնացել է անավարտ ---------- 1-ը:

Ըստ տարիների վարույթում եղած քրեական գործերի շարժը ունեցել է հետևյալ պատկերը

տարեթիվ	*դատարան*				*կարճ.*	*կաս.*	*միաց.*	*մնացորդ*	*ընդ.*
	գործ	*անձ*	*լուծ.*	*մ/մ*					
2008թ.	*4*	*6*	*2*	*4*	*1*	*-*	*-*	*-*	*5*
2009թ.	*4*	*7*	*-*	*7*	*5*	*-*	*2*	*-*	*11*
2010թ.	*3*	*9*	*2*	*7*	*-*	*2*	*-*	*-*	*5*
2011թ. անցած ժամ.	*-*	*-*	*-*	*-*	*-*	*-*	*-*	*1*	*1*
Ընդ.	*11*	*22*	*4*	*18*	*6*	*2*	*2*	*1*	*22*

Դատարան ուղարկված քրեական գործերն են

1. **Թիվ 62208108** - ՀՀ ոստիկանության Տաշիրի բաժնի քրեական հետախուզության բաժնի պետ Հայկ Սահակյանը, անցնելով լիազորությունները, բռնություն է գործադրել ԱԱԾ Տաշիրի բաժանմունքի հերթապահ-պարետ Տարոն Հազոյանի նկատմամբ:

Դատարան է ուղարկվել 18.06.08թ.:

Հ. Սահակյանը ՀՀ քր. օր-ի 309 հոդվածի 2-րդ մասով 28.08.08թ. դատապարտվել է ազատազրկման՝ 2 տարի ժամանակով:

2. **Թիվ 62206808** – ՀՀ ոստիկանության Հրազդանի բաժնի Ծաղկաձորի բաժանմունքի քրեական հետախուզության ավագ օպերլիազոր Արմեն Պողոսյանը, անցնելով լիազորությունները, իր հաշվեցուցակային ատրճանակով կրակել է գողության մեջ կասկածվող Ռաֆիկ Առուշանյանի վրա՝ պատճառելով նրան ծանր մարմնական վնասվածք:

Դատարան է ուղարկվել 12.06.08թ.:

Ա. Պողոսյանը ՀՀ քր. օր-ի 309 հոդվածի 3-րդ մասով և 112 հոդվածի 1-ին մասով 29.07.08թ. դատապարտվել է ազատազրկման՝ 6 տարի ժամանակով:

3. **Թիվ 16205007 -** ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի ՊՊԾ վաշտի ավագ Արմեն Եղիազարյանը, անցնելով լիազորությունները, խուլիգանություն կատարող Սիմոն Կոկիկյանին դիտավորությամբ պատճառել է ծանր վնասվածք:

Դատարան է ուղարկվել 06.06.08թ.:

Ա. Եղիազարյանը ՀՀ քր. օր-ի 309 հոդվածի 2-րդ մասով և 112 հոդվածի 1-ին մասով 05.08.08թ. դատապարտվել է ազատազրկման՝ 3 տարի 6 ամիս ժամանակով:

4. **Թիվ 63201307** - ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկի պետի տեղակալ Գագիկ Հովսեփյանը, անվտանգության սպասարկման բաժնի պետ Արսեն Գրիգորյանը և նույն բաժնի մասնագետ Լևոն Հովակիմյանը ծեծի են ենթարկել դատապարտյալ Ռուբեն Կարապետյանին:

Դատարան է ուղարկվել 05.06.08թ:

Գ. Հովսեփյանը, Ա.Գրիգորյանը և Լ. Հովակիմյանը ՀՀ քր. օր-ի 309 հոդվածի 2-րդ մասով 12.01.09թ. դատապարտվել են ազատազրկման՝ 2 տարի ժամանակով:

5. **Թիվ 62217508 -** ՀՀ ճանապարհային ոստիկանության ծառայության Շիրակի մարզը սպասարկող 2-րդ վաշտի տեսուչ Հակոբ Հովհաննիսյանը, անցնելով իր պաշտոնեական լիազորությունները, ծեծի է ենթարկել և անհիմն բերման ենթարկել Արայիկ Հարությունյանին:

Դատարան է ուղարկվել 12.01.09թ.:

Հ. Հովհաննիսյանը ՀՀ քր. օր-ի 309 հոդվածի 2-րդ մասով 18.02.09թ. դատապարտվել է ազատազրկման՝ 2 տարի ժամանակով:

6. **Թիվ 62205309** - ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի հրամանատարի օգնական Անդրանիկ Մանուկյանը և նույն գնդի ոստիկան Գեղամ Գրիգորյանը, 01.03.08թ. Մաշտոցի պողոտայում՝ շուկայի դիմաց, անցնելով իրենց լիազորությունների սահմանը, բռնություն են կիրառել քաղաքացիների նկատմամբ:

Դատարան է ուղարկվել 28.08.09թ.:

Ա. Մանուկյանը և Գ. Գրիգորյանը ՀՀ քր. օր-ի 309-րդ հոդվածի 2-րդ մասով 16.12.09թ. դատապարտվել են ազատազրկման 3 տարի ժամանակով: (կիրառվել է համաներում)

7. **Թիվ 62205809** – ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի ջոկատի հրամանատար Գեղամ Հարությունյանը և ՊՊԾ ոստիկան Հովհաննես Ղուկասյանը 01.03.08թ. Հանրապետության հրապարակում, անցնելով իրենց լիազորությունների սահմանը, բռնություն են կիրառել քաղաքացիների նկատմամբ:

Դատարան է ուղարկվել 28.08.09թ.:.

Գ. Հարությունյանը և Հ. Ղուկասյանը ՀՀ քր. օր-ի 309-րդ հոդվածի 2-րդ մասով 25.12.09թ. դատապարտվել են ազատազրկման 2 տարի ժամանակով: *(Դատարանը, հաշվի առնելով նրանց անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, կիրառվել է ՀՀ քր. օր-ի 70-րդ հոդվածը, և ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չի կիրառվել) :*

8. **Թիվ 50104709** – ՀՀ ճանապարհային ոստիկանության տեսուչներ Արայիկ Ավագյանը և Արթուր Մելքոնյանը 2009թ. հունիսի 23-ին անցնելով լիազորությունների սահմանը բռնություն են գործադրել Սևան Մկրտչյանի նկատմամբ : Փաստի առթիվ 26.06.09թ. ՀՀ ոստիակնության Գեղարքունիկի քննչական բաժնում ՀՀ քր. օր-ի 309 հոդվածի 2-րդ մասով հարուցվել է Թիվ 50104709 քրեական գործը, որը 09.07.09թ. ընդունվել է ՀՔԾ վարույթ: Ա. Ավագյանին և Ա. Մելքոնյանին մեղադրանք է առաջադրվել նույն հոդվածով և 29.09.09թ

քրեական գործը նրանց դատի տալու միջնորդությամբ ուղարկվել է դատարան: 12.02.09թ. նրանք դատապարտվել են ազատազրկման 2տարի ժամանակով: *(Դատարանը, հաշվի առնելով նրանց անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, կիրառվել է ՀՀ քր. օր-ի 70-րդ հոդվածը, և ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չի կիրառվել) :*

9. **Թիվ 62200810** – ՀՀ ճանապարհային ոստիկանության տեսուչներ՝ Արման Չուխաջյանը, Հակոբ Ջանյանը, Մուշեղ Սարգսյանը և Կորյուն Վարդանյանն անցնելով իրենց լիազորությունների սահմանը բռնություն են կիրառել քաղաքացիներ Արտակ Մուսայելյանի և Արթուր Հակոբյանի նկատմամբ ու պատճառել առողջությանը կարճատև քայքայումով թեթև վնասվածքներ:

16.04.10թ. քրեական գործը Ա. Չուխաջյանին, Հ. Ջանյանին, Մ. Սարգսյանին և Կ. Վարդանյանին ՀՀ քր. օր-ի 309-րդ հոդվածի 2-րդ մասով դատի տալու միջնորդությամբ **ուղարկվել է դատարան (***դատաքննությունը դեռևս չի ավարտվել) :*

10. **Թիվ 62201210 -** Հարուցվել է 13.04.10թ. ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզի քննչական բաժնի Չարենցավանի բաժանմունքի վարույթում քննվող քրեական գործով գողության կասկածանքով բերման ենթարկված Վահան Խալաֆյանի ինքնասպանության փաստի առթիվ:

15.04.10թ. ընդունվել է ՀՔՕ վարույթ:

Նախաքննությամբ հիմնավորված է համարվել, որ նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր Աշոտ Հարությունյանը, դուրս գալով իր պաշտոնական լիազորությունների շրջանակից, բռնություն է կիրառել նրա նկատմամբ՝ ձեռքերով և ոտքերով հարվածներ հասցրել մարմնի տարբեր մասերին, որի հետևանքով նա դիմել է ինքնասպանության, իսկ քրեական հետախուզության օ/լ Մորես Հայրապետյանը, Գագիկ Ղազարյանը և Գարիկ Դավթյանը չարաշահել են իրենց պաշտոնեական դիրքը, չեն կանխել Աշոտ Հարությունյանի գործողությունները:

Կատարած հանցանքի համար Ա. Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր-ի 309-րդ հոդված 3-րդ մասով, իսկ Մ. Հայրապետյանին, Գ. Դավթյանին ու Գ. Ղազարյանին՝ ՀՀ քր. օր-ի 308-րդ հոդվածի 1-ին մասով, քրեական գործը նրանց դատի տալու միջնորդությամբ 21.06.10թ. **ուղարկվել է դատարան:**

29.11.10թ. Ա. Հարությունյանը դատապարտվել է ազատազրկման 8 տարի ժամանակով, Մ. Հայրապետյանը՝ 2 տարի ժամանակով, իսկ Գ. Դավթյանը և Գ. Ղազարյանը ճանաչվել են անպարտ՝ արդարացվել են:

11. **Թիվ 43105310** – Հարուցվել է 24.05.10թ. Այդ առթիվ նախապատրաստված նյութերով 2010 թվականի մայիսի 24-ին Ոստիկանության Մարտունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

ՀՀ ճանապարհային ոստիկանության տեսուչ Կարեն Հակոբյանի և եղբոր Զավեն Հակոբյանի կողմից որպես զենք օգտագործվող՝ ավտոմեքենայի ամբարձիչի գործածմամբ չարամիտ խուլիգանություն կատարելու, Արթուր Զիրոյանի և նրա կնոջ՝ Աննա Սահակյանի նկատմամբ բռնություն կիրառելու և վերջինիս կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք պատճառելու վերաբերյալ:

03.06.10թ. ընդունվել է Հատուկ քննչական ծառայության վարույթ:

Կարեն և Զավեն Հակոբյաններին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, իսկ վերջինիս նաև՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով, նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, և քրեական գործն 08.11.10թ. ուղարկվել է դատարան:

25.02.11թ. Կ. Հակոբյանը դատապարտվել է ազատազրկման 4 տարի, իսկ Զավեն Հակոբյանը 6 տարի ժամանակով:

Կարճված քրեական գործերն են՝

1. **Թիվ 13204807 -** քրեական գործը՝ Ոստիկանության Կենտրոնական բաժնի ոստիկանների կողմից մեկ այլ քրեական գործով

մեղադրյալներ Զորիկ Կարապետյանից և մյուսներից բռնությամբ խոստովանական ցուցմունքներ կորզելու վերաբերյալ:

Գողության համար դատի տրված ամբաստանյալներ Յուրի Կարապետյանը, Արման Համբարձումյանը և Վասիլ Նազլուխանյանը դատաքննության ընթացքում հայտարարել են, որ Ոստիկանության Կենտրոնական բաժնի աշխատակիցներ «Կարենը» և «Արթուրը» իրենց նկատմամբ գործադրել են բռնություն: Այդ կապակցությամբ դատարանի միջնորդությամբ 07.09.07թ. Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատախազությունում ՀՀ քր. օր-ի 309 հոդվածի 2-րդ մասով հարուցվել է քրեական գործ, որի հետագա նախաքննությունը 19.12.07թ-ից շարունակվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում:

Ոստիկանության աշխատակիցները սկզբից ևեթ ժխտել են Կարապետյանի, Համբարձումյանի և Նազլուխանյանի, ինչպես նաև նույն՝ գողության գործով դատապարտյալներ Վահան Երեմյանի և Հակոբ Թարվերդյանի նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքը, որը հաստատող ցուցմունքներ են տվել նաև վերջիններս՝ հայտարարելով, որ իրենց նկատմամբ որևէ բռնություն չի գործադրվել, իսկ Կարապետյանի, Համբարձումյանի և Նազլուխանյանի նկատմամբ գործադրված բռնության մասին որևէ տեղեկություն երբևէ չեն ունեցել ու չունեն:

Ժամանակին կատարված բուժզննությունների արդյունքում կազմված արձանագրությունների և դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունների համաձայն՝ Յուրի Կարապետյանի և Արման Համբարձումյանի մոտ մարմնական վնասվածքներ կամ վնասվածքների հետքեր չեն հայտնաբերվել, իսկ Վասիլ Նազլուխանյանի մարմնական վնասվածքները պարունակում են առողջության կարճատև քայքայումով՝ առողջությանը թեթև վնաս պատճառող վնասվածքների հատկանիշներ, որի կապակցությամբ նա բուժզննությունների ընթացքում հայտարարել է, որ մարմնական վնասվածքն ստացել է մինչև ոստիկանների կողմից բերման ենթարկվելը այլ տեղում և այլ հանգամանքներում:

Վերջիններիս ճանաչման են ներկայացվել նախապես՝ հարցաքննությունների ընթացքում, իրենց կողմից մանրամասն նկարագրված Կենտրոնական բաժնի բոլոր աշխատակիցները, սակայն նրանցից և

ոչ մեկը ճանաչողների կողմից մատնացույց չի արվել որպես բռնություն գործադրող, հանցագործություն կատարող անձ, ինչպես նաև կատարվել են բազմաթիվ այլ՝ անհրաժեշտ քննչական գործողություններ, որոնց արդյունքում Կարապետյանի, Համբարձումյանի և Նազլուխանյանի նկատմամբ բռնություն գործադրելու միջոցով իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ ստանալու դեպքերի առկայությունը չի հիմնավորվել: Ուստի 22.04.08թ. քրեական գործի վարույթը կարճվել է ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հետևանքով:

2. **Թիվ 62218208 -** Քաղ. Լիդա Հայրապետյանը, դիմելով ՀՀ ոստիկանության պետին, հայտնել է, որ Արագածոտնի մարզային վարչությունում և Աշտարակի բաժնում ոստիկանության աշխատակիցները բռնություն են գործադրել իր որդու՝ Գեղամ Մասումյանի նկատմամբ՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Այդ կապակցությամբ ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում նախապատրաստված նյութերով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին և 309-րդ հոդվածի 2-րդ մասերով հարուցվել է քրեական գործ:

Ոստիկանության աշխատակիցները ժխտել են Գ. Մասումյանի նկատմամբ բռնություն կիրառելու հանգամանքը, իսկ վերջինս ցուցմունք է տվել, որ ոչ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչությունում և ոչ էլ Աշտարակի բաժնում իր նկատմամբ բռնություն չի գործադրվել և, որ գլխի շրջանում վնասվածքն ստացել է զուգարանում ունեցած գլխապտույտի հետևանքով վայր ընկնելու և գլխով սալիկապատ հատակին հարվածելու պատճառով, որպիսի հանգամանքը հաստատել է նաև եղբայրը՝ Սարգիս Մասումյանը: Ուստի, 03.02.2009թ. քրեական գործի վարույթը կարճվել է:

3. **Թիվ 61201709** - Սասուն Մեխակի Միքայելյանի գործով դատաքննության ընթացքում վկա Յաշա Մելքոնյանը հրաժարվել է իր նախաքննական ցուցմունքներից և հայտնել, որ այդպիսիք տվել է

հարկադրաբար՝ ՀՀ ոստիկանության Հրազդանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Սերգո Մարկոսյանի կողմից իր նկատմամբ կիրառված ֆիզիկական բռնության ազդեցությամբ:

Այդ կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունում 2009թ. մայիսի 8-ին ՀՀ քր. օր-ի 341 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, որով նախաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությանը:

Ս. Մարկոսյանը և մյուսները ժխտել են Յա. Մելքոնյանի նկատմամբ բռնություն կիրառելու հանգամանքը:

Դատաբժշկական փորձաքննության 2009թ. հունիսի 2-ի թիվ 1105 եզրակացության համաձայն՝ Յաշա Մելքոնյանի վրա ինչպես ներկայացված բժշկական փաստաթղթերում ու ՀՊՎ մատյանում կատարված գրանցումներում մարմնական վնասվածքներ, այնպես էլ փորձաքննության պահին մարմնական վնասացածքներից մնացած հետքեր կրծքավանդակի շրջանում չեն հայտնաբերվել: Մելքոնյանի կրծքավանդակի ռենտգեն ժապավենի վրա ոսկրատրավմատիկ և պաթոլոգիկ փոփոխություններ չեն հայտնաբերվել:

Յա. Մելքոնյանն իր հերթին դատաքննական ցուցմունքների շուրջ հայտնել է, որ մարտական ընկերոջը՝ Սասուն Միքայելյանին, դատարանում տեսնելով, ***հուզվել է և, հասկանալով, որ վերջինս դատարանում է հայտնվել նաև իր նախաքննական ցուցմունքների հիման վրա,*** հայտարարել է, թե իբր ՀՀ ոստիկանության Հրազդանի բաժնում իրեն ծեծել են, և դրա պատճառով է Սասուն Միքայելյանի դեմ ցուցմունքներ տվել, ուստի, 02.06.09թ. կայացված որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է:

4. **Թիվ 63200707**- 12.05.07թ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության մասնաշենքի պատի տակ ***Լևոն Աշոտի Գուլյանի*** դիակը մարմնական վնասվածքներով հայտնաբերելու փաստի առթիվ նույն օրը ՀՀ քր. օր-ի 110-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված թիվ 63200707 քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ 2007թ. մայիսի 9-ին՝ ժամը 22^{30}-ի սահմաններում, Երևան քաղաքի Մանանդյան փողոցի 17 շենքի 1-ին

հարկում գտնվող «Պանդոկ» հացատան դիմաց տեղի ունեցած վիճաբանության և ծեծկռտուքի ընթացքում, որին ներկա է գտնվել նաև նույն հացատան տնօրեն Լևոն Գուլյանը, հրազենից արձակված կրակոցներից սպանվել է քաղ. Ստեփան Վարդանյանը:

Այդ առթիվ հարուցված և քննվող քրեական գործով Լ. Գուլյանը ցուցմունքում է տվել, որ իբր վիճաբանողներին դիտողություն անելուց հետո վերադարձել է հացատուն, իսկ երբ կրկին դուրս է եկել, Ստեփան Վարդանյանն արդեն իսկ սպանված է եղել: Մինչդեռ, նույն հացատան մատուցողուհի Մարինե Հրանտի Գրիգորյանն իր ցուցմունքում նշել է, որ վիճաբանության, ծեծկռտուքի և կրակոցների ընթացքում Լևոն Գուլյանը եղել է նրանց կողքին՝ 2-3 մետր հեռավորության վրա, և հացատուն է վերադարձել միայն միջադեպի ավարտից հետո:

Հիշյալ հակասության պարզաբանման նպատակով 2007թ. մայիսի 12-ին նա հրավիրվել է ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն:

Գտնվելով ՔՀԳՎ 2-րդ վարչության 1-ին բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գ.Թադևոսյանի՝ 2-րդ հարկում գտնվող աշխատասենյակում, և իմանալով, որ վարչություն է հրավիրվել նաև մատուցողուհի Մ.Գրիգորյանը, հասկանալով առերեսման անխուսափելիությունը, որի արդյունքում չի կարող թաքցնել վիճաբանության և կռվի մասնակիցներին, ապա՝ սպանությունը կատարող անձի ինքնությունը, օգտվելով աշխատասենյակում մենակ գտնվելու հանգամանքից՝ պատուհանից փորձել է դիմել փախուստի, սակայն շուրջ 7 մետր բարձրությունից վայր է ընկել գետնին և ստացած մարմնական վնասվածքներից տեղում մահացել:

Պարզվել է, որ ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչությունում գտնվելու ժամանակահատվածում Լևոն Գուլյանի նկատմամբ որևիցե մեկը բռնություն չի գործադրել, սպառնալիք և դաժան վերաբերմունք չի դրսևորել, անձնական արժանապատվությունը չի նսեմացրել, հանցագործության բացահայտման նպատակով ոստիկանության աշխատակիցների գործողությունները՝ օպերատիվ հարցման հրավիրելը, եղել են իրավաչափ, ուստի 12.03.08թ. կայացված որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, որը տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներ Ա Կարախանյանի և Հ. Ղուկասյանի բողոքի հիման վրա 06.06.08թ. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը վերացրել է, և գործի վարույթը վերսկսել:

16.04.09թ-ին կայացված որոշմամբ քրեական գործի վարույթը կրկին կարճվել է նույն հիմքով, որը ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ քրեական դատարանի կողմից թողնվել է անփոփող, իսկ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների բողոքները մերժվել է:

5. **Թիվ 62204909** - ՀՀ ոստիկանության Գյումրու բաժնի պետ Շիրակ Շահնազարյանի կողմից իր նկատմամբ բռնություններ կիրառելու վերաբերյալ Գյումրի քաղաքի բնակիչ Գրիգոր Վարպետյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով 10.08.09թ. ՀՀ քր. օր-ի 309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված թիվ 62204909 քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ դիմումատուի որդին՝ Գարիկ Վարպետյանը, 2009թ. հուլիսի 23-ին «Նիվա» մակնիշի ավտոմեքենայով Գյումրի քաղաքի Անկախության հրապարակ է մտել երթևեկությանը հակառակ, ապա, չենթարկվելով ոստիկանության ՊՊՕ աշխատողների պահանջներին և ստեղծելով վթարային իրավիճակ, հեռացել է: Շ. Շահնազարյանը հանձնարարել է հայտնաբերել նշված ավտոմեքենան, վարորդին բերել իր մոտ՝ բացատրական կանխարգելիչ զրույց վարելու համար և օրենքով սահմանված կարգով պատժել:

Հաջորդ օրը Գրիգոր Վարպետյանը սեփական նախաձեռնությամբ գնացել է բաժին՝ նպատակ ունենալով պարզել, թե ոստիկաններն ինչու են փնտրում իր որդուն և խնդրել նրան վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծել՝ առանց բաժին բերման ենթարկելու:

Շ.Շահնազարյանը, իր աշխատասենյակում ընդունելով քաղ. Գրիգոր Վարպետյանին ու լսելով նրա բողոքը, դուրս է եկել լիազորությունների շրջանակից և բռնություն կիրառել նրա նկատմամբ՝ պատճառելով մարմնական վնասվածքներ, ապա ենթակա ոստիկան-

ների միջոցով իջեցրել է հերթապահ մաս, ենթարկել անձնական խուզարկության, փակել արգելախցերից մեկում և միայն ժամը 18-ի սահմաններում նրան ազատ է արձակել: Այսինքն կատարել է հանցանք, որը նախատեսված է ՀՀ քր. օր-ի 309-րդ հոդվածի 2-րդ մասով: Սակայն նկատի ունենալով, որ կատարվածին նպաստել է նաև Գրիգոր Վարպետյանը, ով որդու կատարած վարչական իրավախախտման կապակցությամբ, ըստ էության, գտնվելով խնդրողի դերում, դրսևորել է իրավիճակին ոչ համարժեք՝ սադրիչ վարքագիծ, և որ Շիրակ Շահնազարյանը հանրավտանգ արարք է կատարել առաջին անգամ, մասնակիորեն ընդունել է մեղքը, զղջացել կատարվածի համար, նա ոստիկանության համակարգի երկարամյա աշխատող է և դրական աշխատանքի համար բազմիցս խրախուսվել է, պարգևատրվել մեդալով, խնամքին ունի ծեր ծնողներ, երեք երեխա (որոնք զրկված են մորից): Բացի այդ, ՀՀ ոստիկանապետի 26.10.2009թ. հրամանով ազատվել է զբաղեցրած պաշտոնից, նրա արարքը ծանր հետևանքներ չի առաջացրել, տուժող Գրիգոր Վարպետյանի հետ հաշտվել է և գտնվում է նորմալ փոխհարաբերությունների մեջ *(վերջինս ՀՀ գլխավոր դատախազին հղած դիմումներով և նախաքննական ցուցմունքներով հայտնել է այդ մասին և խնդրել Շահնազարյանին քրեական պատասխանատվության չենթարկել):* Այսինքն, իրադրության փոփոխման արդյունքում Շ. Շահնազարյանը և նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց, 07.12.09թ. կայացված որոշմամբ նրա նկատմամբ քր. գործը **կարճվել** և քրեական հետապնդումը դադարեցվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ իրադրության փոփոխման հետևանքով:

6. Թիվ 62208709 - քրեական գործը հարուցվել և վարույթ է ընդունվել 28.11.08թ. ՀՔՕ-ում ՀՀ քր. օր-ի 309 հոդվածի 2-րդ մասով Ոստիկանության կենտրոնական բաժնի աշխատակիցների կողմից Արշալույս Հակոբյանի նկատմամբ բռնություն կիրառելու մասին ՁԼՄ-ներում հնչեցրած մեղադրանքների և նրա վերաբերյալ ՀՀ քր. օր-ի 316 հոդվածի 1-ին մասով հարուցված և դատարան ուղարկված քր. գործից անջատված նյութերով: Նախաքննությամբ պարզվել է, որ

04.06.09թ. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ստացվել է թիվ 8/27 ընտրատեղամասի դիտորդ, «Հայաստանի Հելսինկյան Ասոցիացիա» հասարակական կազմակերպության անդամ ***Արշալույս Հակոբյանի հաղորդումն*** այն մասին, որ 2009թ. մայիսի 31-ին՝ ժամը 12^{30}-ի սահմաններում, Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ նույն ընտրատեղամասի ընտրական հանձնաժողովի նախագահ Սամվել Խանյանը խոչընդոտել է իր լիազորությունների իրականացմանը, այն է՝ արգելել է տեղամասում կատարել նկարահանումներ, որն ստուգելու և համապատասխան ընթացք տալու համար միացվել է թիվ 8 ընտրատարածքի մի շարք տեղամասերում տեղի ունեցած խախտումների կապակցությամբ զանգվածային լրատվամիջոցներում հրապարակված հաղորդումների հիման վրա 01.06.09թ. ՀՀ քր. օր-ի 150-րդ հոդվածով հարուցված թիվ 61202609 քրեական գործին:

Կատարված ստուգումներով լուսանկարահանում արգելելու վերաբերյալ Ա. Հակոբյանի հայտարարությունը չի հիմնավորվել. Ս.Խանյանը ժխտել է այդ համգամանքը, որը հաստատել են նաև հանձնաժողովի անդամները: Բացի այդ, ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դիտորդներն իրավունք ունեն լուսա և տեսանկարահանել միայն քվեարկությունների ամփոփման գործընթացը, հետևաբար, արգելման պարագայում ևս հանձնաժողովի նախագահի գործողությունները կդիտարկվեին օրինաչափ:

Ուստի, վերոհիշյալ դրվագով 14.07.09թ. կայացված որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառով:

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա. Կարապետյանի՝ 05.06.09թ. թիվ 18-82կգ-09 գրության համաձայն՝ նույն օրը՝ ժամը 12^{30}-ի սահմաններում, ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի աշխատակիցներ Աշոտ Սարգսյանը և Վահե Բաղալյանն այցելել են Արշալույս Հակոբյանի բնակարան՝ հարցաքննության ներկայանալու ծանուցագիրը հանձնելու համար:

Վերջինս, գտնվելով ոչ սթափ վիճակում, բռնություն է գործադրել ոստիկանության աշխատակիցների նկատմամբ. տվել է սեռական բնույթի հայհոյանքներ, ծխախոտի այրվող գլանակը նետել նրանց

վրա, ստեղծել քաշքշուկ, ապտակել Վ.Բադալյանին, դրսևորել անկառավարելի վարքագիծ, որին հետևել է կանչված օժանդակ ուժերի օգնությամբ Ա. Հակոբյանին բաժին բերման ենթարկելը:

Այդ կապակցությամբ ՀՀ ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնում ՀՀ քր. օր-ի 316-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, որն ավարտվել և ուղարկվել է դատարան:

Իր նկատմամբ բռնություն կիռաելու վերաբերյալ քր. գործով Արշալույս Հակոբյանը հրաժարվել է ցուցմունքներ տալ, միաժամանակ առանց որևէ հանգամանք մանրամասնելու՝ նշել է, որ ոստիկաններն իր նկատմամբ գործադրել են բռնություն ոստիկանություն տանելու ճանապարհին՝ ավտոմեքենայի մեջ, և ոստիկանության բաժնում:

Ոստիկանության աշխատակիցները, իրենց հերթին ժխտելով իրենց լիազորությունները չարաշահելու՝ Արշալույս Հակոբյանին ծեծի ենթարկելու և հարվածելու հանգամանքները, պատճառաբանել են, որ Ա. Հակոբյանի ագրեսիվ պահվածքը կանխելու և իրենց նկատմամբ բռնություն գործադրելու համար ստիպված են եղել նրան բաժին բերման ենթարկել, որի ընթացքում նա շարունակել է բռնության գործադրումն ու վիրավորանքները, ուստի հարկադրված կիրառել են ֆիզիկական ուժ. բռնել ու ոլորել են ձեռքերը: Շենքի աստիճանների վրա և բակում, իսկ ապա նաև բաժնի մոտ Ա.Հակոբյանը թափահարել է իրեն, կատարել անկանոն շարժումներ, որի ընթացքում վայր է ընկել, ավտոմեքենան նստեցնելիս գլխով հարվածել մետաղյա հատվածներին:

Ա. Հակոբյանը բաժնում մնացել է կարճ ժամանակ, այնուհետև նախապատրաստված նյութերի հետ նրան ուղարկել են քննչական բաժին:

Դատաբժշկական փորձաքննության եզրակացության և փորձագետ Ա. Մամաջանյանի ցուցմունքի համաձայն Ա. Հակոբյանի մարմնական վնասվածքներն առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում: Ելնելով վնասվածքների բնույթներից և տեղակայումներից՝ չի բացառվում դրանց առաջացումը ոստիկանության աշխատակիցների նկարագրած հանգամանքներում, որը առավել բնորոշ է, քան Ա.Հակոբյանի մատնանշած հանգամանքներում դրանց առաջացումը:

2009թ. հունիսի 5-ին «Շտապօգնություն» ՊՓԲԸ-ում Արշալույս Հակոբյանի սթափության վիճակի զննությամբ հայտնաբերվել է 3-րդ աստիճանի խմածություն, որն ըստ սահմանված սանդղակների՝ համարվում է ամենաբարձրը:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ քննիչը լիազորված է հետաքննության մարմնին հանձնարարել իրագործելու ձերբակալման, բերման ենթարկելու, կալանավորման, այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ որոշումները, ինչպես նաև հետաքննության մարմնից անհապաղ աջակցություն ստանալ քննչական և այլ դատավարական գործողություններ իրականացնելիս: Նույն օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանությունը հանդիսանում է հետաքննության մարմին, իսկ 57-րդ հոդվածով սահմանվում է, որ քննիչի վարույթում գտնվող հանցագործությունների գործերով հետաքննության մարմինը կատարում է նրա հանձնարարությունները:

Ոստիկանության մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ իրավախախտումները կանխելու կամ խափանելու, իրավախախտներին բռնելու և ոստիկանություն ներկայացնելու, ոստիկանության ծառայողի օրինական պահանջներին չենթարկվելու, անհնազանդություն ցուցաբերելու կամ դիմադրություն ցույց տալու դեպքերում, ինչպես նաև ինքնապաշտպանության նպատակով ոստիկանության ծառայող իրավունք ունի իրավախախտների նկատմամբ գործադրել ֆիզիկական հարկադրանք (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ), ինչպես նաև՝ ձեռքի տակ գտնվող անհրաժեշտ առարկաներ, եթե ոչ՝ ուժային միջոցները չեն ապահովում ոստիկանության վրա դրված պարտականությունների կատարումը:

Հետևաբար, ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի տեսուչներ Վ. Բաղալյանը, Ա. Սարգսյանը, Ս. Հարությունյանն ու Ա. Հովսեփյանը գործել են օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում, ուստի 29.12.09թ-ին կայացվել է որոշում նրանց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ նրանց արարքում հանցակազմի բացակայության պատճառով:

Կասեցված քրեական գործերն են՝

1. **Թիվ 62206109** - ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի 3-րդ հատուկ գումարտակի ոստիկանների կողմից խուլիգանական արարք թույլ տված քաղաքացիներ Կարեն Սարգսյանի, Գևորգ Գալստյանի և Սարգիս Հակոբյանի նկատմամբ բռնություն կիրառելու և այդ ընթացքում վերջինիս գրպանից 300.000 ՀՀ դրամ անհետանալու փաստի առթիվ ՀՀ քր. օր-ի 258-րդ հոդվածի 1-ին մասի, 309-րդ հոդվածի 2-րդ մասի և 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հատկանիշներով 08.09.09թ հարուցված թիվ 62206109 քրեական գործի վարույթը 28.02.10թ. **կասեցվել է** ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

2. **Թիվ13127010** - Դավիթ Հայկազի Քիրամաջյանի և Սարգիս Ռուբենի Գևորգյանի նկատմամբ (մասով) քրեական գործն ուղարկվել է դատարան, իսկ Անի Գևորգյանի նկատմամբ (մասով)՝ կարճվել:

Դ.Քիրամիջյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր-ի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ այն բանի համար, որ ներգրավված լինելով «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգի խախտմամբ կազմակերպված հրապարակային զանգվածային միջոցառմանը, 2010թ. մայիսի 31-ին՝ ժամը 18-ի սահմաններում, Երևան քաղաքի Մ.Սարյանի արձանի հարակից տարածքում դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և հասարակության նկատմամբ դրսևորելով բացահայտ անհարգալից վերաբերմունք, հավաքված բազմության ներկայությամբ տևական ժամանակով անհիմն վիճաբանել է պատահական անցորդ, իր ընկալմամբ՝ ոստիկանության աշխատակից հանդիսացող Վարազդատ Թադևոսյանի հետ : Այդ ընթացքում մի խումբ անձանց հետ հայհոյանքներ է տվել և բռնություն գործադրել նրա նկատմամբ՝ ձեռքերով և ոտքերով հարվածներ հասցրել մարմնի տարբեր մասերին:

Դավիթ Քիրամիջյանի և մյուսների խուլիգանական գործողությունները դադարեցվել են միայն նշված վայրում հասարակական կարգի պահպանության պարտականություններ իրականացնող ոստիկանության աշխատակիցների միջամտությամբ:

Իսկ Ս.Գևորգյանին՝ ՀՀ քր. օր-ի 316-րդ հոդվածի 1-ին մասով, այն բանի համար, որ նույն օրը, նույն ժամին և տեղում կատարած իրավախախտման համար ոստիկանների կողմից Դավիթ Քիրամիջյանին բերման ենթարկելիս կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող, իր ծառայողական պարտականությունները կատարող ոստիկան Արկադի Բաղդասարյանի նկատմամբ՝ քաշքշել նրան և պոկել ուսադիրը:

Առաջադրված մեղադրանքի առթիվ թե մեկը, թե մյուսը հրաժարվել են ցուցմունքներ տալ:

Քրեական գործը 23.06.10թ. նրանց դատի տալու միջնորդությամբ ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարան:

Դատարանը, հաշվի առնելով նրանց անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, կիրառվել է ՀՀ քր. օր-ի 70-րդ հոդվածը, և ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

Անի Գևորգյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր-ի 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներ Համբարձում Բոքսյանի և Ստյոպա Բաբայանի առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու համար:

Առաջադրված մեղադրանքի շուրջ նա որևէ դիրքորոշում չի հայտնել ու նախաքննության սկզբնական փուլում հրաժարվել է ցուցմունքներ տալուց: Հետագայում պատճառաբանել է, որ ոստիկաններին հարվածելու մտադրություն չի ունեցել, իսկ ոստիկանի գլխարկը վայր է գցել ձեռքի պատահական շարժումով:

Այնուհանդերձ, 29.11.10թ. կայացված որոշմամբ նրա նկատմամբ քրեական գործի մասը կարճվել, քրեական հետապնդումը դադարեցվել է՝ Համբարձում Բոքսյանի գլխարկը վայր գցելու դրվագով՝ նրա գործողություններում հանցակազմի բացակայության, իսկ Ստյոպա Բաբայանի առողջությանը թեթև վնաս պատճառելու դրվագով՝ տուժողի բողոքի բացակայության հիմքով:

Նշված քրեական գործերով քննության առարկա է դարձել նաև 2010թ. մայիսի 26-ից հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Երևանի Ազատության հրապարակին և Մարտիրոս Սարյանի արձանին հարող տարածքներում ոստիկանության աշխատակիցների գործողությունների օրինաչափությունը:

Պարզվել է, որ 2010թ. մայիսի 26-ից Ազատության հրապարակում սկսել են հավաքվել «Հայ ազգային կոնգրես» քաղաքական միավորման անդամները, ովքեր, առանց քաղաքապետարանի թույլտվության, իրար հաջորդող օրերին նշված վայրում անց են կացրել զանգվածային հրապարակային միջոցառումներ, խանգարել քաղաքացիների հանգիստը և տարբեր կազմակերպությունների բնականոն աշխատանքը, չեն ընդունել ոստիկանության պարզաբանումները, աչքի են ընկել ագրեսիվությամբ, անպարկեշտ արտահայտություններ են արել, տվել են հայհոյանքներ ոստիկանության աշխատակիցների հասցեին, գործադրել բռնություն ոստիկանների նկատմամբ, ինչի արդյունքում ոստիկանության մի շարք ծառայողներ այդ օրերին ստացել են մարմնական վնասվածքներ: Նման պայմաններում ոստիկանության ծառայողները, գործելով «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում, ստիպված են եղել ֆիզիկական ուժ գործադրել օրենքի խախտմամբ կազմակերպված զանգվածային հրապարակային միջոցառման մասնակիցներից մի քանիսի նկատմամբ, ինչը կատարվել է իրավախախտումը կանխելու և խափանելու, ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին չենթարկվելու, անհնազանդություն ցուցաբերելու կամ դիմադրություն ցույց տալու պատճառով, ինչպես նաև՝ ավելի ծանր միջադեպերը կանխելու նպատակով:

Ոստիկանության ծառայողները նշված իրադարձությունների ընթացքում գործել են օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում ու որևէ իրավախախտում չեն կատարել:

Նրանք կատարել են հասարակական կարգի պահպանությունն ապահովելու վերաբերյալ իրենց պարտականությունը:

Միացված քրեական գործերն են՝

1. **Թիվ 62204009** - Հարուցվել է 13.07.09թ. ՀՀ քր. օր-ի 309 հոդվածի հատկանիշներով ՀՀ ոստիկանության առանձին աշխատակիցների կողմից իրենց լիազորությունների սահմանն անցնելու և քաղաքացիների նկատմամբ բռնություններ գործադրելու վերաբերյալ:

Նույն օրը միացվել է ՀՀ պետական իշխանությունը յուրացնելու, 2008թ. մարտի 1-ին իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու և Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ կազմակերպելու ու դրանց անմիջական մասնակցություն ունենալու փաստերի առթիվ 02.03.2008թ. ՀՀ քր. օր-ի 225 հոդվածի 3-րդ մասի և 235 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված թիվ 62202608 քրեական գործին:

2. **Թիվ 62203909** - Հարուցվել է 14. 07.09թ. ՀՀ քր. օր-ի 373 հոդվածի հատկանիշներով

ՀՀ ոստիկանության զորքերի զինծառայողներ Լևոն հակոբյանի, Ավետիք Աթաբեկյանի, Մկրտիչ Ղարիբյանի և Վարդան Սահակյանի կողմից հրազեն հանդիսացող հատուկ միջոցներ (չերյոմուխա) հետ վարվելու կանոնները խախտելու հետևանքով 3 քաղաքացու անզգուշությամբ մահ և 9-ին մարմնական վնասվածքներ պատճառելու վերաբերյալ:

Նույն օրը միացվել է ՀՀ պետական իշխանությունը յուրացնելու 2008թ. մարտի 1-ին իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու և Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ կազմակերպելու ու դրանց անմիջական մասնակցություն ունենալու փաստերի առթիվ 02.03.2008թ. ՀՀ քր. օր-ի 225 հոդվածի 3-րդ մասի և 235 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված թիվ 62202608 քրեական գործին:

Մնացորդ քրեական գործն է՝

Թիվ 62202608 - Հարուցվել է 02.02.08թ. ՀՀ քր. օր-ի 225 հոդվածի 3-րդ մասի և 235 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով 2008թ. մարտի 1-ին իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնու-

թյուն գործադրելու և Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ կազմակերպելու ու դրանց անմիջական մասնակցություն ունենալու փաստերի առթիվ:

Նախաքննությունը շարունակվում է:

Այլ դրվագներ – նյութեր

«4-րդ իշխանության» թերթի լրագրող Գոհար Վեզիրյանն հաղորդում է ներկայացրել այն մասին, որ 2007թ. հոտեմբերի 23-ին Աբովյան–Կորյուն փողոցների խաչմերուկում ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ գործադրվել է բռնություն, մասնավորապես, ՊՊԾ գնդի գումարտակի հրամանատար Արայիկ Պետրոսյանը իրեն հարվածել, իսկ մեկ այլ ոստիկան (վաշտի հրամանատար Գևորգ Ստեփանյանը) դեմքին արցունքաբեր գազ է փչել ու իրեն մարմնական վնասվածքներ պատճառել:

Պարզվել է, որ 2007թ. հոկտեմբերի 23-ին Նիկոլ Փաշինյանը մի խումբ անձանց հետ 2007թ. հոկտեմբերի 26-ին կայանալիք հանրահավաքի մասին հանրությանն իրազեկելու նպատակով մայրաքաղաքի կենտրոնական փողոցներով կազմակերպել և առաջնորդել է երթ, որի մասնակիցները դուրս են եկել փողոցի երթևեկելի մաս, խոչընդոտել երթևեկությանը:

Երբ ոստիկանության աշխատակիցները «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 12-րդ հոդվածներով սահմանված՝ հասարակական կարգի պահպանությունն ապահովելու իրենց պարտականությունը կատարելու նպատակով փորձել են վերականգնել հասարակական կարգը և ճանապարհատրանսպորտային երթևեկության բնականոն ընթացքը, երթի մի խումբ մասնակիցներ վիճաբանության մեջ են մտել ոստիկանության աշխատակիցների հետ, ոտքերով, ձեռքերով և տարբեր առարկաներով հարվածել նրանց:

Փաստի առթիվ նույն օրը՝ 23.10.07թ., ՀՀ ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգքրի 316-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 13126707 քրեական գործը, որը 11.03.08թ. միացվել է 01.03.08թ. ՀՀ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի և նրա համախոհների կողմից Երևանի քաղաքապետա-

ռանի շրջակայքում և կենտրոնական փողոցներում բռնություններով, հրկիզումներով, գույքի ոչնչացմամբ և վնասումներով, հրազենի, պայթուցիկ նյութերի գործադրմամբ, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով ուղեկցված և սպանություններով զուգորդված զանգվածային անկարգություններ հրահրելու և կազմակերպելու փաստի առթիվ 01.03.08թ. ՀՀ քր. օր-ի 225-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցված թիվ 62202608 քրեական գործին:

Հիշյալ քրեական գործի շրջանակներում կատարված նախաքննությամբ պարզվել է, որ ՀՀ ոստիկանության աշխատակիցները գործել են իրավաչափ:

Մասնավորապես, Գևորգ Ստեփանյանի կողմից հատուկ միջոց հանդիսացող արցունքաբեր գազ է կիրառվել նոր իրավախախտման կատարումը նախականխելու նպատակով, ինչի արդյունքում որևէ մեկը, այդ թվում նաև՝ Գոհար Վեզիրյանը, մարմնական վնասվածք չի ստացել: Հասարակական կարգը վերականգնելու նպատակով իրավախախտներին բերման ենթարկելու ընթացքում Գոհար Վեզիրյանը խոչընդոտել է ոստիկանության աշխատակիցներին ծառայողական պարտականությունները կատարելուն, որը կանխելու նպատակով Արայիկ Պետրոսյանը, քաշելով մի կողմ, հրել է նրան, ով աստիճանահարթակից վայր ընկնելու հետևանքով ստացել է թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ: Նկատի ունենալով, որ Գ. Պետրոսյանի արարքը՝ անզգուշությամբ առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող վնասվածք պատճառելը, ՀՀ քրեական օրենսգրքով հանցագործություն չի համարվում:

04.08.09թ. կայացված որոշմամբ քրեական գործի մասով **վարույթը կարճվել է՝** ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառով:

- 29.12.08թ. ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Զարուհի Փոստանջյանը դիմում է ներկայացրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին այն մասին, որ 2008թ. նոյեմբերի 21-ին ՀՀ արտաքին գործերի նախարարության առջև նախաձեռնել է ոչ զանգվածային միջոցառում՝ բողոքի ակցիա: Ակցիայի մասնակիցները փորձել են քայլերթ

անցկացնել Երևանի փողոցներով, սակայն ՀՀ ոստիկանության աշխատակիցները՝ Ռոբերտ Մելքոնյանի և Արայիկ Պետրոսյանի գլխավորությամբ, խոչընդոտել են քայլերթը:

08.01.09թ. դիմումը ընթացք տալու համար ուղարկվել է Հատուկ քննչական ծառայություն:

Նախապատրաստված նյութերով պարզվել է, որ Զ.Փոստանջյանը, 2008թ. նոյեմբերի 21-ին ՀՀ արտաքին գործերի նախարարության առջև առանց լիազոր մարմնին՝ Երևանի քաղաքապետարանին իրազեկելու, կազմակերպել է զանգվածային հրապարակային միջոցառում : Այնուհետև փորձել է երթ կազմակերպել Երևանի փողոցներով: Ոստիկանության աշխատակիցները փակել են զանգվածային հրապարակային միջոցառման մասնակիցների ճանապարհը և բարձրախոսով պարբերաբար հայտարարել, որ միջոցառումն անօրինական է, և համաձայն «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 14-րդ հոդվածների՝ այն կարող է հարկադրաբար դադարեցվել: Քիչ անց զանգվածային հրապարակային միջոցառման մասնակիցները հեռացել են:

Ոստիկանության աշխատակիցների գործողությունները օրինաչափ են, համապատասխանում են «ՀՀ ոստիկանության մասին» և «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքների դրույթներին, նրանք գործել են իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Ուստի **23.02.09թ. նյութերով քրեական գործերի հարուցումը մերժվել է՝** ՀՀ քրեական դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հանցագործության դեպքի բացակայության պատճառով:

- 19.01.09թ. քաղաքացի Վլադիմիր Կարապետյանը ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումում հայտնել է, որ 2009թ. հունվարի 13-ին և 16-ին Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանին հարող տարածքում ՀՀ ոստիկանության սպաներ Վալերի Օսիպյանը, Ռոբերտ Մելքոնյանը և մյուսները, խախտելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրենց և այլ քաղաքացիների իրավունքները, ինչպես նաև «Ժողովներ, հանրահավաք-

ներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքը, հարձակվել են քաղաքացիների վրա, հայհոյել, հրել և հարվածներ հասցրել նրանց, գործադրել են անհամաչափ ուժ, հրելով դուրս են բերել Արշակունյաց պողոտայի երթևեկելի մաս՝ ստեղծելով քաղաքացիների կյանքին սպառնացող իրավիճակ:

Նույն օրն ընթացք տալու համար դիմումը ուղարկվել է Հատուկ քննչական ծառայություն:

ՀՀ ոստիկանության շտաբի կողմից կատարված ծառայողական քննությամբ և ՀՔԾ-ում նախապատրաստված նյութերով պարզվել է, որ 2009 թվականի հունվարի 16-ին Երևանի Շենգավիթ համայքնի ընդհանուր իրավասության դատարանի դիմաց հավաքված շուրջ 450 քաղաքացի, սուլելով, ՀՀ իշխանությունների և ՀՀ նախագահի հասցեին վիրավորական արտահայտություններ վանկարկելով, իշխանության ներկայացուցիչներ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների հասցեին հայհոյանքներ հնչեցնելով, Արշակունյաց պողոտայի երթևեկելի մասը փակելով, խախտել են հասարակական կարգը, չեն ենթարկվել այն վերականգնելու վերաբերյալ ոստիկանների օրինական պահանջներին, որից հետո իրավապահները հասարարակական կարգի խախտմամբ իրականացվող հրապարակային միջոցառման մասնակիցներին, առանց անհամաչափ ուժի կիրառման, պողոտայի երթևեկելի մասից հանել են մայթեր: Ոստիկանության աշխատակիցներիի կողմից քաղաքացիների կյանքին սպառնացող որոևէ գործողություն չի իրականացվել և անհամաչափ ուժ չի գործադրվել:

Ուստի, 19.02.09թ-ին **նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է**՝ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով հանցակազմի բացակայության պատճառով:

- 19.02.09թ. քաղ. Արմեն Խաչատրյանը դիմում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին այն մասին որ, «Հատուկ գունդ» երիտասարդական նախաձեռնության մի խումբ անդամներ մտադրվել են ոչ զանգվածային հրապարակային միջոցառում անցկացնել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի շենքի մոտ: Միջոցառման

մասնակիցները Կորյունի փողոցից փորձել են քայլերթ անցկացնել դեպի ԿԸՀ շենք, սակայն ՀՀ ոստիկանության աշխատակիցները խոչընդոտել են քայլերթը, բռնություն են գործադրել միջոցառման մասնակիցների նկատմամբ:

Նույն օրը դիմումը ընթացք տալու համար ուղարվել է Հատուկ քննչական ծառայություն:

Նախապատրաստված նյութերով պարզվել է, որ ոստիկանության աշխատակիցները՝ որևէ մեկի նկատմամբ բռնություն չեն կիրառել, ուղղակի փակել են զանգվածային հրապարակային միջոցառման մասնակիցների ճանապարհը և զգուշացրել, որ միջոցառումն անօրինական է, և այն կարող է դադարեցվել : Նրանց գործողություններն իրավաչափ են, համապատասխանում են «ՀՀ ոստիկանության մասին» և «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքների դրույթներին, գործել են իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Ուստի 16.04.09թ. նյութերով քրեական գործի հարուցումը **մերժվել է**՝ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառով:

- 13.05.09թ. Արմեն Խաչատրյանը, այս անգամ էլ հաղորդում է ներկայացրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, որում նշել է, որ իբր 2009թ. ապրիլի 8, 9, 10-ին՝ ժամը 18-ի սահմաններում, ոստիկանությունն առանց պատճառաբանության փակել է Երևանի Հյուսիսային պողոտայի մուտքը և քաղաքացիներին զրկել այդ վայրում զբոսնելու հնարավորությունից՝ խախտել նրանց ազատ տեղաշարժման սահմանադրական իրավունքը: Ոստիկանության աշխատակիցները բռնություն են գործադրել, որն ուղեկցվել է վիրավորական արտահայտություններով:

14.05.09թ. հաղորդումը ընթացք տալու համար ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Նախապատրաստված նյութերով պարզվել է, որ 08.04.09թ. Հյուսիսային պողոտայում տեղակայված խանութների, առևտրի կետերի և սրճարանների տնօրենները դիմել են ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժին՝ հայտնելով իրենց դժգոհությունները, որ Հյուսիսային

պողոտայում և հարակից տարածքներում մարդկանց տևական կուտակումների պատճառով խախտվում է օբյեկտների բնականոն աշխատանքը, որի հետևանքով կրում են ֆինանսական վնասներ:

Ոստիկանության աշխատակիցները փակել են Հյուսիսային պողոտայի մուտքը և թույլ չեն տվել մարդկանց կուտակումներ: Վերը նշված միջոցառումները տևել են շուրջ 3 օր, որի ընթացքում ոստիկանության աշխատակիցները որևէ անձի չեն վիրավորել, բռնություն չեն գործադրել, փորձել են բացատրել, որ Հյուսիսային պողոտան փակ է, սակայն հավաքվածներից մի քանիսը շարունակել են վիրավորել ոստիկաններին: Հետևաբար նրանց գործողություններն իրավաչափ են, համապատասխանում են «ՀՀ ոստիկանության մասին» ՀՀ օրենքի դրույթներին, վերջիններս գործել են իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Ուստի 17.07.09թ. նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ ՀՀ քր. դատ. օր-ի 35 հոդ. 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառով:

12.08.09թ. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ստացվել է «Հայ ազգային կոնգրես» կուսակցության երիտասարդական խորհրդի դիմումը՝ այն մասին, որ 2009թ. հունիսի 18-ին՝ ժամը 18^{50}-ի սահմաններում, ոստիկանության աշխատակիցները՝ ՊՊԾ գնդի հրամանատարի տեղակալ Վալերի Օսիպյանի գլխավորությամբ, զրկել են իրենց՝ Երևանի Հյուսիսային պողոտայում հավաքվելու և զբոսնելու հնարավորությունից. խախտել իրենց ազատ տեղաշարժվելու սահմանադրական իրավունքը և բռնություն են կիրառել Տիգրան Առաքելյանի նկատմամբ:

Այդ առթիվ նախապատրաստված նյութերով պարզվել է, որ ոստիկանության աշխատակիցներն իրենց իրավասության սահմաններում ձեռնարկել են անհրաժեշտ միջոցառումներ՝ հիշյալ պողոտայում մարդկանց անհարկի կուտակումներ թույլ չտալու, հասարակական սպասարկման օբյեկտների բնականոն աշխատանքն ապահովելու և պողոտայում զբոսնել ցանկացող այլ անձանց իրավունքները պաշտպանելու ուղղությամբ, որի ընթացքում որևէ մեկին չեն վիրավորել, որևէ մեկի, այդ թվում՝ Տ.Առաքելյանի նկատմամբ բռնություն

չեն կիրառել, (վերջինս հրաժարվել է կատարվածի մասին բացատ-ություն տալ):

Ուստի, 15.09.09թ-ին նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հանցագործության դեպքի բացակայության պատճառով:

ՀՀ հատուկ քննչական ծառայություն

ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Գիտագործնական վերլուծություն

Լեզվաոճական. խմբագիր՝ **Ամիդա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
Տեխն. խմբագիր՝ **Արարատ ԹՈՎՄԱՍՅԱՆ**
Կազմի ձևավորող՝ **Գագիկ ՍԱՐՈՅԱՆ**

«Անտարես» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝(+374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ (+374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am